and has increasingly slowed under the pressure of external shocks and internal constraints. The COVID-19 period and the 2020 war fundamentally altered governance priorities, shifting political energy towards security management and crisis response. Institutional inertia, limited administrative capacity, and deep political polarisation have further constrained implementation. Judicial reform remains contested, and anti-corruption efforts, while institutionally initiated, have lost momentum in the eyes of many stakeholders and citizens. Reform fatigue is increasingly visible both within state institutions and across society, and this fatigue is reinforced by the perception that reforms are either selectively applied or insufficiently insulated from political interests. The judiciary remains a particularly sensitive area: its credibility deficits and vulnerability to perceptions of political influence continue to undermine trust in the overall institutional, democratic system.

These systemic weaknesses are closely mirrored in Armenia's party landscape. Although pluralism exists at the level of party registration and electoral participation, many parties remain weakly institutionalised and leader-centric, with limited policy depth, lack of understanding of political culture and dialogue, and inconsistent engagement beyond election cycles. The study identified a widespread shortage of coherent ideological positioning, updated and constituent-backed programmes and credible reform roadmaps, compounded by the fact that many parties lack functional public platforms for communicating policy commitments. This limits meaningful voter choice, encourages personality-driven competition in the campaign stage, and complicates accountability, because citizens and observers often lack clear benchmarks against which to assess performance and delivery of the political parties.

At the same time, the research suggests that Armenia's political discourse is undergoing a gradual but important shift. The loss of Nagorno-Karabakh and the post-war environment have reduced the political dominance of older nationalist narratives and opened space for alternative agendas more explicitly framed around governance quality, peace, regional connectivity, reform, and socio-economic performance, particularly among parties and movements identifying with pro-European standards and state

modernisation. This creates an opportunity window: with targeted engagement, political parties could strengthen their programmatic capacity, improve policy literacy, and develop more realistic, implementable agendas. Capacity-building efforts, such as training in policy design, strategic planning, constituency engagement, and issue-based expertise, could help shift incentives away from purely reactive politics and towards a more stable, programme-driven model of democratic competition. Importantly, such support should be designed to strengthen the quality of competition rather than to privilege particular political actors, and should encourage transparency, internal party governance, and sustained engagement with voters.

Finally, Armenia's evolving geopolitical re-orientation adds a defining layer of complexity to its democratic transition. The government's efforts to diversify partnerships, expand cooperation with the European Union and the United States and reduce security dependence on Russia are facing an enduring economic interdependence, unresolved regional security vulnerabilities (closed borders with Turkey, situation in Iran, etc.), and hybrid interference efforts from the Kremlin. This shapes domestic political debate, constrains reform options, and amplifies political polarisation, particularly when foreign-policy decisions are perceived as directly linked to sovereignty, national identity, and regional peace. As a result, internal reforms cannot be understood in isolation from Armenia's external environment: governance choices are repeatedly filtered through geopolitical risk calculations and competing expectations of international partners.

In conclusion, Armenia remains in a prolonged transitional phase of democratization, facing a dual challenge: consolidating democratic institutions internally while navigating an increasingly adverse external and regional environment. Sustainable democratic progress will depend not only on constitutional design and quality of the political dialogue, but on restoring institutional trust, reinforcing checks and balances, revitalising credible reform agendas, and fostering a more programmatic, transparent and accountable party system. Without progress in these areas, the gap between formal democratic structures and effective democratic governance is likely

to persist, continuing to weaken resilience, deepen polarisation and limit the long-term stability of Armenia's democratic development.



DIPD
DANISH INSTITUTE FOR
PARTIES AND DEMOCRACY



EECMD
ԲԱՅՍԿՈՒԹՅԱՆ ԺՊՈՒՐՈՎԱԿՐՈՒԹՅԱՆ
ՄԻՆԵՐԱԿՐՈՂՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԱՇՏԻ և ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՆԱՄԻԿԱՆ**

**2026 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒԱԶ**

Հեղինակ՝ Հասմիկ Հարությունյան



DIPD
DANISH INSTITUTE FOR
PARTIES AND DEMOCRACY



EECMD
ԲԱՅՄԱԿՈՒՄԱԿԱԿԱՆ ԺՊՈՒՐՊԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐԱՆՆԱԿՎՐՈՂՍԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԴԱՇՏԻ և ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՆԱՄԻԿԱՆ
2026 ԹՎԱԿԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ**

Հեղինակ՝ Հասմիկ Հարությունյան

2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական կուսակցությունների և շարժումների ցանկ	6
Հապավումների ցանկ	8
Ամփոփագիր	9
Ներածություն, ուսումնասիրության նպատակը և շրջանակը	11
Ուսումնասիրության վերլուծական շրջանակը և հիմնական հայեցակարգերը	12
Մեթոդաբանություն	13
Հայաստանի քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ և քաղաքական շրջանակները	14
2015 թվականի սահմանադրական բարեփոխումներ	14
Ընտրական համակարգը և ընտրական բարեփոխումները	16
Քաղաքական զարգացումները Թավշյա հեղափոխությունից հետո	19
2018 թվականի Թավշյա հեղափոխության կարևորությունը	19
Կառավարումը և հետհեղափոխական քաղաքական մթնոլորտը Հայաստանում (2018-2020 թթ.)	22
Հետպատերազմական քաղաքական ճգնաժամը և 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները	25
Քաղաքական իրավիճակը 2021 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո	27
Կուսակցական համակարգը և քաղաքական դերակատարները 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին	30
Ներքաղաքական մթնոլորտը 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ	30
Ներկայիս խորհրդարանական համակարգի ընդհանուր նկարագիրը	33
Խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը	35
Արտախորհրդարանական քաղաքական ուժերի պատկերը	38
Նոր քաղաքական շարժումները և այլ քաղաքական դերակատարները	42
Կուսակցությունների գաղափարական դիրքավորումը, արտաքին քաղաքականության հիմնահարցեր և ծրագրային մրցակցություն	44
Գաղափարական մոտեցումներ և կուսակցությունների դիրքավորումներ	44
Կուսակցությունների դիրքավորումները տարածաշրջանային հարցերի և ԵՄ հետ հարաբերությունների շուրջ	46
Ծրագրային զարգացման հիմնական մարտահրավերները	54
Առկա մարտահրավերները և հիմնական եզրակացությունները	57

Ի գիտություն՝

Սույն հրապարակումը պատվիրվել է Բազմակուսակցական ժողովրդավարության Արևելաեվրոպական կենտրոնի (EECMD) կողմից՝ Դանիայի սոցիալ-լիբերալ կուսակցության և Կուսակցությունների և ժողովրդավարության դանիական ինստիտուտի (DIPD) կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակում: Հրապարակման բովանդակությունն ու արտահայտված կարծիքները բացառապես հեղինակի պատասխանատվության ներքո են և չեն արտահայտում EECMD-ի կամ դրա դոնոր կազմակերպությունների տեսակետները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

«5165» ազգային-պահպանողական շարժում

Ազգային առաջընթաց կուսակցություն

Ազգային ժողովրդավարական բևեռ

Ապրելու երկիր կուսակցություն

Արդար Հայաստան կուսակցություն

Բարգավաճ Հայաստան կուսակցություն

«Բոլորին դեմ եմ» շարժում

Ինքնիշխան Հայաստան կուսակցություն

Լուսավոր Հայաստան կուսակցություն

Հայ ազգային կոնգրես

Հայ Յեղափոխական Դաշնակցություն (Դաշնակցություն, ՀՅԴ)

Հայաստան դաշինք

Հայաստանի դեմոկրատական կուսակցություն

Հայաստանի եվրոպական կուսակցություն

Հայաստանի կոմունիստական կուսակցություն

Հայաստանի Հանրապետական կուսակցություն

Հայրենիք կուսակցություն

Հանուն Հանրապետության կուսակցություն

Հանրային ծայն կուսակցություն

Հանրապետություն կուսակցություն

Ձայն լիբերալ պահպանողական կուսակցություն

Մայր Հայաստան կուսակցություն

Մեկ Հայաստան կուսակցություն

Մեր ձևով շարժում

Միասնության թևեր նախաձեռնություն

Միացյալ Հայաստան կուսակցություն

ՆԺԱԲ սահմանադրական շարժում

Նոր ուժ կուսակցություն

Ուժեղ Հայաստան կուսակցություն

Պատիվ ունեմ դաշինք

Սասնա ծռեր համահայկական կուսակցություն

Վերածնվող Հայաստան կուսակցություն

Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն

Քաղաքացու որոշում սոցիալ-դեմոկրատական կուսակցություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ALDE	Եվրոպայի լիբերալների և դեմոկրատների ալյանս
CEPA	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԿԸՀ	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԵԺԿ	Եվրոպական ժողովրդական կուսակցություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԺՀՄԻԳ	Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
ՀԱՊԿ	Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա
ՄՔԴ	Միջազգային քրեական դատարան
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՎՀ	Վենետիկի հանձնաժողով
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
TRIPP	Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման

Ամփոփագիր

Սույն ուսումնասիրությունը վերլուծում է Հայաստանի քաղաքական համակարգը, դրա ինստիտուցիոնալ կառուցակարգերը և կուսակցական դաշտը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հանգամանքին, թե որքանով են առկա ֆորմալ ժողովրդավարական կառուցակարգերը արտացոլվում ամենօրյա ժողովրդավարական պրակտիկայի մեջ: Վերլուծությունն ուսումնասիրում է առկա սահմանադրաիրավական ճարտարապետության և արդյունավետ կառավարման միջև պահպանվող խզվածքը, որն արտահայտվում է գործադիր իշխանության ձեռքում լիազորությունների կենտրոնացմամբ, առկա ինստիտուցիոնալ հակակշիռների անհամաչափությամբ, ինստիտուտների սահմանափակ հաշվետվողականությամբ և քաղաքական երկխոսության պակասով:

Չնայած Հայաստանի ներքաղաքական դաշտը գործում է խորհրդարանական կառավարման մոդելով՝ քաղաքական իշխանությունը գնալով ավելի է կենտրոնացել իշխանության գործադիր ճյուղի շուրջ՝ առավելապես վարչապետի աշխատակազմի և իշխող մեծամասնության ձեռքերում: Կայունություն ապահովելու նպատակով նախատեսված ընտրական և ինստիտուցիոնալ կառուցակարգերը գործնականում նպաստել են մեկ քաղաքական ուժի գերիշխման հաստատմանը: Խորհրդարանական ժողովրդավարության էական հակակշիռները՝ ուժեղ խորհրդարանական վերահսկողությունը, դատարանների գործուն անկախությունը և արժանահավատ ընտրական հաշվետվողականությունը, գտնվում են մշտական փոխակերպման փուլում և կիրառվում են ոչ հետևողական կերպով: Թեև վերջին բարեփոխումները որոշ չափով բարելավել են ընտրական գործընթացների կազմակերպմանը վերաբերող տեխնիկական որոշ բաղադրիչներ, կառուցվածքային սահմանափակումները շարունակում են պահպանվել: Այդ պատճառով քաղաքացիների մասնակցությունը քաղաքական գործընթացներին հիմնականում մնում է դրվագային և ընտրություններին միտված՝ ընտրական ցիկլերի միջև ընկած ժամանակահատվածում հանրային

ազդեցության կայուն, ինստիտուցիոնալացված ուղիների սահմանափակ լինելու հետևանքով:

2018 թվականից հետո ընտրական բարեփոխության, իրավունքի գերակայության, դատական բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության ոլորտներում արձանագրված բարեփոխումային հավակնությունները արձանագրել են խառը և որոշ դեպքերում՝ անհամաչափ արդյունքներ: Իրականացման գործընթացը պայմանավորված է եղել վարչական կարողությունների և մարդկային ռեսուրսների սահմանափակությամբ, ինստիտուցիոնալ իներտությամբ, քաղաքական բևեռացմամբ և, առավելապես, միմյանց հաջորդող ճգնաժամերով, որոնք հանրային առաջնահերթություններն ու պետական համակարգի ուշադրությունը ուղղել են դեպի անվտանգային կառավարման խնդիրները: Այս գործոնները նպաստել են բարեփոխումների նկատմամբ «անհետաքրքրության» ձևավորմանը և թուլացրել են վստահությունը թե՛ բարեփոխումների կայունության, թե՛ դրանց անաչառության նկատմամբ:

Ուսումնասիրությունը նաև արձանագրում է, որ խորհրդարանական վերահսկողությունը մնում է սահմանափակ՝ պայմանավորված կայուն մեծամասնության տրամաբանությամբ և կուսակցական խիստ կարգապահության գերակայությամբ: Այս դինամիկան առավել ամրապնդում է գործադիր գերակշռող դիրքը և թուլացնում հակակշիռների ու զսպումների համակարգի գործնական կիրառումը: Հայաստանի կուսակցական համակարգն իր մեջ արտացոլում է ավելի լայն ինստիտուցիոնալ ենթատեքստ: Քաղաքական բազմակարծությունը բարձր մակարդակի է և այն արդյունավետ է, սակայն շատ կուսակցություններ շարունակում են լինել թույլ ինստիտուցիոնալացված և մեծապես առաջնորդակենտրոն են՝ սահմանափակ ծրագրային խորությամբ, հնացած կամ հանրության համար դժվարամատչելի քաղաքականություններով, ինչպես նաև ընտրական ժամանակահատվածներից դուրս ոչ հետևողական ներգրավվածությամբ: Սա նվազեցնում է ընտրողների համար իմաստալից ընտրության հնարավորությունները, խթանում է

անձերով պայմանավորված մրցակցությունը և թուլացնում է հաշվետվողականությունը, քանի որ կուսակցությունների գործունեությունը գնահատելու համար անհրաժեշտ ծրագրային չափորոշիչները հաճախ բացակայում են: Միևնույն ժամանակ, 2020 թվականից հետո ձևավորված համատեքստը փոխել է գաղափարական դաշտը. կառավարման և բարեփոխումների օրակարգերը, հատկապես պրոեկտային քաղաքական հոսանքները, դարձել են ավելի տեսանելի, թեև դրանք դեռևս ոչ միշտ են հետևողականորեն վերաձվում կայուն կուսակցական կազմակերպությունների և ամբողջական քաղաքական հարթակների:

Արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանը որդեգրել է ավելի դիվերսիֆիկացված ուղղվածություն՝ ներառյալ Եվրոպական միության հետ ավելի խորը ներգրավվածություն՝ միաժամանակ վերափոխման ավտորիտետով իր անվտանգային ճարտարապետությունում Ռուսաստանի վրա ավանդաբար հիմնված կախվածության որոշ տարրեր: Այս վերափոխումը, այդուհանդերձ, սահմանափակված է Ռուսաստանից առկա կառուցվածքային տնտեսական փոխկախվածությամբ, շարունակվող անվտանգային խոցելիությամբ և արտաքին երաշխիքների սահմանափակությամբ: Արդյունքում արտաքին քաղաքականության ոլորտում կատարված որոշումները գնալով ավելի մեծ ազդեցություն են ունենում ներքաղաքական մրցակցության վրա և ձևավորում են թե՛ ժողովրդավարական բարեփոխումների ներկայիս ընթացքը, թե՛ դրանց մատուցման տրամաբանությունը:

Ընդհանուր առմամբ ուսումնասիրությունը եզրակացնում է, որ Հայաստանը շարունակում է գտնվել երկարատև անցումային փուլում, որտեղ ժողովրդավարական մղումները գոյակցում են արմատացած կառուցվածքային բացերի, բարեփոխումների սահմանափակ ազդեցության, քաղաքական բարձր բևեռացման և շարունակական արտաքին ճնշումների հետ: Ավելի դիմակայուն ժողովրդավարական կառավարման ուղղությամբ առաջընթացը կախված կլինի ոչ միայն սահմանադրական կառուցակարգերից, այլև ինստիտուցիոնալ վստահության վերական-

գնումից, զսպումների և հակակշիռների համակարգի ուժեղացումից, ժողովրդավարական բարեփոխումների վստահելի օրակարգերի վերաբժնորումից և առավել ծրագրային ու հաշվետու կուսակցական համակարգի զարգացումից:

Ներածություն, ուսումնասիրության նպատակը և շրջանակը

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի Հայաստանի գործող քաղաքական համակարգը դիտարկել ավելի լայն պատմական և ինստիտուցիոնալ համատեքստում, գնահատել առկա քաղաքական միտումներն ու սահմանել ապագա զարգացման հավանական ուղիները: Դիտարկելով 2015 թվականի սահմանադրական և ընտրական բարեփոխումներից մինչև 2018 թվականի հեղափոխությունն ընկած ժամանակահատվածը, հետհեղափոխական բարեփոխումների օրակարգը, ինչպես նաև հետպատերազմյան և 2021 թվականից հետո ձևավորված ընտրական շրջափուլերի ընթացքում արձանագրված զարգացումները՝ ուսումնասիրությունը վերլուծում է այն դինամիկան, որը շարունակաբար ձևավորում է Հայաստանի ժողովրդավարական վերափոխումը: Այդ համատեքստում ուսումնասիրությունը հատուկ ուշադրություն է դարձնում այն հարցին, թե ինչպես են քաղաքական ճգնաժամերը, անվտանգային ցնցումները և աշխարհաքաղաքական կողմնորոշումների փոփոխությունները ազդել պետական կառավարման գործելաոճի, իշխանության ինստիտուցիոնալ հավասարակշռության և կուսակցական մրցակցության բնույթի վրա: Վերլուծությունն անդրադառնում է Հայաստանի սահմանադրաիրավական կառուցակարգի ու ներկայիս քաղաքական պրակտիկայի փոխազդեցությանը: Այն ուսումնասիրում է, թե արդյոք իշխանության ապանձնավորումը և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը միտված բարեփոխումները բերել են հաշվետվողականության, վերահսկողության և արձագանքելու ունակության առարկայական փոփոխությունների, թե արդյոք ոչ ֆորմալ ընթացակարգերն ու քաղաքական գործիքները շարունակում են ավելի ամրապնդել գործադիր իշխանության գերակշռող դիրքը: Այդ նպատակով ուսումնասիրությունը դիտարկում է խորհրդարանի գործունեությունը, մասնավորապես առկա սահմանադրական մեծամասնության պայմաններում, ինչպես նաև այն դիտանկյունից, թե գործնականում

որքանով են ապահովվում խորհրդարանական վերահսկողությունը, քաղաքականության շուրջ բանավեճը և ներկայացուցչության իրականացումը:

Ուշադրության կենտրոնում է քաղաքական կուսակցությունների փոփոխվող դերի հիմնահարցը՝ որպես խորհրդարանական համակարգում քաղաքական մրցակցության, ներկայացուցչության և կառավարման հիմնական գործիքի: Ուսումնասիրությունը դիտարկում է կուսակցությունների ներքին զարգացումը, դրանց կարողությունները՝ ձևակերպելու ծրագրային այլընտրանքներ, և ընտրական շրջափուլերից դուրս հասարակության հետ նրանց շփումները: Հատուկ ուշադրություն է դարձվում կուսակցությունների գործունեության թափանցիկությանը, կազմակերպական կայունությանը, նրանց կողմից քաղաքականությունների մշակմանը և իրականացվող ներկայացուցչության որակին վերաբերող հիմնահարցերին, որոնք ներառում են կուսակցությունների կողմից կոալիցիա ձևավորելու մոտեցումները, ընդդիմադիր աշխատանքի կազմակերպումը, ընտրազանգվածի հետ հաղորդակցությունն ու տեղեկատվության հասանելիության գործիքները:

Ինստիտուցիոնալ վերլուծությունը համադրելով կուսակցական համակարգի և ավելի լայն քաղաքական համատեքստի գնահատման հետ՝ ուսումնասիրությունը փորձ է կատարում ներկայացնել Հայաստանի ժողովրդավարական վերափոխման ամբողջական և ինտեգրված պատկերը: Այն այդ վերափոխումը չի դիտարկում որպես ավարտված գործընթաց, այլ շարունակական և խոցելի գործընթաց՝ պայմանավորված թե՛ բարեփոխումների նախաձեռնություններով, թե՛ կառուցվածքային սահմանափակումներով: Հետևաբար, ուսումնասիրությունը նպատակ ունի ոչ միայն նկարագրել ինստիտուցիոնալ կարգավորումները, այլ նաև վերլուծել, թե ինչպես են դրանք գործում ճնշումների պայմաններում և ժողովրդավարական համախմբման տեսանկյունից ինչ հետևություններ կարելի է անել:

Ուսումնասիրության վերլուծական շրջանակը և հիմնական հայեցակարգերը

Սույն ուսումնասիրության վերլուծական շրջանակը հիմնված է ինստիտուցիոնալ տեսության, ժողովրդավարական վերափոխման և քաղաքական համակարգի վերլուծության մոտեցումների վրա: Այն դիտարկում է, թե ինչպես են սահմանադրական և ընտրական բարեփոխումները փոխազդում կառավարման գործնական իրողությունների հետ, որոնք ներառում են քաղաքական դերակատարների շահերը, ինստիտուտների միջև իշխանության բաշխվածությունը, ինչպես նաև վարչարարական կարողություններով և քաղաքական մշակույթով պայմանավորված սահմանափակումները: Հիմնական մոտեցումն այն է, որ ինստիտուցիոնալ կառուցակարգը թեև կարևոր է, բայց ինքնին չի երաշխավորում ժողովրդավարական արդյունքներ. կանոնների մեկնաբանումը, իրականացումը և կիրառումն առօրյա քաղաքական պրակտիկայում՝ ընտրված պաշտոնյաների, ինստիտուտների և հասարակության կողմից, ի վերջո տարրորշում են, թե արդյոք ժողովրդավարական կարգավորումները գործում են նախատեսվածի պես, թե ոչ:

Կատարված վերլուծության հիմքում դրված են մի քանի առանցքային հասկացություններ: «Սահմանադրական մեծամասնություն» հասկացությունը դիտարկվում է ոչ միայն որպես իրավական կատեգորիա, այլ որպես քաղաքական պայման, որը կարող է կամ նպաստել արդյունավետ կառավարմանը, կամ թուլացնել բազմակարծությունն այն դեպքում, երբ այն նվազեցնում է քաղաքական փոխզիջումների և վերահսկողության հնարավորությունները: Ընտրական երաշխիքների որակը գնահատվում է թե՛ տեխնիկական (բարեվարքություն և վարչարարություն), թե՛ կառուցվածքային (ուղենիշներ, խթաններ և մրցակցությանը խոչընդոտող արգելքներ) չափումներով: Ուսումնասիրությունը նաև գնահատում է քաղաքական կուսակցությունների գործառույթն ու ինստիտուցիոնալացումը՝ կենտրոնանալով ծրագրային խորության, կազմակերպական կարողությունների, ներքին քաղաքական ներդաշնակեցման և ընտրողների հետ շարունակական ներգրավվածության վրա:

սրանք գործոններ են, որոնք խորհրդարանական ժողովրդավարական համակարգի պայմաններում կենսական նշանակություն ունեն ընտրողների համար իրական, իմաստալից ընտրության ապահովման համար:

Ի լրումն, ուսումնասիրությունը դիտարկում է ժողովրդավարական լեգիտիմության հայեցակարգը և դրա հետ փոխկապակցված քաղաքական և սահմանադրական մշակույթի չափումները: Դրանք դիտարկվում են որպես ինստիտուտների արդյունավետության գործնական ցուցիչներ. հանրային վստահության մակարդակը, ինստիտուտների ներսում գործող ոչ պաշտոնական ընթացակարգերը և քաղաքական վարքագծի ձևերը կարող են ամրապնդել ֆորմալ կանոնները կամ, հակառակը, զրոյացնել դրանք՝ զրկելով գործնական բովանդակությունից: Վերջապես, համահունչ լինելով ուսումնասիրության մոտեցմանը, ըստ որի կուսակցությունները հանդիսանում են ժողովրդավարական համակարգի առանցքային դերակատարները՝ կիրառված վերլուծական շրջանակը գնահատում է քաղաքական կուսակցությունների կողմից երկարաժամկետ քաղաքական օրակարգերի ձևակերպման արդյունավետությունը և կուսակցությունների կողմից արժանահավատ քաղաքական այլընտրանքներ (ներառյալ արտաքին քաղաքական հարցերով) ներկայացնելու հնարավորությունները: Կուսակցություններին նվիրված բաժնում քննարկվում են առաջատար քաղաքական դերակատարների արտաքին քաղաքական առաջնահերթությունները, մասնավորապես՝ Եվրոպական միության հետ ավելի խորը համագործակցության և ավելի լայն իմաստով՝ ԵՄ ինտեգրման հարցի վերաբերյալ նրանց դիրքորոշումները, որոնք ներկայումս դարձել են ներքաղաքական մրցակցության կարևոր առանցք և նշանակալի ցուցիչ՝ հասկանալու համար, թե կուսակցություններն ինչպես են մեկնաբանում Հայաստանի ներկայիս ռազմավարական ուղղվածությունը, ընթացող բարեփոխումների բնույթը և կառավարման առաջնահերթությունները:

Ընդհանուր առմամբ, այսպիսի հետազոտական շրջանակը թույլ է տալիս ուսումնասիրությանը սահմանադրական և ընտրական կառուցակարգային

լուծումները կապել ինստիտուցիոնալ վարքագծի և քաղաքական արդյունքների հետ:

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրությունը հիմնականում կիրառում է որակական հետազոտական մոտեցում՝ լրացվելով այն ընտրված քանակական մոտեցման տարրերով, որը նպատակ է հետապնդում ապահովել Հայաստանի քաղաքական կուսակցությունների՝ դրանց դիրքորոշումների, առկա կառուցվածքների և գործունեության համապարփակ վերլուծությունը: Մեթոդաբանության առանցքը կազմում է ազգային օրենսդրության խորքային ուսումնասիրությունը, որի նպատակն է հստակեցնել քաղաքական կուսակցությունների գործունեությունը կարգավորող իրավական շրջանակը՝ կուսակցությունների ստեղծման, ներքին կառավարման, ֆինանսավորման և գործառնական պահանջների մասով: Սույն իրավական վերլուծությունը լրացվում է կուսակցությունների կանոնադրությունների և հարակից պաշտոնական փաստաթղթերի՝ ներառյալ քաղաքական ծրագրերի, հռչակագրերի և այլ պաշտոնական հայտարարությունների ուսումնասիրությամբ, որոնք միտված են գնահատելու կուսակցությունների գաղափարական մոտեցումները, ներքին կազմակերպչական կառուցակարգերը և հռչակված քաղաքական նպատակները: Վեր հանված արդյունքների հիմնավորվածությունն ավելի ամրապնդելու նպատակով՝ ուսումնասիրությունը համակարգված կերպով օգտվում է նաև բաց աղբյուրներից՝ հիմնվելով հանրորեն հասանելի զեկույցների, կուսակցական հրապարակումների, մեդիա անդրադարձների և առցանց ռեսուրսների վրա: Այս աղբյուրները կիրառվում են վերլուծությունը ավելի հարստացնելու և առանցքային դիտարկումներն առավել ամրապնդելու համար՝ հատկապես այն դեպքերում, երբ առաջնային տվյալների անմիջական հասանելիությունը սահմանափակ է:

Փաստաթղթային ուսումնասիրությունը լրացնելու համար և որպես հետազոտական հիմնական գործիք մշակվել էր հատուկ հարցաթերթիկ, որը պետք է լրացվեր կուսակցությունների

կողմից: Հարցաթերթիկը հատուկ ուշադրություն էր հատկացնում կուսակցական գաղափարախոսությանը, Եվրոպական միության հետ հարաբերություններին, Ռուսաստանի հետ հարաբերություններին, տարածաշրջանային ինտեգրման նկատմամբ մոտեցումներին, երիտասարդական թևերի դերին և գործառույթին, բարեփոխումների օրակարգերին, ինչպես նաև մարզային մակարդակում կազմակերպական կարողություններին՝ ներառյալ գրասենյակների և կուսակցական անդամների թվաքանակը:

Հարցաթերթն ուղարկվել էր քաղաքական կուսակցությունների լայն շրջանակի՝ նպատակ ունենալով ապահովել ընդգրկուն ծածկույթ և իրականացնել համեմատական վերլուծություն: Միաժամանակ, խոշոր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին ուղղվել էին հանդիպումների և հարցազրույցների խնդրանքներ՝ առավել մանրամասն քննարկումներ կազմակերպելու և այնպիսի որակական դիտարկումներ ստանալու համար, որոնք սովորաբար ամբողջությամբ հասանելի չեն պաշտոնական փաստաթղթերում: Այնուամենայնիվ, ուսումնասիրությունը բախվել է էական մեթոդաբանական սահմանափակումների՝ պայմանավորված հարցաթերթիկի պատասխանների փոքր քանակով և կուսակցությունների ներկայացուցիչների հետ անմիջական ներգրավվածության սահմանափակ հնարավորություններով: Այս սահմանափակումները հստակորեն արձանագրվել և հաշվի են առնվել սույն ուսումնասիրության արդյունքների մեկնաբանման և եզրահանգումների ձևակերպման ընթացքում:

Այս համատեքստում, կատարված ուսումնասիրությունը մեծապես հենվում է փաստաթղթային վերլուծության և բաց աղբյուրների վրա՝ ինչպիսիք են դաշտը կարգավորող օրենսդրությունը, կուսակցությունների կանոնադրությունները, պաշտոնական հայտարարությունները, հարցազրույցները և հանրային հասանելի նյութերը, որոնք թույլ են տալիս գնահատել կուսակցությունների դիրքորոշումները, կազմակերպական կառուցվածքները և քաղաքական ուղղվածությունները: Թեև այսպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս որոշակիորեն կուսակցական դաշտը քարտեզագրել

կառուցվածքային և փաստաբանական հիմքի վրա, այդուհանդերձ կուսակցություններից ստացված առաջնային արձագանքների սահմանափակ լինելը մատնանշում է, որ նյութում ներկայացված որոշ ներքին ընթացակարգեր, գործառնական պրակտիկաներ և ընկալումներ չեն կարող առավել ճշգրտությամբ արտացոլված լինել սույն աշխատության մեջ և հնարավոր են որոշակի բացթողումներ և տարբերություններ փաստաթղթերի և իրական ընթացակարգերի միջև:

Հայաստանի քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ և քաղաքական շրջանակները

2015 թվականի սահմանադրական բարեփոխումներ

2015 թվականի սահմանադրական հանրաքվեն մեծ քանակի փոփոխություններ ներմուծեց, որոնք էականորեն փոխեցին Հայաստանի քաղաքական համակարգը՝ վերաճեցնելով թե՛ պետական իշխանության բաշխվածությունը, թե՛ Ազգային ժողովի ընտրության մեխանիզմները: Թեև հանրաքվեն ֆորմալ իմաստով ներկայացվեց որպես համապետական քվեարկություն սահմանադրական փոփոխությունների շուրջ, 2015 թ. դեկտեմբերի 6-ին անցկացված հանրաքվեն գործնականում հանգեցրեց սահմանադրական կարգի խոշոր վերափոխման՝ Հայաստանը կիսանախագահական մոդելից տեղափոխելով խորհրդարանական համակարգի¹: Առաջարկվող փոփոխությունների փաթեթը չէր սահմանափակվում տեխնիկական կարգավորումների որոշակի շրջանակով. այն

1 Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծային փոփոխությունների վերաբերյալ երկրորդ կարծիք, հաստատված 104-րդ լիազումար նստաշրջանում (Վենետիկ, 23-24 հոկտեմբերի 2015 թ.):

փաստացի ներկայացնում էր Սահմանադրության գրեթե ամբողջական վերաշարադրում և կառավարման համակարգի հիմնարար վերադասավորում: Նոր կարգավորումների ներքո քաղաքական/գործադիր իշխանության կենտրոնը տեղափոխվեց՝ հեռանալով ուղղակիորեն ընտրվող նախագահի ինստիտուտից, որը նախկինում քաղաքական համակարգի ամենաազդեցիկ դերակատարն էր, և ուղղվեց դեպի Ազգային ժողովի կողմից ընտրվող վարչապետի ինստիտուտը: Զուգահեռաբար վերաճեցվեցին նաև ընտրական կանոնները. եթե նախկինում Ազգային ժողովն ընտրվում էր խառը համակարգով՝ համատեղելով համամասնական և մեծամասնական տարրերը, ապա վերանայված սահմանադրական կառուցվածքը հաստատեց լիովին համամասնական ընտրական համակարգ՝ ընդգծելով կուսակցությունների կենտրոնական դերը քաղաքական մրցակցության և կառավարության ձևավորման գործընթացում:

Սահմանադրական բարեփոխումների նախաձեռնությունը մեկնարկեց նախագահ Սերժ Սարգսյանի պաշտոնավարման ժամանակաշրջանում, թեև խորհրդարանական կառավարման մոդելի գաղափարը շրջանառվել էր դեռևս 1991 թվականի անկախացումից վեր և տարբեր փուլերում առաջ էր մղվել ընդդիմադիր դերակատարների կողմից՝ այդ թվում՝ 1994 և 2004 թվականներին: Իշխանությունները պաշտոնապես որդեգրեցին այդ գաղափարը 2013 թվականին՝ չնայած այն հանգամանքին, որ իշխող էլիտան 1998 թվականից ի վեր մեծապես պահպանել էր իր քաղաքական շարունակականությունը: Այս ինստիտուցիոնալ շարունակականությունն ազդել է թե՛ այն քաղաքական մթնոլորտի վրա, որում առաջարկվել է այս բարեփոխումը, թե՛ դրանց հիմքում ընկած շարժառիթների շուրջ ձևավորված հանրային քննարկումների վրա:

Բարեփոխումները տեղի ունեցան նաև Հայաստանի Հանրապետության նախագահի ինստիտուտի շուրջ պարբերաբար ի հայտ եկող լեգիտիմության ճգնաժամերի ֆոնին: Հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը 1998 թվականին հրաժարական տվեց հանրության և քաղաքական էլիտայի աջակցության նվազման պայմաններում: Նրա իրավահաջորդի՝ Հանրապետության երկրորդ

նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնավարման ժամանակահատվածը լայնորեն քննադատվել է որպես ավտորիտար կառավարման և քաղաքական բազմակարծության սահմանափակումների փուլ: Երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի նախագահությունը սկսվեց 2008 թվականի վիճահարույց նախագահական ընտրություններից հետո և առավել ստվերվեց 2008 թ. մարտի 1-ին հետընտրական բողոքի ցույցերի դեմ բռնի ուժի կիրառմամբ², ինչը խորացրեց հանրային անվստահությունը և ընդլայնեց քաղաքական ղեկավարության ու հասարակության միջև անջրպետը: Այս համատեքստում սահմանադրական փոփոխությունների օգտին ներկայացվող փաստարկները, որոնց ձևակերպման հիմքում երկրի ժողովրդավարական զարգացումը և ինստիտուցիոնալ արդիականացումն էր, որոշ չափով արձագանք գտան հանրային բանավեճի շրջանակներում: Միևնույն ժամանակ փոփոխությունները քննադատող շրջանակները պնդում էին, որ ավելի ժողովրդավարական կառավարումը հնարավոր էր ապահովել նաև գործող սահմանադրական մոդելի շրջանակներում, եթե առկա լինեին իրական քաղաքական կամք, և նրանք հարցականի տակ էին դնում բարեփոխումների օրակարգը՝ կասկածներ արտահայտելով, որ փոփոխությունների հիմքում ոչ թե ինստիտուցիոնալ տրամաբանությունն է, այլ քաղաքական նկատառումները:

Բարեփոխումները նախապատրաստելու և առաջ մղելու նպատակով 2013 թվականին ստեղծվեց Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով³, որը գործեց շուրջ երկու տարի: Գործընթացը ներառում էր համագործակցություն Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի հետ, որը 2015 թվականին ընդհանուր առմամբ դրական գնահատական է տվել առաջարկվող փոփոխությունների փաթեթին՝ միաժամանակ,

2 Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, «Ֆարմանյանը և այլք ընդդեմ Հայաստանի» վճիռ, HUDOC (Մարդու իրավունքների եվրոպական դատարան), առանց ամսաթվի՝ <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-245048>

3 Տե՛ս Հայաստանի Հանրապետության նախագահ, «Նախագահ Սերժ Սարգսյանը ստորագրել է հրամանագիր», մամուլի հաղորդագրություն, 4 սեպտեմբերի 2013 թ.՝ <https://www.president.am/en/press-release/item/2013/09/04/President-Serzh-Sargsyan-signed-decree>

սակայն, նշելով, որ առկա են անհամապատասխանություններ՝ խորհրդակցությունների ընթացքում դիտարկված նախագծերի և վերջնական ներկայացված տարբերակների միջև: Երբ բարեփոխումների փաթեթը տեղափոխվեց քաղաքական դաշտ, ընդդիմադիր ուժերը 2015 թվականին համախմբեցին իրենց ուժերը՝ ձևավորելով «Ոչ»-ի ճակատը⁴՝ պնդելով, որ առաջարկվող սահմանադրական անցումը նպատակ ունի ապահովել իշխանության կենտրոնացում, այլ ոչ թե ժողովրդավարական կառավարման ուժեղացում: Չնայած այս առարկություններին՝ այն ժամանակվա իշխող կուսակցության գերիշխող դիրքով և դաշնակից խմբակցությունների աջակցությամբ պայմանավորված՝ Ազգային ժողովը 2015 թ. հոկտեմբերի 5-ին հաստատեց Սահմանադրության նախագիծը: Մի շարք ընդդիմադիր պատգամավորներ, այդ թվում՝ Նիկոլ Փաշինյանը, հրապարակայնորեն քննադատեցին այս գործընթացը՝ այն բնութագրելով որպես մանիպուլյատիվ և գործող քաղաքական ղեկավարության դիրքերի ամրապնդմանն ուղղված⁵:

Սահմանադրական ընթացակարգերին համապատասխան առաջարկվող փոփոխությունները հետագայում՝ 2015 թ. դեկտեմբերի 6-ին, դրվեցին համապետական հանրաքվեի: Պաշտոնական արդյունքների համաձայն մասնակցության մակարդակը կազմել է 51%, իսկ կողմ քվեարկածների քանակը՝ 66%: Հանրաքվեի արդյունքները, սակայն, վիճարկվեցին ընդդիմադիր կուսակցությունների կողմից և ուղեկցվեցին ընտրախախտումների վերաբերյալ բազմաթիվ մեղադրանքներով, որոնք համահունչ և բնորոշ էին նախորդ համապետական քվեարկությունների ընթացքում արձանագրված խախտումներին:

Բովանդակային իմաստով նախագահականից խորհրդարանական մոդելի անցումը բերել է

4 Ազգային Եվրոպա/Ազգայություն ռադիոկայան (Azatutyun), «Հողված. հայկական խմբերը միավորվում են սահմանադրական փոփոխությունների դեմ»՝ <https://www.azatutyun.am/a/27246722.html>

5 Infocom, «Հողված. 25-ամյա Սահմանադրություն. ընդունում, փոփոխություններ, ներկա և ակնկալվող ապագա»՝ <https://infocom.am/30965/>

հիմնարար փոփոխություն թե՛ իշխանությունների հավասարակշռման, թե՛ կառավարության ձևավորման ընթացակարգերի առումով: Վարչապետը, որն ընտրվում է Ազգային ժողովի, ոչ թե ուղղակիորեն ընտրողների կողմից, դարձավ պետության ղեկավարը: Ի տարբերություն նախագահի, վարչապետի պաշտոնը ենթակա է ժամկետային սահմանափակումների, ինչը նշանակում է, որ վարչապետը կարող է պահպանել պաշտոնը այնքան ժամանակ, քանի դեռ իր կուսակցությունը պահպանում է խորհրդարանական մեծամասնությունը կամ շարունակում է առաջնորդել կառավարող կոալիցիան: Նախագահի պաշտոնը պահպանվեց, սակայն դրա լիազորությունները հիմնականում կրճատվեցին՝ սահմանափակվելով արարողակարգային և ներկայացուցչական գործառնություններով և քաղաքական ազդեցության սահմանափակ հնարավորությամբ: Ընդհանուր առմամբ այս փոփոխությունները վերասահմանեցին Հայաստանի քաղաքական համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը և հաստատեցին կառավարման այնպիսի շրջանակ, որի պայմաններում խորհրդարանում կուսակցական վերահսկողությունը դարձավ որոշիչ գործոն գործադիր իշխանության համար:

Ընտրական համակարգը և ընտրական բարեփոխումները

2015 թվականին ընդունված սահմանադրական բարեփոխումները նախատեսում էին նաև Հայաստանի ընտրական համակարգի էական փոփոխություններ՝ արտացոլելով կիսանախագահական մոդելից դեպի գերազանցապես խորհրդարանական կառավարման ձևի անցումը: Այս անցումը պահանջում էր նոր Ընտրական օրենսգրքի ընդունում՝ որպես կառավարության ձևավորման իրավական հիմք այնպիսի համակարգում, որտեղ խորհրդարանական ներկայացվածությունն է դառնում գործադիր իշխանության ձևավորման որոշիչ տարրը: Այդ նպատակով Արդարադատության նախարարությունը մշակեց ընտրական օրենսգրքի նախագիծը և այն փորձագիտական գնահատման նպատակով ներկայացրեց ԵՄ «Ժողովրդավարություն իրավունքի

միջոցով եվրոպական հանձնաժողովին» (Վենետիկի հանձնաժողով): Ստացված խորհրդատվական կարծիքը ստանալուց հետո, նախագծի մի շարք հաջորդական տարբերակներ վերանայվեցին⁶:

Նոր ընտրական օրենսդրությունը նպատակ ուներ արձագանքելու միջազգային դիտորդական առաքելությունների կողմից նախորդող տարիների ընթացքում արձանագրված մտահոգություններին, ներառյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի առաջարկություններին՝ կապված ընտրողների ցուցակների ճշգրտության և դրանց հրապարակման վերաբերյալ: Այն նախատեսում էր, որ երկաստիճան համամասնական համակարգով կընտրվեն առնվազն 101 պատգամավորներ՝ համադրելով միասնական համապետական և տարածքային ցուցակները: Առաջին անգամ համակարգը սահմանեց նաև ազգային փոքրամասնությունների համար վերապահված մանդատներ: Միաժամանակ, Սահմանադրությունը կառավարություն ձևավորելու համար ներմուծեց «կայուն խորհրդարանական մեծամասնության» պահանջը՝ սահմանելով կառավարող մեծամասնության ձևավորման հստակ շեմ:

Այս համատեքստում վերանայված Ընտրական օրենսգրքին ընդունվեց 2016 թ. մայիսի 25-ին՝ խորհրդարանի անդամների ձայների զգալի մեծամասնությամբ: Դրա ընդունումն ուղեկցվեց նաև իշխանական և ընդդիմադիր ուժերի (<<Կ և ՀԱԿ) միջև ավելի լայն քաղաքական համաձայնությամբ՝ նախատեսելով լրացուցիչ միջոցառումներ, որոնք միտված էին 2016 թ. աշնանը նախատեսված տեղական ինքնակառավարման ընտրություններին և 2017 թ. գարնանը նախատեսվող խորհրդարանական ընտրություններին ընդառաջ ժողովրդավարական ընտրությունների անցկացման պայմանների ամրապնդմանը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները կառուցողական կերպով ներգրավված էին այս քննարկումներին, թեև վերջնական համաձայնագիրը

6 Տե՛ս Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Հայաստանի ընտրական օրենսգրքի վերաբերյալ երկրորդ համալրող կարծիք, 14–15 հոկտեմբերի 2016 թ., <https://www.coe.int/en/web/venice-com-mission/-/cdl-ad-2016-031-e>

նրանք չստորագրեցին: 2016 թ. հունիսի 30-ին ընդունված հետագա փոփոխությունները, ի թիվս այլ նորարարությունների, նախատեսեցին թվային տեխնոլոգիաների կիրառումը՝ ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողությունը ուժեղացնելու նպատակով՝ պայմանով, որ դրանց կիրառման համար կհատկացվեն բավարար ֆինանսական միջոցներ⁷:

Ընդհանուր առմամբ 2016 թվականի Ընտրական օրենսգրքի վերջնական տարբերակը ներառեց Վենետիկի հանձնաժողովի բազմաթիվ առաջարկություններ: Այն նախատեսեց մի շարք բարելավումներ, այդ թվում՝ կոալիցիաների ձևավորման համար ավելի երկար ժամկետներ, ընտրական գործընթացի հանդեպ թափանցիկության բարձրացում՝ կնքված ընտրացուցակներին հասանելիության միջոցով, ինչպես նաև քաղաքացի դիտորդների համար ներկայացվող պահանջների նվազեցում: Օրենսգրքը ներառեց նաև ընտրական վարչարարության անկախությունն ու պրոֆեսիոնալիզմն ամրապնդելուն ուղղված միջոցառումներ՝ ներառյալ ընտրական գործընթացում ներգրավված պաշտոնատար անձանց նշանակման ավելի հստակ կանոններ և նրանց համար նախատեսված երաշխիքներ: Կանանց ներկայացվածության ավելացման նպատակով ներդրվեցին դրույթներ, որոնք միտված էին թեկնածուների ցուցակներում ավելի բարձր գենդերային քվոտաների սահմանմանը, թեև այդ փոփոխությունների կիրառումը նախատեսվում էր ավելի ուշ փուլում⁸: Օրենսգրքը նաև հստակեցրեց նախընտրական քարոզչության և քարոզարշավի ֆինանսավորման, թեկնածուների գրանցումից հանելու, ինչպես նաև բողոքարկման և դատական վերահսկողության ընթացակարգերի կանոնները:

Միաժամանակ, սկզբնական համատեղ կարծիքում ներկայացված մի շարք առաջարկություններ կյանքին չկոչվեցին: Չլուծված մտահոգությունների թվում

7 Տե՛ս նույն տեղում, էջ 7:
8 Տե՛ս Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով), Հայաստանի ընտրական օրենսգրքի վերաբերյալ երկրորդ համալրող կարծիք, 14–15 հոկտեմբերի 2016 թ., պարբ. 17՝ <https://www.coe.int/en/web/venice-commission/-/cdl-ad-2016-031-e>

էին կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նկատմամբ կիրառվող անհավասար ընտրական շեմերը, ազգային փոքրամասնությունների ներկայացվածությանը վերաբերող որոշ հարցեր, թեկնածուների ցուցակներ առաջադրելու քաղաքացիական խմբերի սահմանափակ հնարավորությունները, վարչական ռեսուրսների հնարավոր չարաշահման դեմ պայքարի անբավարար երաշխիքները, ինչպես նաև ձայների հաշվարկման և վերահաշվարկի ընթացակարգերի թափանցիկությունը բարձրացնելու շուրջ միջոցառումների անբավարար քանակը: Օրենսգրքի հետագա կիրառման ընթացքում այս բացերը շարունակեցին մնալ արդիական:

2017 թվականի խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին այս վերանայված ընտրական օրենսդրությամբ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ կողմից ընտրությունների վերաբերյալ հրապարակված դիտորդական զեկույցների համաձայն՝ ընտրական օրենսգրքի փոփոխություններն ընդունվել էին ներառական գործընթացի միջոցով, ինչը նպաստել էր ընտրական համակարգի հանդեպ վստահության ամրապնդմանը: Այդուհանդերձ, պահպանվեցին մի շարք մտահոգություններ՝ կապված քվեարկության ընթացակարգերի բարդության, ընտրատեղամասերում թույլատրվող քաղաքացի դիտորդների և լրագրողների թվաքանակի սահմանափակումների, ինչպես նաև կնքված ընտրացուցակներից ստացվող տվյալների վերաբերյալ հաշվետվություններում անճշտությունների պարագայում քրեական պատասխանատվության դրույթների կիրառման հետո⁹:

Բարեփոխումների հաջորդ փուլը տեղի ունեցավ 2021 թվականի սկզբին՝ արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ: Հայաստանի իշխանությունները Վենետիկի հանձնաժողովից և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ից հայցեցին համատեղ կարծիք Ընտրական օրենսգրքի և հարակից օրենսդրական ակտերի նախագծվող փոփոխությունների վերաբերյալ:

9 Տե՛ս ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (OSCE/ODIHR), Հայաստան. խորհրդարանական ընտրություններ, 2 ապրիլի 2017 թ. Վերջնական զեկույց (Ընտրությունների դիտորդական առաքելություն):

Ստացված կարծիքը վերաբերում էր միայն այն դրույթներին, որոնք պաշտոնապես ներկայացվել էին փորձագիտական գնահատման, և կատարված ուսումնասիրությունը չէր հանդիսանում Հայաստանի ընդհանուր ընտրական շրջանակի համապարփակ գնահատում: 2021 թ. ապրիլի 1-ին Ազգային ժողովն ընդունեց համապատասխան փոփոխությունները, որոնցից առավել էականը տարածքային թեկնածուների ցուցակների վերացումն էր, որը միտված էր պարզեցնելու համամասնական ընտրակարգը: 2021 թվականի բարեփոխումների իրականացման շրջանում քննարկված հետագա փոփոխությունները ներառում էին նաև ընտրական անցողիկ շեմերի վերանայում՝ նվազեցնելով շեմը խորհրդարանական ընտրություններին մասնակցող առանձին կուսակցությունների համար, միաժամանակ սահմանելով ավելի բարձր շեմեր կուսակցությունների դաշինքների համար: Փոփոխությունները նաև վերաբերում էին «կայուն մեծամասնության» պահանջի վերափոփոխմանը: Բարեփոխումները նաև ընդլայնեցին և հստակեցրին քարոզարշավի ֆինանսավորման կանոնները՝ ներառյալ այն ծախսերի շրջանակը, որոնք պարտադիր պետք է հայտարարագրվեն և իրականացվեն պաշտոնական նախընտրական հիմնադրամների միջոցով, ինչպես նաև սահմանվեց պահանջ, ըստ որի քաղաքական գովազդը պետք է հստակ տարրորոշվի որպես նախընտրական քարոզչություն:

Թեև 2021 թվականի փոփոխությունների որոշ բաղադրիչներ քննադատվեցին՝ ուշ ընդունվելու և համապատասխանաբար անորոշություն ստեղծելու համար, Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը նշել են, որ փոփոխությունները պարզեցրել են համամասնական համակարգի որոշ տարրեր և ունեցել են լայն քաղաքական ու քաղաքացիական աջակցություն: Որոշ դիսկեր, մասնավորապես՝ այն դրույթները, որոնք կարող էին սահմանափակել ընտրական գործընթացի մեդիա լուսաբանումը կամ քաղաքական բանավեճը, վերացվել էին՝ նախագծային տարբերակներից խնդրահարույց ձևակերպումների հրաժարվելու միջոցով: Այդուհանդերձ մի շարք առաջարկություններ մնացին չիրականացված, ներառյալ կուսակցական դաշինքների համար բարձր շեմերի վերաբերյալ մտահոգությունները,

ընտրողների համար իրավական պաշտպանության միջոցների սահմանափակումները, հիմնական խախտումների ոչ հստակ սահմանումները և վերահաշվարկի դիմումներ ներկայացնելու չափազանց կարճ ժամկետները¹⁰: Ուսումնասիրվել էին փոփոխությունների երկու փաթեթներ.

2021 թ. ապրիլին ընդունված և 2021 թ. հունիսին անցկացված արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընթացքում կիրառված փոփոխությունները, և

2021 թ. հունիսին ընդունված ավելի ընդգրկուն փաթեթը, որը այդ ընտրությունների համար չի կիրառվել:

Ապրիլյան փոփոխությունները վերացրեցին տարածքային թեկնածուների ցուցակները և նվազեցրեցրին քաղաքական կուսակցությունների համար ընտրական շեմը՝ 5%-ից հասցնելով 4%-ի: Միաժամանակ բարձրացվեցին շեմերը կուսակցական դաշինքների համար՝ սահմանելով դրանք 8% երկու կուսակցությունների դաշինքի համար, 9% երեք կուսակցությունների դաշինքի համար, և 10% չորս կամ ավելի կուսակցությունների դաշինքի համար: Խորհրդարանական «կայուն մեծամասնության» կանոնը պահպանվեց, սակայն քաղաքական կուսակցության համար ընդհանուր մանդատների 54%-ի շեմը նվազեցվեց՝ դառնալով 52%: Փոփոխությունները նաև էականորեն վերանայեցին ընտրական քարոզարշավների իրականացման կարգավորումները՝ ընդլայնելով այն ծախսերի շրջանակը, որոնք պարտադիր պետք է հայտարարագրվեն և կատարվեն պաշտոնական նախընտրական հիմնադրամից, ինչպես նաև սահմանելով պահանջ, ըստ որի գովազդները պետք է հստակ նշեն, որ հանդիսանում են «նախընտրական քարոզչություն»:

Ավելին, 2026 թ. հունվարին Ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունը հաստատեց

¹⁰ Ժողովրդավարություն իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով (Վենետիկի հանձնաժողով) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (OSCE/ODIHR), Հայաստանի վերաբերյալ համադրել հրապարակ կարծիք. ընտրական օրենսգրքի և հարակից օրենսդրության փոփոխություններ, 5 հուլիսի 2021 թ.՝ <https://www.coe.int/en/web/venice-commission/-/cdl-ad-2021-025-e>

Քաղաքական զարգացումները Թավշյա հեղափոխությունից հետո

2018 թվականի Թավշյա հեղափոխության կարևորությունը

1991 թ. սեպտեմբերի 21-ին՝ Խորհրդային Միությունից անկախություն վերականգնելուց հետո, Հայաստանի ներքաղաքական զարգացումները զգալի չափով պայմանավորված են եղել Լեոնային Ղարաբաղի հակամարտությամբ և դրա արդյունքում ստեղծված ավելի լայն անվտանգային միջավայրով: Հակամարտությունն ազդել է ոչ միայն արտաքին և պաշտպանական քաղաքականության ընտրությունների վրա, այլև թելադրել է ներքին քաղաքական մրցակցությունը, քաղաքական էլիտաների կոնսոլիդացիան և իրար հաջորդող վարչակարգերի լեգիտիմության շուրջ ձևավորվող հանրային ընկալումները: Անկախացումից հետո՝ վաղ շրջանում, այս դինամիկան նպաստեց անվտանգության ապահովման շուրջ կենտրոնացված քաղաքական համաձայնության ձևավորմանը, որի պայմաններում պատերազմի, խաղաղության և տարածքային անվտանգության հարցերը սերտորեն փոխկապակցվեցին իշխանության շարունակականության և պետական իշխանության հաստատման հետ: Այս ուղեգծում վճռորոշ կետ դարձավ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականը 1998 թվականին՝ ազդեցիկ գործիչների, այդ թվում՝ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի կողմից շարունակական ընդդիմախոսության պայմաններում: Տեր-Պետրոսյանի հրաժարականն արտացոլեց թե՛ ներհամակարգային էլիտայում առկա ճեղքվածքը, թե՛ խաղաղ բանակցային կարգավորման օգտին դիրքորոշում ունենալու քաղաքական գինը: Տեր-Պետրոսյանը փաստացի արձանագրեց «խաղաղության կողմնակիցների» (peace party) մոտեցման պարտությունը՝ հօգուտ ավելի կոշտ համախմբվածության, որը առաջնահերթություն էր տալիս անվտանգային հրամայականներին:

Ռոբերտ Քոչարյանը, ով Լեոնային Ղարաբաղի նախկին առաջնորդն էր, 1998 թվականին ստանձնեց Հայաստանի Հանրապետության

Կառավարության կողմից աջակցվող ևս մեկ օրենսդրական նախաձեռնություն, որով Կենտրոնական ընտրական հանձնաժողովին (ԿԸՀ) վերապահվեց լիազորություն՝ ընտրական դիտորդական խմբերին զրկելու դիտորդություն իրականացնելու իրավունքից, եթե դրանք չեն համարվում քաղաքականապես չեզոք և անաչառ: Որպես օրենքի հիմնավորում քաղաքական մեծամասնության ներկայացուցիչները պնդում էին, որ գործող Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում բավարար և արդյունավետ իրավական մեխանիզմներ՝ դիտորդական առաքելությունների և դիտորդների կողմից քաղաքական չեզոքության ու անաչառության պարտավորության պատշաճ կատարումը վերահսկելու և ապահովելու համար, ուստի տվյալ օրենսդրական նախաձեռնությունը նպատակ ունի լրացնել այդ բացը: Ազգային ժողովը օրինագիծը արտահերթ նիստում հաստատեց առաջին ընթերցմամբ, այսպես կոչված «հատուկ ընթացակարգով», որը հնարավորություն էր տալիս օրենքի ամբողջական ընդունումն իրականացնել ընդամենը 24 ժամվա ընթացքում: Խորհրդարանի երկու ընդդիմադիր խմբակցությունները բոյկոտեցին նիստերն այն բանից հետո, երբ իշխանական մեծամասնությունը հրաժարվեց մինչև քննարկումներն առաջարկվող փոփոխությունները դնել հանրային քննարկման¹¹:

Ամփոփելով, կարող ենք արձանագրել, որ 2015 թվականից հետո իրականացված ընտրական բարեփոխումներն արտացոլում են շարունակական փորձ՝ միտված ընտրական կանոնների համապատասխանեցմանը Հայաստանի խորհրդարանական կառավարման մոդելին: Այդուհանդերձ ընտրական օրենսգրքի տարաբնույթ փոփոխությունների գործընթացն ինքնին նաև վկայում է Հայաստանի ընտրական գործընթացի՝ որպես ժողովրդավարական համախմբման հիմքի, շարունակական խոցելիության մասին:

¹¹ Գայանե Սարիբեկյան, «Հայաստանի խորհրդարանը սահմանափակումներ է հաստատել տեղական ընտրական դիտորդների համար», «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայան (Ազատություն ռ/լ), 23 հունվարի 2026 թ.՝ <https://www.azatutyun.am/a/33657838.html>

նախագահի պաշտոնը և հաջորդ տասնամյակի ընթացքում ձեռնամուխ եղավ իր իշխանության կոնսոլիդացմանը: Նրա պաշտոնավարման շրջանում քաղաքական համակարգն ավելի կենտրոնացվեց, իսկ ընտրությունների նկատմամբ հանրային վստահությունը և ինստիտուցիոնալ հաշվետվողականությունը զգալիորեն նվազեցին: Այս միտումները լրացուցիչ ամրապնդվում էին նեղ քաղաքական էլիտայի շարունակական գերիշխմամբ և զսպումների ու հակակշիռների համակարգի թուլությամբ: 2008 թվականի նախագահական ընտրությունները, որոնց արդյունքները լայնորեն վիճարկվեցին, բյուրեղացրին ժամանակի ընթացքում կուտակված իշխանության լեգիտիմության ճգնաժամը: Համապետական ընտրությունների հայտարարված արդյունքները հարուցեցին զանգվածային բողոքի ցույցեր, որոնք ճնշվեցին բռնի ուժի կիրառմամբ՝ հանգեցնելով զոհերի և 20 օրով արտակարգ դրության հայտարարմանը: Կիրառված բռնությունից անդին, 2008 թվականի մարտի իրադարձությունները ձևավորեցին այն երկարաժամկետ ընկալումը, որ ընտրական մրցակցությունը կառուցվածքային առումով անհավասար է, իսկ քվեարկության միջոցով քաղաքական փոփոխությունների հնարավորությունները՝ սահմանափակ: Այս ընկալումը նպաստեց հանրային դժգոհության աստիճանական կուտակմանը և խորացրեց այն համոզմունքը, որ ֆորմալ ժողովրդավարական ընթացակարգերը միշտ չէ, որ հուսալիորեն վերածվում են իրական քաղաքական հաշվետվողականության:

Ռեբերտ Քոչարյանին հաջորդեց Սերժ Սարգսյանը, ով պահպանեց գործող կառավարման մոդելը, որը բնորոշվում էր գործադիր իշխանության գերիշխմամբ և սահմանափակ ինստիտուցիոնալ հակակշիռներով: Այդուհանդերձ, ժամանակի ընթացքում սահմանադրական մոդելի և քաղաքական պրակտիկայի միջև առկա բացը դարձավ ավելի ակնհայտ՝ հատկապես այն պայմաններում, երբ սոցիալ-տնտեսական ճնշումներն ու կառավարման թերությունները մնացին չլուծված: Հանրային լայնածավալ դժգոհության ավելացման վրա ազդում էր մի քանի գործոնների համադրություն. կոռուպցիայի և հովանավորչական կապերի վերաբերյալ մտահոգություններ, շարունակական

անհավասարություն և ֆինանսական աճի սահմանափակ հնարավորություններ, տնտեսական անորոշությամբ պայմանավորված արտագաղթ և ժողովրդագրական տվյալների նվազում, ինչպես նաև քաղաքացիների՝ հատկապես երիտասարդ սերնդի շրջանում աճող այն զգացողությունը, որ քաղաքական էլիտան գնալով էլ ավելի է կտրվում հանրային կարիքներից: Ուստի, 2018 թվականին հանրային-հասարակական դժգոհությունները չպետք է դիտվեն որպես հանկարծակի երևույթ. դրանք արտացոլում էին երկարատև մի շրջափուլ, որի ընթացքում բազմաթիվ քաղաքացիներ քաղաքական համակարգն ընկալում էին որպես փակ, էլիտաների կողմից վերահսկվող և իմաստալից փոփոխություններին դիմադրող մի երևույթ:

Նախորդ բաժիններում քննարկված 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները դարձան կարևոր ինստիտուցիոնալ շրջադարձային կետը և անմիջական նախադրյալ 2018 թվականի իրադարձությունների համար: Թեև իշխանությունների կողմից դրանք ներկայացվում էին որպես համակարգի արդիականացում և ժողովրդավարացում՝ խորհրդարանական կառավարման մոդելին անցնելու միջոցով, ընդդիմադիր դերակատարների և քաղաքացիական հասարակության որոշ շերտերի կողմից բարեփոխումները լայնորեն մեկնաբանվում էին որպես քաղաքական էլիտայի վերարտադրության ապահովման մեխանիզմ: Մասնավորապես, քննադատները պնդում էին, որ կիսանախագահականից խորհրդարանական մոդելի անցումը, թեև ինստիտուցիոնալ տեսանկյունից կարող էր ընկալվել որպես ողջունելի քայլ, այն իրականացվել է այնպիսի եղանակով, որը նախ և առաջ հնարավորություն էր տալիս գործող իշխանությանը պահպանել իշխանությունը՝ դերերի վերաբաշխման միջոցով: Այս մեկնաբանությունն առավել ամրապնդվեց այն բանից հետո, երբ Սերժ Սարգսյանի երկրորդ նախագահական ժամկետը մոտենում էր ավարտին, և ձևավորվեց քաղաքական ընկալում, որ նա կձգտի զբաղեցնել վարչապետի պաշտոնը, որը առավել ուժեղացվել էր սահմանադրական փոփոխությունների միջոցով: Այլ կերպ ասած՝ սահմանադրական վերածնունդը չսահմանափակվեց ինստիտուցիոնալ ճարտարապետության փոփոխությամբ. այն

փոխեց նաև հանրային ընկալումները քաղաքական մտադրությունների վերաբերյալ՝ ամրապնդելով այն համոզմունքը, որ կանոնները կարող են խմբագրվել՝ իշխանությունը պահպանելու, այլ ոչ թե հաշվետվողականությունն ուժեղացնելու համար:

Ինստիտուցիոնալ բարեփոխումների և իշխանության հնարավոր կոնսոլիդացման այս փոխկապակցվածությունը առանցքային է Թավշյա հեղափոխության հիմնարար պատճառները հասկանալու համար: 2018 թ. ապրիլ-մայիս ամիսների բողոքի գործողությունները միայն Սերժ Սարգսյանի՝ վարչապետի պաշտոնում նշանակման վերաբերյալ քաղաքացիական արձագանք չէին. դրանք մարմնավորում էին ժողովրդավարական լեգիտիմության երկարատև պակասը և հանրային վերահսկողությունից մեկուսացված ընկալվող կառավարման մոդելի նկատմամբ կուտակված հիասթափության կիզակետն էին: 2018 թվականին Հայաստանի քաղաքական համակարգը բախվել էր երկակի ճգնաժամի հետ՝

- **բովանդակային ճգնաժամ**, որը պայմանավորված էր կառավարման արդյունավետությամբ և սոցիալ-տնտեսական դժգոհություններով, և
- **ընթացակարգային ճգնաժամ**, որը բխում էր վստահության պակասից առ այն, որ ընտրությունները և սահմանադրական կանոններն իրականում ապահովում են իշխանափոխության իրական հնարավորություն:

ՀՀԿ-ի որոշումը՝ նախագահության երկրորդ ժամկետն ավարտելուց հետո Սերժ Սարգսյանին վարչապետի թեկնածու առաջադրելու վերաբերյալ, գործեց որպես խորհրդանշական «ազդակ», որը զանգվածային մոբիլիզացիայի տեսքով բյուրեղացրեց լայն հանրային դժգոհությունը: Գործընթացը լայնորեն ընկալվեց ոչ թե որպես ընթացիկ քաղաքական զարգացում, այլ որպես հաստատում այն արմատացած օրինաչափության, համաձայն որի իշխանության «ռոտացիան» կազմակերպվում էր նեղ քաղաքական էլիտայի շրջանակի ներսում՝ ոչ թե որոշվում իմաստալից ժողովրդավարական մրցակցության միջոցով:

2018 թվականի հեղափոխությունն արտացոլեց նաև Հայաստանի քաղաքական մոբիլիզացիայի

կազմակերպման և բնույթի կարևոր փոփոխությունները: Ի տարբերություն նախորդ բողոքի ակցիաների, որոնք հաճախ լինում էին մասնատված կամ արժանանում էին կոշտ բռնի հակազդման, 2018 թվականի շարժումը շարունակական կերպով բնութագրվում էր ոչ բռնի պայքարով, լայն աշխարհագրական ընդգրկմամբ և ընդգծված քաղաքացիական մասնակցության բաղադրիչով: Այն համախմբեց տարաբնույթ խմբերի՝ երիտասարդների, քաղաքային մակարդակում գործող ակտիվիստների, ուսանողների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, ինչպես նաև Երևանի սահմաններից դուրս ապրող քաղաքացիների՝ պահանջների հստակ և լայն արձագանք գտած օրակարգի շուրջ, որի առանցքում էին հաշվետվողականությունը, հակակոռուպցիոն պայքարը և ժողովրդավարական կառավարումը: Շարժումը միտումնավոր խուսափում էր կուսակցականացումից և փոխարենն այն ներկայացվում էր որպես քաղաքացիական պայքար համակարգային անարդարության և քաղաքական լճացման դեմ: Այս իմաստով հեղափոխությունը ի հայտ եկավ որպես թե քաղաքական, թե հասարակական հանգրվան. այն արտահայտեց քաղաքական մշակույթի փոփոխություն և իր մեջ պարփակում էր պահանջ հանրային ծայնի, թափանցիկության և խաղաղ հավաքական գործողության լեգիտիմության նկատմամբ:

Այն ժամանակ Ազգային ժողովի պատգամավոր Նիկոլ Փաշինյանի առաջնորդությունը՝ որպես շարժման ղեկավար, վճռորոշ նշանակություն ունեցավ հանրային մոբիլիզացիան հստակ քաղաքական արդյունքների վերածելու գործում: Հաշվի առնելով, որ բողոքի ակցիաները ընդլայնվում էին և ավելի մեծ քանակությամբ քաղաքացիներ էին ներգրավվում, շարժումը ցուցադրեց թե դիմակայունություն, թե բռնության բացառման սկզբունքի շուրջ կարգապահություն պահպանելու ունակություն, ինչն էլ ավելի ուժեղացրեց շարժման քաղաքացիական գրավչությունը՝ իր հերթին իշխանությունների համար դժվարացնելով էսկալացիա հիմնավորելը և անհամաչափ ուժ կիրառելը: Միևնույն ժամանակ, հենց ՀՀԿ-ի կողմից կառուցված քաղաքական համակարգը ուժեղ և շարունակական քաղաքացիական-քաղաքական

ճնշման պայմաններում սկսեց ցուցադրել հատվածավորման նշաններ: Քաղաքական էլիտայի ներսում հրաժարականները, ինչպես նաև առանցքային դերակատարների կողմից կոշտ ճնշումների գիծը շարունակելու ցանկության բացակայությունը նպաստեցին իշխանության հավասարակշռության արագ փոփոխությանը: Աննախադեպ հանրային ճնշման և աճող քաղաքական մեկուսացման պայմաններում Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց՝ հրապարակայնորեն ճանաչելով բողոքական շարժման լեգիտիմությունը և փաստացի ընդունելով ստեղծված քաղաքական փակուղին: Այս հրաժարականը ստեղծեց իշխանության խաղաղ փոխանցման պայմաններ և բացեց Հայաստանի քաղաքական զարգացման նոր փուլ, որը բնորոշվում էր ժողովրդավարական բարեփոխումների նկատմամբ հանրային բարձր սպասումներով և ինստիտուցիոնալ լեգիտիմության վերարժևորմամբ:

Ուստի հեղափոխությունը պետք է դիտարկել ոչ միայն որպես քաղաքական նշանակալի երևույթ, այլ որպես վճռորոշ շրջադարձային պահ Հայաստանի երկարատև ժողովրդավարական վերափոխման գործընթացում: Միևնույն ժամանակ, այն ինքնաբերաբար չլուծեց այս ուսումնասիրության նախորդ բաժիններում նկարագրված հիմնական ինստիտուցիոնալ խնդիրները: Հետևաբար, 2018 թվականից հետո ընկած ժամանակահատվածը պետք է դիտարկել որպես մի փուլ, երբ ժողովրդավարական ձգտումները ուժեղացան, սակայն միաժամանակ դրանք բախվեցին գործադիր իշխանության կողմից ստացված «ժառանգությանը», կուսակցությունների թույլ ինստիտուցիոնալացվածությանը, թույլ քաղաքական մշակույթին և շարունակական արտաքին անվտանգային ճնշումներին: Այս իմաստով Թավշյա հեղափոխությունն ավելի ճիշտ է մեկնաբանել ոչ թե որպես վերջնակետ, այլ որպես քաղաքական դաշտի վերադասավորում՝ մի գործընթաց, որը փոխեց քաղաքական լեգիտիմության ձևավորման պայմանները և բարձրացրեց ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևորության աստիճանը, միաժամանակ, դեռևս բաց թողնելով ժողովրդավարական համախմբման երկարաժամկետ խնդիրը:

Կառավարումը և հետհեղափոխական քաղաքական մթնոլորտը Հայաստանում (2018-2020 թթ.)

2018 թ. մայիսի 9-ին Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելն ազդարարեց վճռորոշ քաղաքական խզում անցյալի բարձրից և գեներացրեց հանրային ակնկալիքներ, որ Թավշյա հեղափոխության արդյունքում ձևավորված քաղաքական լեգիտիմությունը կվերածվի ինստիտուցիոնալ և իրավական բարեփոխումների: Հեղափոխությանը հաջորդած առաջին շրջափուլը, հետևաբար, բնութագրվում էր երկակի հրամայականով. մի կողմից՝ նախկին քաղաքական համակարգի փլուզումից հետո պետք էր կայունացնել կառավարումը, մյուս կողմից՝ պետք էր տեսանելի փոփոխություններ ապահովել այն ոլորտներում, որոնք մոբիլիզացրել էին հասարակությանը, այն է՝ կոռուպցիայի դեմ պայքարը, հաշվետվողականությունը, արդարադատությունը և քաղաքական մրցակցության արդարությունը: Սա ձևավորեց իր ընդգրկմամբ հավակնոտ բարեփոխումների օրակարգ, որը, միաժամանակ, խիստ խոցելի էր՝ պայմանավորված ներքաղաքական դիմադրությամբ, ինստիտուցիոնալ իներտությամբ և պետական կառավարման ոլորտում նոր քաղաքական էլիտաների սահմանափակ փորձով:

Սկզբնական փուլում նոր ղեկավարությունը որդեգրեց պրագմատիկ կոնսոլիդացիայի ռազմավարություն: Փաշինյանը ձևավորեց ազգային համաձայնության կառավարություն՝ համագործակցելով խորհրդարանական ուժերի հետ, այդ թվում՝ «Բարգավաճ Հայաստան»-ի և Հայ Յեղափոխական Դաշնակցության (Դաշնակցություն), դրան զուգահեռ՝ հեղափոխական շարժման վստահելի համախոհներին նշանակելով գործադիր իշխանության առանցքային պաշտոններում: Այս մոտեցումը կարճաժամկետ առումով ապահովեց կառավարելիություն և նպաստեց ինստիտուցիոնալ խզվածքների մեղմմանը: Միևնույն ժամանակ, արագորեն պարզ դարձավ, որ նոր վարչակազմը նպատակ ունի ապամոնտաժել նախկին ռեժիմի հետ փոխկապակցված ոչ պաշտոնական քաղաքական-տնտեսական ցանցերը: Մեկնարկեցին նախկին իշխող էլիտայի գործիչների նկատմամբ քննչական գործողություններ և

դատական գործընթացներ, որոնք ուղեկցվում էին քաղաքական հաղորդագրություններով, որոնցում հաշվետվողականությունը ներկայացվում էր որպես հեղափոխության առանցքային սկզբունք, իսկ հնարավոր դիմադրությունը՝ որպես «հակահեղափոխության» փորձ: Քաղաքական իմաստով այս քայլերը վիճարկում էին «կայունության» և «ազգ-բանակ» գաղափարների շուրջ ձևավորված նախկին խոսույթները և խորհրդանշում էին այսպես կոչված «դարաբաղյան քաղաքական էլիտայի (կլանի)» ազդեցության անկումը, որը շուրջ երկու տասնամյակ գերիշխել էր Հայաստանի իշխանական համակարգում¹²:

2018 թվականին կառավարման առանցքային հարցերից մեկը վերաբերում էր հեղափոխական լեգիտիմության և սահմանադրական լիազորությունների փոխհարաբերությանը: Թեև նոր վարչապետը վայելում էր հանրային բարձր աջակցություն, խորհրդարանական մեծամասնությունը ֆորմալ իմաստով շարունակում էր կապված լինել Հայաստանի Հանրապետական կուսակցության և նրա դաշնակիցների հետ, ինչի արդյունքում ձևավորվեց կառուցվածքային անհամապատասխանություն գործադիրի փաստացի լեգիտիմության և օրենսդիր մարմնի կազմի միջև: Այս անհամապատասխանությունը խթանեց քաղաքական լարվածությունը և արտահերթ խորհրդարանական ընտրությունները դարձրեց թե՛ հանրային պահանջ, թե՛ կառավարության տեսանկյունից՝ գործառնական անհրաժեշտություն՝ բարեփոխումների ծրագիրն իրականացնելուն ունակ և կայուն առաջնային մանդատ ապահովելու համար: Հաշվի առնելով, որ Հանրապետական կուսակցության ազդեցությունը թուլանում էր՝ գործարար շրջանակների հետ կապ ունեցող պատգամավորների ԱԺ մանդատներից հրաժարվելու և, ընդհանուր առմամբ, կուսակցության քաղաքական հեղինակության անկման հետևանքով, օրենսդիր մարմնի լիակատար փոփոխության պահանջն ու դրա իրականացման համար քաղաքական թափը զգալիորեն աճեցին:

12 Heinrich Böll Stiftung (Թրիվիսի – Հարավային Կովկասի փրագմաշրջան), «Հեղափոխությունից մինչև պարտազատ. ներքին զարգացումները Հայաստանում», 21 դեկտեմբերի 2020 թ.՝ <https://ge.boell.org/en/2020/12/21/revolution-war-domestic-developments-armenia>

Փաշինյանը և նրա թիմը ձևակերպեցին բարեփոխումների ճանապարհային քարտեզ, որը քաղաքական կոնսոլիդացիան կապում էր ինստիտուցիոնալ վերափոխման հետ¹³: Առանցքային նպատակները ներառում էին՝ ուղղակի և լեգիտիմ ընտրական մանդատ ունեցող կառավարության ձևավորում, տնտեսական կայունության ապահովում և հավակնոտ սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացում, հանրային վստահություն ներշնչող դատական համակարգի ստեղծում, հակակոռուպցիոն մեխանիզմների ամրապնդում՝ ներառյալ անցումային արդարադատության գործիքների կիրառման հնարավորության քննարկում, 2008 թ. մարտի 1-ի իրադարձությունների հետ կապված հաշվետվողականության ապահովման ուղղությամբ առաջընթաց, հանրային մանդատին համապատասխան Լեոնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի վարում, Ռուսաստանի, Եվրոպական միության և Միացյալ Նահանգների հետ արտաքին հարաբերություններում հավասարակշռված քաղաքականության պահպանում, և առավել կարևոր՝ արտահերթ ընտրությունների միջոցով լեգիտիմ Ազգային ժողովի ձևավորում: Թեև այս ճանապարհային քարտեզը ներկայացվում էր որպես ժողովրդավարական նորոգման ծրագիր, այն ուներ նաև ռազմավարական գործառույթ. այն արտահերթ ընտրությունները ներկայացնում էր որպես կամուրջ՝ հեղափոխական մոբիլիզացիայից դեպի սահմանադրական կառավարման լիարժեք անցում ապահովելու համար:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների կազմակերպմանը ցուցաբերված դիմադրությունը դարձավ հետհեղափոխական շրջանի առաջին խոշոր քաղաքական «սթրես-թեստը»: ՀՀԿ-ն ձգտում էր հետաձգել ընտրությունները մինչև 2019 թվականը, մինչդեռ վարչապետը պնդում էր 2018 թվականի դեկտեմբերի ժամկետի վրա: Այս դիմակայությունը բացահայտեց, թե որքանով կարող էին ֆորմալ խորհրդարանական

13 Հայաստանի Հանրապետության վարչապետ, «Հայրաբարություն/ ուղերձ (100-օրյա հանրահավաք)», 17 օգոստոսի 2018 թ.՝ <https://www.primeminister.am/en/statements-and-messages/item/2018/08/17/Nikol-Pashinyan-100-day-rally/>

ընթացակարգերը կիրառվել՝ սահմանափակելու այն կառավարության աշխատանքները, որը վայելում էր բարձր հանրային լեգիտիմություն, սակայն չունեի վստահելի խորհրդարանական հենարան: Գործող խորհրդարանական մեծամասնության և դրանց հետ գործակցող ուժերի փորձերը՝ ընթացակարգային փոփոխությունների միջոցով խոչընդոտելու վաղ ընտրությունների անցկացմանը, հարուցեցին նոր քաղաքական ճգնաժամ¹⁴, որի հետևանքով հեռացվեցին կոալիցիոն նախարարները և արագացավ ժամանակավոր համաձայնության կառավարության քայքայման գործընթացը: Ուժեղ հանրային ճնշման պայմաններում սահմանադրական ճանապարհով ձևավորվեց քաղաքական փոխզիջում. Փաշինյանը հրաժարական տվեց, Ազգային ժողովը երկու անգամ չընտրեց նոր վարչապետ, և արտահերթ ընտրությունները նշանակվեցին 2018 թ. դեկտեմբերի 9-ին:

2018 թ. դեկտեմբերի խորհրդարանական ընտրությունները բերեցին համակարգային իմաստով վերափոխող արդյունքներ: Փաշինյանի «Իմ քայլը» դաշինքը տարավ համոզիչ հաղթանակ¹⁵ և ստացավ սահմանադրական մեծամասնություն՝ հնարավորություն ստանալով ձևավորել կառավարություն և ազդարարելով հեղափոխության «երկրորդ փուլի» մեկնարկը, որն արդեն ավելի քիչ էր կենտրոնացած հանրային մոբիլիզացիայի վրա, և առավել շատ ուշադրություն էր դարձնում ինստիտուցիոնալ փոփոխություններին: Կառավարման տեսանկյունից նոր խորհրդարանական դասավորությունը վերացրեց մասնատված լեգիտիմության խնդիրը: Միաժամանակ ձևավորվեց այլ բնույթի մարտահրավեր, այն է՝ քաղաքական իշխանության կենտրոնացումը համեմատաբար նոր քաղաքական ուժի ձեռքում, որն ուներ սահմանափակ վարչարարական-կառավարչական հմտություններ և գործում էր մի համակարգում, որտեղ զսպումների և

14 Panorama.am, «Հողված. Հայաստանի նախագահը ստորագրել է ԲՀԿ և ՀՅԴ նախարարներին պաշտոնանկ անելու հրամանագրեր», 3 հոկտեմբերի 2018 թ.՝ <https://www.panorama.am/en/news/2018/10/03/president-ministers/2013027>

15 BBC News, «Հայաստանի բողոքի ցույցերը. «Թավշյա հեղափոխությունը» փոփոխություն է բերում», 10 դեկտեմբերի 2018 թ.՝ <https://www.bbc.com/news/world-europe-46502681>

հակակշիռների մեխանիզմները կառուցվածքային առումով շարունակում էին մնալ թույլ: Այս շրջափուլը նաև վերաձևավորեց ընդդիմության և քաղաքական բազմակարծության դինամիկան: Ընտրություններից հետո կառավարությունը գնալով ավելի հաճախ ներկայացնում էր ինքն իրեն որպես հանրային վստահության հիմնական կրող, իսկ որոշ դեպքերում՝ գրեթե որպես միակ կրող՝ քննադատություններին արձագանքելիս մեծապես հղում անելով ստացված ընտրական մանդատի վրա: Ընդդիմության լեգիտիմությունը գործնականում ևս վիճարկվում էր, քանի որ բազմաթիվ ընդդիմադիր գործիչներ ասոցացվում էին նախկին իշխող համակարգի հետ և լայնորեն ընկալվում էին որպես անվստահելի: Միաժամանակ, ուժեղ, ծրագրային և հանրային վստահություն վայելող ընդդիմության բացակայությունը ստեղծեց ժողովրդավարական կոնսոլիդացիայի կառուցվածքային խոցելիություն: Գործունակ խորհրդարանական համակարգը պահանջում է այնպիսի ընդդիմության առկայություն, որը կարող է առաջարկել այլընտրանքային քաղաքականություններ, արդյունավետորեն վերահսկել կառավարության գործունեությունը և արժանահավատորեն մրցակցել իշխանության համար. 2018–2020 թվականներին Հայաստանում դժվարությամբ էր ձևավորվում այդպիսի հավասարակշռություն:

Միևնույն ժամանակ, նախկին քաղաքական էլիտաները վերակազմավորվեցին և իրենց մեղիա ու քաղաքական ռեսուրսները կիրառեցին հաճախ բևեռացված նարատիվների միջոցով նոր իշխանությունների գործողությունները վիճարկելու համար: 2018 թվականի վերջից սկսած՝ կառավարությունը բախվեց մեղադրանքների մեծ ալիքի՝ սկսած «ավանդական արժեքների խաթարումից» մինչև «ազգային շահերի դավաճանություն», ներառյալ՝ Լեոնային Ղարաբաղի շուրջ բանակցություններին առնչվող պնդումներ: Տեղեկատվական պայքարի այս ինտենսիվ միջավայրը նպաստեց քաղաքական հռետորաբանության կոշտացմանը և ներքաղաքական լեգիտիմության ու ազգային անվտանգության հարցերի շուրջ դիրքավորման հարցերում առավել ընդգծված դրսևորումների: Արձագանքելով քաղաքական ճնշմանը՝ իշխանությունները որդեգրեցին Ղարա-

բաղի հարցի շուրջ կոշտ հաղորդակցության մեթոդը, որը մի կողմից պետք է ծառայեր որպես ներհասարակական «հանգստացնող» ազդակ և վճռականության ցուցադրում, իսկ մյուս կողմից՝ պետք է սահմանափակեր տարաբնույթ քննարկումների համար տարածքը¹⁶:

Այն պահից, երբ կառավարությունը շարժվեց հեղափոխական մոբիլիզացիայից դեպի ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում, պարզ դարձավ, որ առաջարկվող բարեփոխումները անհամաչափ են առկա հնարավորություններին: Դանդաղ առաջընթացը, հին համակարգի հետ փոխկապակցված ցանցերի դիմադրությունը և կառավարման ծանրաբեռնվածությունը՝ փորձառության պակաս ունեցող, սակայն գերիշխող խորհրդարանական մեծամասնության պայմաններում, նպաստեցին հեղափոխությանը սկզբնական փուլում աջակցած ուժերի ներսում մասնատման գործընթացին: Հեղափոխական շարժման հետ նույնականացվող մի շարք դերակատարներ և կուսակցություններ առավել քննադատական դիրք բռնեցին, ու միաժամանակ սկսեցին ձևավորվել նոր քաղաքական խմբավորումներ: Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության բազմաթիվ ներկայացուցիչներ շարունակում էին աջակցել բարեփոխումների օրակարգին և ավելի ու ավելի էին ինտեգրվում քաղաքականության մշակման գործընթացներում՝ զբաղեցնելով պաշտոններ պետական կառույցներում, հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում: Սա կառավարությանը որոշ չափով ապահովեց փորձագիտական կարողություններով և լրացուցիչ լեգիտիմությամբ, սակայն երբեմն էլ միահյուսեց քաղաքացիական վերահսկողության և քաղաքական մասնակցության միջև բաժանարար գծերը:

Ընդհանուր առմամբ 2018-2020 թվականների հետհեղափոխական շրջափուլը կարելի է բնութագրել որպես անցում խորհրդանշական լեգիտիմությունից դեպի ինստիտուցիոնալ կառավարման. կառավ-

16 Տես Գոռ Մադոյան, «Հեղափոխությունից մինչև պայտերազմ. ներքին զարգացումները Հայաստանում»: Heinrich Böll Stiftung (Թբիլիսի – Հարավային Կովկասի փարածաշրջան), դեկտեմբեր 2020՝ <https://ge.boell.org/en/2020/12/21/revolution-war-domestic-developments-armenia>

արությունը ձեռք բերեց ուժեղ ժողովրդական մանդատ, սակայն կանգնեց ավելի խորքային խնդրի առաջ՝ ինչպես վերածել քաղաքական մոբիլիզացիան կայուն ժողովրդավարական ինստիտուտների: Այս շրջանը հիմք դրեց բարեփոխումների, սակայն միաժամանակ բացահայտեց պահպանվող կառուցվածքային սահմանափակումները՝ զսպումների և հակակշիռների թույլ համակարգ, ընդդիմության լեգիտիմության շուրջ քննարկումներ և բևեռացված քաղաքական խոսույթ, որոնք շարունակեցին ձևավորել Հայաստանի քաղաքական հետագիծը:

Հետպատերազմական քաղաքական ճգնաժամը և 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները

Հետհեղափոխական կառավարությունն իր վստահության ամենաձանր փորձությանը բախվեց 2020-2021 թվականներին, երբ Հայաստանը միաժամանակ առերեսվեց երկու փոխկապակցված ցնցումների հետ՝ COVID-19 համավարակ և 2020 թ. աշնանը Լեոնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմ: Համավարակը բացահայտեց վարչարարական կարողությունների և ճգնաժամերի կառավարման հմտությունների սահմանափակ պաշարը, մինչդեռ պատերազմը և դրա հետևանքները հարուցեցին անհամեմատ ավելի խորը քաղաքական և հասարակական ճեղքվածք: Այս իրադարձությունները ծավալվում էին 2018 թվականին հայտարարված հավակնոտ բարեփոխումների ֆոնին, որոնք գործնականում առաջ էին ընթացել անհամաչափ կերպով: 2020 թվականի վերջում հանրային ակնկալիքներն արագ ժողովրդավարական վերափոխման, իրավունքի գերակայության ամրապնդման և պետական կառավարման համակարգի ներսում նոր քաղաքական մշակույթի ձևավորման վերաբերյալ գնալով ավելի հաճախակի հակադրվում էին թերի իրագործվածության, պահպանվող ինստիտուցիոնալ թուլությունների և աճող բևեռացման ընկալումների հետ:

Ներքաղաքական ճգնաժամը կտրուկ սրվեց 2020 թ. նոյեմբերի 9-ին՝ Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի առաջնորդների կողմից եռակողմ հայտարարության ստորագրումից հետո¹⁷: Ձեռքբերված պայմանավորվածությունը, որը երկրի ներսում մեծապես ընկալվեց պարտության և կորուստների պրիզմայի ներքո, անմիջապես հրահրեց զանգվածային բողոքներ և կառավարության լեգիտիմության շարունակական շահարկում: Ընդդիմադիր խմբերը պահանջեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը¹⁸, իսկ քաղաքական քննարկումները գերազանցապես կենտրոնացան պատերազմի ելքի համար պատասխանատվության, հրադարարի պայմանների և ազգային անվտանգության քաղաքականության ընդհանուր ուղղությունների շուրջ: Ճգնաժամը դուրս եկավ սովորական քաղաքական մրցակցության շրջանակներից և սկսեց վիճարկվել քաղաքացիական կառավարման և սահմանադրական կարգի դիմակայությունը:

Կրիտիկական էսկալացիան տեղի ունեցավ 2021 թ. փետրվարի 25-ին, երբ ՀՀ Ձինված ուժերի Գլխավոր շտաբի պետը և շուրջ 40 բարձրաստիճան գինվորականներ հրապարակային կոչ արեցին, որպեսզի կառավարությունը հրաժարական տա: Վարչապետ Փաշինյանը հայտարարությունը բնութագրեց որպես ռազմական հեղաշրջման փորձ և կոչ արեց իր աջակիցներին հավաքվել Երևանի Հանրապետության հրապարակում, մինչդեռ ընդդիմության «Հայրենիքի փրկության շարժումը» Ազատության հրապարակում կազմակերպեց պատասխան հանրահավաք՝ գեներալների դիրքորոշմանը աջակցելու նպատակով: Այս դիմակայությունը բյուրեղացրեց և ի ցույց դրեց ինստիտուցիոնալ լարվածության խորությունը. այն քաղաքացիական-ռազմական հարաբերությունները բերեց ճգնաժամի կետի և

ավելի սրեց հասարակության բևեռացումը մի պահի, երբ հետպատերազմյան ցավը և անորոշությունը արդեն իսկ չափազանց սուր էին: Մի քանի ամիս շարունակվող անկայունությունից հետո Փաշինյանը 2021 թ. մարտի 28-ին հայտարարեց, որ ապրիլին հրաժարական կտա՝ ճանապարհ բացելով արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման համար: Հերթական ընտրությունները սպասվում էին միայն 2023 թվականի վերջին, և արտահերթ ընտրությունները ներկայացվեցին որպես լեգիտիմության վեճը սահմանադրական ճանապարհով լուծելու մեխանիզմ¹⁹:

Այսպիսով, 2021 թ. հունիսին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին կորստի, պատերազմում կրած պարտության, դժգոհության և ինտենսիվ քաղաքական թշնամանքի արդյունքում ձևավորված միջավայրում: Անկախությունից ի վեր առաջին անգամ ընտրությունների արդյունքները թվում էին անորոշ: Մրցապայքարին ներգրավվեցին բացառիկ քանակի և քաղաքական առումով ծանրակշիռ դերակատարներ՝ ներառյալ գործող վարչապետը. հատկապես պետք է առանձնացնել երեք պաշտոնաթող նախագահների անմիջական մասնակցությունը կամ քաղաքական առաջնորդությունը նախընտրական գործընթացում: Մասնակցության ընդհանուր մասշտաբը նույնպես աննախադեպ էր. համապետական ընտրություններին մասնակցելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովում²⁰ գրանցվեցին 22 կուսակցություններ և կուսակցությունների 4 դաշինքներ՝ միասին առաջադրելով 2,605 թեկնածուների: Թեև հիմնական մրցակցությունը կենտրոնացած էր Նիկոլ Փաշինյանի և նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ փոխկապակցված ուժերի միջև, մասնակիցների այսօրինակ լայն շրջանակը վկայում էր թե՛ կուսակցական դաշտի մասնատվածության, թե՛

17 Հայաստանի Հանրապետության վարչապետ, Ադրբեջանի Հանրապետության նախագահ և Ռուսաստանի Դաշնության նախագահ, «Հայտարարություն», 10 նոյեմբերի 2020 թ.՝ <https://www.primeminister.am/en/press-release/item/2020/11/10/Announcement/>
18 Ազար Եվրոպա/Ազատություն ռադիոկայան (Azatutyun), «Հոդված. Հայաստանի վարչապետը անդամ է ընդդիմության բողոքի ակցիաները»՝ <https://www.azatutyun.am/a/30968582.html>

19 Armenpress, «Հոդված. Հայաստանի խորհրդարանը կլուծարվի, արտահերթ ընտրությունները նշանակվել են հունիսի 20-ին»՝ <https://armenpress.am/en/article/1051910>
20 Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, «Տեղեկատվություն գրանցման համար փաստաթղթեր ներկայացրած կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների մասին», PDF, առանց ամսաթվի՝ <https://res.elections.am/images/doc/nomination20.06.21.pdf>

նախորդ ռեժիմների հետ կապվող քաղաքական շրջանակների վերակառուցման մասին:

Արտահերթ ընտրությունների քարոզարշավը բնութագրվում էր հակադրության արտասովոր բարձր մակարդակով: Իշխանության և ընդդիմության ներկայացուցիչները փոխադարձաբար ներկայացնում էին մեղադրանքներ՝ կապված դավաճանության, ոչ կոմպետենտության և պատերազմի համար պատասխանատվության հետ, իսկ քաղաքական հաղորդակցությունը հաճախ վերածվում էր ատելության խոսքի և պարունակում էր ապալեգիտիմացնող հռետորաբանություն: Վերլուծական տեսանկյունից սա պարզապես ագրեսիվ քարոզչական ոճ էր. այն մատնանշում էր ավելի խորքային պայքար 2018 թվականի հեղափոխությունից հետո ձևավորված կառավարման քաղաքական և բարոյական հիմքերի շուրջ: Ընտրությունները վերածվել էին յուրահատուկ վստահության հանրաքվեի այն հարցի շուրջ, թե արդյոք հեղափոխական մանդատը պահպանել է իր լեգիտիմությունը պատերազմում կրած պարտությունից հետո:

Չնայած լայն տարածում գտած սպասումներին, թե պատերազմը վճռորոշ կերպով պետք է նվազեցնի գործող իշխանության հանրային աջակցությունը, իշխող ուժը հաղթանակ տոնեց: Արտահերթ ընտրություններին ընտրողների մասնակցությունը կազմել է մոտավորապես 50% (քվեարկելու իրավունք ունեցող քաղաքացիների թիվը՝ շուրջ 2.6 միլիոն է), իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ Փաշինյանի ղեկավարած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ ձայների 53.9%-ը, մինչդեռ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած դաշինքը՝ մոտ 21%²¹: Արդյունքը վերահաստատեց Փաշինյանի կառավարման մանդատը, սակայն չվերացրեց հասարակական շրջանակների բևեռացման խորքային պատճառները: Փոխարենն այն ձևավորեց նոր քաղաքական հավասարակշռություն, որտեղ սահմանադրական լեգիտիմությունը վերականգնվեց

21 CivilNet, «Փաշինյանի կուսակցությունը հաղթում է Հայաստանի 2021 թվականի ընտրություններում»՝ <https://www.civilnet.am/en/news/623545/pashinyans-party-wins-2021-armenian-election/>

ընտրությունների միջոցով, բայց քաղաքական վստահությունն ու սոցիալական համերաշխությունը մնացին խոցելի:

Ընդհանուր առմամբ, հետպատերազմական քաղաքական ճգնաժամը և 2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրությունները հերթական անգամ ցույց տվեցին, թե ինչպես է Հայաստանի ժողովրդավարական ուղեգիծը պարբերաբար վերաձևավորվում արտաքին (էկզոգեն) ցնցումների ազդեցությամբ: Արտահերթ ընտրությունները ծառայեցին որպես սահմանադրական մեխանիզմ՝ լեգիտիմության ճգնաժամից իշխանության դուրս գալու և կառավարման մանդատը վերականգնելու համար: Այդուհանդերձ, ավելի ընդգրկուն հետպատերազմյան շրջափուլը շարունակեց բնութագրվել քաղաքական բևեռացմամբ, հաշվետվողականության շուրջ չլուծված հարցերով և խրթին անվտանգային համատեքստով, ինչը շարունակում է վճռորոշ ազդեցություն ունենալ ներքին քաղաքականության, ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջնահերթությունների և քաղաքական բանավեճի սահմանների վրա:

Քաղաքական իրավիճակը 2021 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո

2021 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո Հայաստանը շարունակեց մնալ անցումային փուլում, որտեղ դեռ 2018 թվականի բարեփոխումային հավակնությունները համակցվում են աճող ինստիտուցիոնալ լարվածության և առավել ու ավելի բևեռացված քաղաքական միջավայրի հետ: Ընտրություններից հետո, իշխանության կոնսոլիդացիայի պայմաններում, վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդես է գալիս որպես քաղաքական համակարգի առանցքային դերակատար: Սա մի համակարգ է, որը ֆորմալ տեսանկյունից խորհրդարանական է, սակայն գործնականում՝ ընդգծված վարչապետակենտրոն: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության սահմանադրական մեծամասնությունը կառավարությանը հնարավորություն է տվել Ազգային ժողովում ընդունել առանցքային օրենսդրական

նախաձեռնություններ և կատարել նշանակումներ կարևորագույն վերահսկողական ու բարեվարքության մարմիններում՝ նվազագույն չափով ապավինելով ընդդիմության ծայրերին, ինչի հետևանքով նվազել է ընդդիմության կարողությունը՝ խորհրդարանական մեխանիզմներով ազդեցություն ունենալ որոշումների կայացման վրա:

Այսպիսի իրավիճակն իր անմիջական ազդեցությունն է ունեցել խորհրդարանի՝ որպես իշխանության անկախ ճյուղի դերակատարության վրա: Թեև ցանկացած ժողովրդավարական համակարգում խորհրդարանական մեծամասնության առկայությունը տվյալ համակարգի տրամաբանական ու բնական հատկանիշ է, Հայաստանում գործադիրի շուրջ իշխանության կենտրոնացումը նվազեցրել է օրենսդիր իշխանության անաչառ և բովանդակային վերահսկողությունը գործադիրի նկատմամբ: Այսպիսի պայմաններում խորհրդարանական արդյունավետ վերահսկողությունը դիսկ ունի դառնալու ավելի շատ ընթացակարգային գործառնություն, քան՝ բովանդակային, հատկապես քաղաքականապես զգայուն հարցերում, որտեղ քաղաքական մեծամասնությունը կարող է խուսափել կառավարության նախաձեռնությունները վիճարկելուց կամ դրանք էապես փոփոխելուց: Արդյունքում ձևավորվում է քաղաքական միջավայր, որտեղ զսպումների և հակակշիռների համակարգը սահմանափակ է²², և այն շարունակում է գործել գործադիր իշխանության ուժեղ գերիշխանության և բարձր կենտրոնացվածություն ունեցող քաղաքական վերահսկողության լույսի ներքո:

2021 թվականի արտահերթ ընտրություններից հետո ընկած ժամանակահատվածում դատական համակարգը մնացել է ամենավիճարկվող ոլորտներից մեկը: Երկարամյա մտահոգությունները, որոնք կապված են նախկին համակարգից ժառանգված կախվածությունների, մասնագիտական չափանիշների անհամաչափության և հանրային վստահության հարցերի հետ, շարունակում են ուրվագծել դատական բարեփոխումների շուրջ քննարկումները: Թեև մի շարք բարեփոխումների

22 CivilNet, «Փաշինյանի միանձնյա կառավարման ոճը վրանգ է Հայաստանի ժողովրդավարացման համար», առանց ամսաթվի՝ <https://www.civilnet.am/en/news/812299/pashin-yans-one-man-rule-threatens-armenias-democratic-development/>

նախաձեռնություններ և դոնոր կառույցների աջակցությամբ իրականացված ծրագրեր ուղղված են եղել դատական իշխանության ինստիտուցիոնալ անկախության և բարեվարքության ամրապնդմանը, արդարադատության համակարգը շարունակում է մնալ հանրային և քաղաքական կայուն ուշադրության ու քննադատության ներքո²³: Միաժամանակ այս ժամանակահատվածում իշխանության համար դժվար է եղել հավասարակշռել բարեփոխումային հավակնությունները և քաղաքական զսպվածությունը. արմատացած ցանցերն ու գործելակերպերը ապամոնտաժելու փորձերը առաջացրել են դատական իշխանության ներսից եկող դիմադրություն և հակազդեցություն, մինչդեռ գործադիր իշխանության ազդեցության՝ իրական կամ ընկալվող, չափազանց մեծ լինելը վտանգում է դատախարակական ոլորտում բարեփոխումների լեգիտիմությունը և խորացնում անաչառության վերաբերյալ հանրային կասկածները: Այս լարվածությունը նպաստել է մի երևույթի ձևավորման, որը բազմաթիվ դիտորդներ բնութագրում են որպես «հոգնածություն բարեփոխումներից», իսկ որոշ ոլորտներում կանգառի կամ հետընթացի նշաններ են ի հայտ եկել, հատկապես այն դեպքերում, երբ ինստիտուցիոնալ փոփոխությունը պահանջում է մասնագիտական կարողությունների երկարաժամկետ զարգացում և կայուն քաղաքական կոնսենսուս իրականացվող բարեփոխումների շուրջ, այլ ոչ թե հապճեպ քաղաքական միջամտություններ:

Ներքին ինստիտուցիոնալ դինամիկային զուգահեռ՝ 2021 թվականից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքական կողմնորոշումն անցել է տեսանելի վերաիմաստավորման փուլ՝ մեծամասամբ պայմանավորված հետպատերազմյան անվտանգային խոցելիություններով և առկա անվտանգային պայմանավորվածությունների սահմանափակումներով²⁴: Առանցքային միտ-

23 ԱլԳ Քաղաքացիական հասարակություն ֆորում, EoP Index 2023, PDF, հուլիս 2024՝ <https://eap-csf.eu/content/uploads/2024/07/EoP-Index-2023-.pdf>

24 Regional Center for Security Studies (RCSS), «Ռուսաստանից տարածություն պահպանելը՝ Հայաստանի հավասարակշռման քաղաքականության համալիրը», առանց ամսաթվի՝ <https://rcsp.am/en/entry/8241/distancing-from-russia-in-the-context-of-armenias-policy-of-strategic-balancing/>

ումներից մեկը եղել է Հայաստանի՝ Ռուսաստանից և Ռուսաստանի առաջնորդած Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ) ավանդական անվտանգային երաշխիքներից աստիճանական հրաժարումը: Հայաստանի պաշտոնատար անձինք հրապարակային կերպով բնութագրել են ՀԱՊԿ-ին Հայաստանի մասնակցությունը որպես փաստացիորեն «սառեցված», իսկ Հայաստանը դադարեցրել է անդամավճարների վճարումը և կասեցրել է մասնակցությունը ՀԱՊԿ համատեղ միջոցառումներին: ՀԱՊԿ-ի նկատմամբ վստահության այս անկումը մեծապես պայմանավորված է այն ընկալմամբ, որ դաշնակցային աջակցությունը բավարար չի եղել Ադրբեյջանի հարձակումների և անվտանգության ճնշման սրացման ընթացքում:

Այս վերակողմնորոշումը գործնական դրսևորում է ստացել նաև սահմանների կառավարման և ռուսական անձնակազմի ներկայության փոփոխության միջոցով: 2024 թվականին հաղորդվել է, որ ռուս սահմանապահները դուրս են բերվել Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանից²⁵. սա քայլ էր, որը Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների համատեքստում լայնորեն ընկալվել է որպես խորհրդանշական նշանակություն ունեցող: Հայաստանի կառավարության ներկայացուցիչները նաև հայտարարել են, որ ռուս սահմանապահները 2024 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ ավարտել են իրենց ծառայությունը և դուրս են բերվել Հայաստան-Իրան սահմանին գտնվող Ազարակի անցակետից՝ այդ վայրում սահմանային վերահսկողության գործառնությունները ամբողջությամբ փոխանցելով հայկական ուժերին: Փաշինյանի վարչակազմը ներպետական դաշտում այսօրինակ քայլերը ներկայացրել է որպես ինքնիշխանության և անվտանգային ինքնուրույնության ուժեղացման տարրեր՝ միաժամանակ ընդունելով, որ ավելի համակարգային կախվածությունները Ռուսաստանից շարունակում են պահպանվել:

25 Le Monde, «Հայաստանը 32 տարվա ընթացքում առաջին անգամ մասնակի վերահսկողություն է սրանձնում իր սահմանների նկատմամբ», 17 հոկտեմբերի 2024 թ.՝ https://www.lemonde.fr/en/international/article/2024/10/17/armenia-takes-partial-control-of-its-borders-for-the-first-time-in-32-years_6729628_4.html

Միաժամանակ, այս ժամանակահատվածում Հայաստանը ձգտել է խորացնել իր կապերը Եվրոպական միության և այլ գործընկերների հետ՝ կառավարման բարեփոխումներն ու միջազգային իրավական ներդաշնակեցումը դիտարկելով որպես արտաքին կապերի դիվերսիֆիկացման ավելի լայն ռազմավարության մաս: Հայաստանը 2024 թվականի փետրվարի 1-ից դարձել է Միջազգային քրեական դատարանի կանոնադրության կողմ²⁶: Սա աշխարհաքաղաքական հնչեղություն ունեցող քայլ էր՝ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացումները և արտաքին քաղաքականության ոլորտում Հայաստանի նախկին կողմնորոշումների օրինաչափությունները: Անվտանգության և պաշտպանության ոլորտում համագործակցության դիվերսիֆիկացման ուղղությամբ ջանքերը թեև անհամաչափ էին և ենթակա էին արտաքին սահմանափակումների, նույնպես ընդգրկվել են ավելի լայն դիվերսիֆիկացման գործընթացում:

Հարկավոր է նշել, որ վերոնշյալ տեղաշարժը և գործընթացներն ընթանում են դանդաղ և նրբանկատ ձևով: Հայաստանը շարունակում է պահպանել կառուցվածքային տնտեսական կապեր Ռուսաստանի հետ, իսկ Հայաստանի երկրորդ ամենախոշոր քաղաք Գյումրիում տեղակայված է ռուսական ռազմակայանը, ինչը սահմանափակում է Հայաստանի կառավարության արագ գործելու հնարավորությունները և բարձրացնում է կտրուկ աշխարհաքաղաքական մասնրի գինը: Զուգահեռաբար՝ արևմտյան անվտանգային երաշխիքների ծավալն ու հուսալիությունը մնում են անորոշ՝ հատկապես Ռուսաստանի կողմից հիբրիդային միջամտությունների համատեքստում, իսկ ներքաղաքական բևեռացումը կարող է ուժեղացնել արտաքին քաղաքական ուղղության շուրջ մրցակցությունն ու վիճարկումները: Արդյունքում, 2021 թվականից ի վեր Հայաստանի արտաքին քաղաքական ուղեգիծը կարելի է հասկանալ որպես հավասարակշռվածության հաստատմանը միտված մի վարժություն՝ ավելի մեծ

26 The Guardian, «Հայաստանը պաշտոնապես միանում է Միջազգային քրեական դատարանին՝ որպես Ռուսաստանի հանդեպ անբեման քայլ», 31 հունվարի 2024 թ.՝ <https://www.theguardian.com/world/2024/jan/31/armenia-formally-joins-international-criminal-court-in-snub-to-russia>

ինքնիշխանություն ստանալու և դիվերսիֆիկացված գործընկերություններ որոնելու փորձ, որի ընթացքում փորձ է կատարվում կառավարել ինստիտուցիոնալ խոցելիությանը սպառնացող վտանգները, անվտանգային մարտահրավերները և ժառանգված կախվածություններով պայմանավորված ռիսկերը:

Ընդհանուր առմամբ, 2021 թվականից հետո ընկած քաղաքական շրջափուլն արտացոլում է երկու ալիքների համադրություն: Ներքին կյանքում՝ օրենսդիր մարմնում սահմանադրական մեծամասնության պայմաններում գործադիրի գերիշխումը դժվարացրել է զսպումների և հակակշիռների համակարգի գործնական աշխատանքը և սրել ինստիտուցիոնալ անկախության շուրջ բանավեճերը, հատկապես դատական իշխանության և վերահսկողական մարմինների տիրույթում: Արտաքին աշխարհում՝ անվտանգային ցնցումները և տարածաշրջանային իրողությունների փոփոխությունը արագացրել են զգուշավոր, բայց էական արտաքին և անվտանգային քաղաքական վերադասավորումը: Այս մեկտեղված զարգացումները օգնում են հասկանալ, թե ինչու է Հայաստանի ժողովրդավարական փոխակերպումը դեռևս շարունակական. բարեփոխումների հավակնություններն ու ժողովրդավարական ձգտումները դեռևս առկա են, սակայն դրանք իրականացվում են մի միջավայրում, որը պայմանավորված է կենտրոնացված քաղաքական իշխանությամբ, ինստիտուցիոնալ խոցելիությամբ, բարեփոխումային «հոգնածությամբ» և պահպանվող աշխարհաքաղաքական անորոշությամբ:

Կուսակցական համակարգը և քաղաքական դերակատարները 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների նախաշեմին

Ներքաղաքական մթնոլորտը 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ

2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Հայաստանի ներքաղաքական միջավայրը ճնշված է երկու փոխկապակցված դինամիկաների ազդեցության ներքո: Առաջինը կառավարման, հաշվետվողականության և ազգային ինքնության շուրջ ներքին մրցակցության առավել սրացած փուլն է, որն իր զարգացումն է ապրել 2020 թվականի անվտանգային ցնցման, 2023 թվականին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության բռնի տեղահանության և պետական ինստիտուտների վրա շարունակվող ճնշման ֆոնին: Երկրորդն արտաքին զարգացումներով պայմանավորված օրակարգն է, որը կենտրոնացած է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքների, ինչպես նաև Ադրբեյջանի հետ՝ համապարփակ կարգավորման և խաղաղության պայմանագրին հասնելու շուրջ: Այս օրակարգը ներկայումս անմիջականորեն ազդում է ներքաղաքական լեգիտիմության շուրջ բանավեճերի, կուսակցությունների դիրքավորման և ընտրական խոսույթի ձևավորման վրա:

Խաղաղության գործընթացը բերել է շոշափելի դիվանագիտական տեղաշարժի, սակայն միաժամանակ «ներմուծել է» ներքաղաքական նոր լարվածություն: 2025 թվականի առաջին կեսից մինչև տարվա կեսը Հայաստանը և Ադրբեյջանը ազդարարել են խաղաղության պայմանագրի նախագծի շուրջ էական առաջընթացի մասին: Այդուհանդերձ, մնացած վիճահարույց կետերը՝ Ադրբեյջանի կողմից Հայաստանի սահմանադրության փոփոխությանը

վերաբերող հարցերը, երկկողմ սահմանազատումը, Ադրբեյջանի դեմ միջազգային դատական գանգատներից հրաժարումը, տարանցման կարգավորումները և այդ գործընթացների հաջորդականությունը, Հայաստանում շարունակում են ընկալվել որպես քաղաքականապես զգայուն հատկապես այն հանրային խմբերի շրջանում, որոնք հնարավոր զիջումները մեկնաբանում են ոչ թե որպես երկարաժամկետ խաղաղության և տարածաշրջանային կայունացման ուղի, այլ որպես ինքնիշխանության հաշվին իրականացվող զիջումներ:

Այս զգայուն հարցերը սրվեցին 2025 թ. օգոստոսի 8-ին Վաշինգտոնում տեղի ունեցած գագաթնաժողովից հետո, որի ընթացքում Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը և Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը՝ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ներկայությամբ, ստորագրեցին համատեղ հռչակագիր՝ հրապարակայնորեն պարտավորվելով շարժվել «Խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագրի» ստորագրման և վավերացման ուղղությամբ, ինչպես նաև հանդես եկան համատեղ կոչով, որով ազդարարեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի կառուցների լուծարումը: Հակամարտության կարգավորման առանձնահատկություններից մեկը կապակցվածության փաթեթի առանցքային դերն է, որը ներկայացվում է «(Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (Trump Route for International Peace and Prosperity, TRIPP) անվանմամբ²⁷: Վաշինգտոնյան գագաթնաժողովի շուրջ հրապարակումներն ու մեկնաբանությունները TRIPP-ը նկարագրում են որպես ռազմավարական տարանցիկ և ենթակառուցվածքային երթուղի, որը նախատեսված է ապահովելու Հայաստանի տարածքով Ադրբեյջանի հիմնական մասի կապը Նախիջևանի էքսկլավի հետ, իսկ ԱՄՆ-ին ուղիներ

զարգացման իրավունքները տրամադրվում են երկարաժամկետ՝ 99-ամյա ժամկետով: Վարչապետ Փաշինյանի վարչակազմի և Ազգային ժողովում իշխանական մեծամասնություն հանդիսացող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համար Վաշինգտոնի պայմանավորվածությունը ներկայացվում է որպես տարածաշրջանային խաղաղության, տնտեսական կապակցվածության, ռիսկերի նվազեցման և «միջազգայնացված զսպման» (internationalised deterrence) գործիք: Ընդդիմադիր քննադատների համար, սակայն, այն առաջ է բերում չլուծված հարցեր՝ կապված ինքնիշխանության, երթուղիների նկատմամբ վերահսկողության և արտաքին երաշխիքների կայունության հետ: Լրացուցիչ անորոշություն է առաջացնում նաև այն, թե արդյոք Միացյալ Նահանգների տարածաշրջանային ներգրավվածությունը շարունակական կլինի՝ Ռուսաստանի, Իրանի, Թուրքիայի և Չինաստանի մրցակցող տարածաշրջանային առաջնահերթությունների պայմաններում. սա մի հանգամանք է, որը տեղական որոշ վերլուծաբաններ պարբերաբար ընդգծում են՝ գնահատելով TRIPP-ի հնարավորություններն ու ռիսկերը:

Զուգահեռաբար Հայաստանի կառավարությունը ձեռնարկել է ֆորմալ քայլեր, որոնք Եվրոպական միության հետ ինտեգրումը դրել են քաղաքական օրակարգի կենտրոնում՝ ստեղծելով ներքին բարեփոխումների նոր սպասումներ: Ազգային ժողովը 2025 թ. մարտի 26-ին ընդունեց օրենք Հայաստանի ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին: Դրան զուգահեռ խորացել է նաև ԵՄ-Հայաստան համատեղ օրակարգերի ձևավորման շուրջ համագործակցությունը. Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը 2025 թ. հուլիսի 1-ին հայտարարեց Գործընկերության նոր օրակարգի շուրջ բանակցությունների ավարտի մասին, որը 2025 թ. դեկտեմբերին պաշտոնապես ստորագրվեց Բրյուսելում²⁸:

Այս քայլերը սրել են ներքաղաքական առանցքային երկընտրանքը՝ ինչպես (եթե ընդհանրապես

27 «Ադրբեյջանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի համատեղ հռչակագիրը Վաշինգտոնում կայացած հանդիպման արդյունքների վերաբերյալ»: 2025. Primeminister.am. 2025՝ <https://www.primeminister.am/en/press-release/item/2025/08/09/Nikol-Pashinyan-vis-it-US-declaration/>

28 «Հայաստան-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգ»: 2025՝ <https://www.mfa.am/en/press-releases/2025/12/03/Armenia-EU-StrategicAgenda/13649>

կա այդպիսի նպատակադրում) առաջ մղել եվրոպական բարեփոխումային ուղին՝ միաժամանակ կառավարելով անվտանգային ճնշումները, որոնք ազդում են համակարգային փոփոխությունների արժեքի, տեմպի և հնարավոր քաղաքական հակազդեցության վրա: ԵՄ-ի հետ ներդաշնակեցումն առաջ է բերում ինչպես գործնական, այնպես էլ մի շարք ռազմավարական հարցեր. գործնական առումով՝ իրավական ներդաշնակեցում, կարգավորումներ, սոցիալ-տնտեսական ազդեցություններ, իսկ ռազմավարական առումով՝ ինչպես վերանայել Ռուսաստանից արտաքին կախվածությունը՝ չհրահրելով Կրեմլի կողմից ապակայունացնող հակաճնշում: 2026 թվականի ընտրություններին ընդառաջ պրոեվրոպական նարատիվները ավելի ու ավելի հաճախ են մրցակցում հոռետեսական մեկնաբանությունների հետ, որոնք ԵՄ հետ մերձեցման գիծը ներկայացնում են որպես աշխարհաքաղաքական իմաստով դիսկային կամ տնտեսական առումով խաթարող ուղի (հաճախ հղում անելով Վրաստանի օրինակին), հատկապես երբ դրանք համադրվում են դեռևս բարդ անվտանգային միջավայրի հետ:

Հետևաբար, անվտանգությունն ու ինքնիշխանությունը շարունակում են մնալ առաջիկա խորհրդարանական ընտրություններին ընդառաջ քաղաքական մրցակցության գերիշխող թեման: Փաշինյանի կառավարության՝ անվտանգային ոլորտում համագործակցությունը դիվերսիֆիկացնելու ջանքերը՝ ընդլայնելով գործընկերությունները, օրինակ, Ֆրանսիայի և Հնդկաստանի հետ, ինչպես նաև ուսումնասիրելով ներգրավվածության հնարավորությունները ԵՄ-ի (Եվրոպական խաղաղության գործիքակազմի շրջանակում) և ՆԱՏՕ-ի գործընկերների հետ, ներկայացվում են որպես ռազմավարական ինքնուրույնությունը վերականգնելու քայլեր: Միաժամանակ, նույն քայլերը սնուցում են ներքաղաքական բանավեճը՝ դիվերսիֆիկացման տեմպի և իրատեսության, Ռուսաստանի հետ հարաբերությունների կառավարման, ինչպես նաև այն հարցի շուրջ՝ արդյոք Հայաստանի անվտանգային դիրքավորումը դառնում է ավելի դիմակայուն, թե՛ ավելի խոցելի: Այս անվտանգային շրջանակն արտացոլվել է նաև տեղական քաղաքական քննարկումներում՝

հատկապես տեսանելի լինելով համայնքային դինամիկայի և մոբիլիզացիայի համատեքստում, ինչպես, օրինակ, Գյումրիում և Երևանում, որտեղ տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները դարձան վաղ ազդակային փորձաքարեր՝ միտված հասկանալու ընտրողների պատրաստակամությունը աջակցելու այլընտրանքային թեկնածուներին անգամ այն պայմաններում, երբ ընդդիմությունը շարունակում է մնալ մասնատված և հաճախ անկարող՝ համախմբվելու մեկ միասնական թեկնածուի շուրջ:

Աշխարհաքաղաքական հարցերից զատ լավ կառավարման և իրավունքահեն օրակարգերի շուրջ բանավեճերը շարունակում են ձևավորել ներքին լեգիտիմության դաշտը: Ոստիկանության գործունեության, հաշվետվողականության և արդարադատության համակարգի վստահելիության վերաբերյալ մտահոգությունները մնում են քաղաքականապես զգայուն՝ հատկապես այն պատճառով, որ միջազգային գործընկերները դիտարկում են բարեփոխումների արդյունավետ իրականացումը որպես ավելի խորը համագործակցության նախապայման: Գործնականում քաղաքական բևեռացման պահպանման, ինչպես նաև այն ինստիտուցիոնալ միջավայրի պայմաններում, որտեղ բարեփոխումների իրականացումը անհամաչափ է, իրավունքի գերակայության շուրջ նարատիվները հաճախ վերածվում են գործիքի. կառավարությունը դրանցով հիմնավորում է իշխանության կոնսոլիդացիան՝ ի պատասխան ընկալվող արտաքին միջամտությունների կամ հակահեղափոխական ցանցերի, մինչդեռ ընդդիմադիրները կիրառվող մեխանիզմները մեկնաբանում են որպես ընտրովի կամ քաղաքականապես մոտիվացված:

Ներքին առանձնապես սուր բաժանարար գիծ է ձևավորվել ազգային ինքնության և կրոնի հարցի շուրջ: Թեև Սահմանադրության 18-րդ հոդվածը ճանաչում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու առանձնահատուկ դերը²⁹, 2025 թվականին քաղաքական մեծամասնության և բարձրաստիճան

29 «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն — Գրադարան — Հայաստանի Հանրապետության նախագահ» <https://www.president.am/en/constitution-2015/>

հոգևորականության հարաբերությունները դարձան քաղաքական բևեռացման տեսանելի նոր առանցք: Վարչապետ Փաշինյանը հրապարակայնորեն կոչ արեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդին հրաժարական տալ՝ հոգևոր ուխտը խախտելու մեղադրանքով, մինչդեռ ՀԱԵ առաջնորդները մերժեցին մեղադրանքները և տեղի ունեցածը ներկայացրեցին որպես հարված հոգևոր միասնությանը: Այս զարգացումներին հաջորդեց քաղաքացիական հասարակության մի շարք կազմակերպությունների և անհատների համատեղ հայտարարությունը՝ Հայաստանում վերջին զարգացումների վերաբերյալ լուրջ մտահոգությամբ: Հայտարարությունը ստորագրողները ահազանգում էին Սահմանադրության, իրավունքի գերակայության և հիմնարար իրավունքների ենթադրյալ խախտումների մասին՝ առանձնահատուկ շեշտադրելով պետության՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ինքնավարությանը ապօրինի միջամտությունը: Նրանք դատապարտեցին գործադիր և օրենսդիր իշխանությունների այն գործողությունները, որոնք իրենց գնահատմամբ հակասում են Հայաստանի օրենսդրությանը, կրոնի ազատության վերաբերյալ միջազգային չափանիշներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի մոտեցումներին, ներառյալ՝ պետական անվտանգության մարմինների կողմից հոգևորականների նկատմամբ գործադրված ենթադրյալ ճնշումները³⁰:

Ընդհանուր առմամբ, 2026 թվականի ընտրություններին ընդառաջ ձևավորված ներքաղաքական միջավայրը կարելի է բնորոշել որպես բարձր դիսկայնությամբ օժտված, արտաքին քաղաքական շեշտադրումներով և ներքին լեգիտիմության մրցակցությամբ լեցուն համակարգ: Խաղաղության գործընթացը և ԵՄ ուղղությամբ քայլերը ստեղծում են ռազմավարական հնարավորություններ, սակայն միաժամանակ առաջացնում են ներքաղաքական նոր բաժանարար գծեր՝ ինքնիշխանության, ազգային ինքնության, բարեփոխումների տեմպի և քաղաքական իշխանության բաշխման շուրջ: Ընտրություններին

30 ՀՀ-ների կոալիցիան դատապարտում է կառավարության ճնշումը եկեղեցու նկատմամբ՝ <https://www.civilnet.am/en/news/991430/coalition-of-ngos-condemns-governments-pressure-on-church/>

ընդառաջ առանցքային հանգամանքը ոչ միայն այն է, թե արդյոք Հայաստանը կշարունակի առաջ մղել ֆորմալ փոխհամաձայնությունները, այլ՝ արդյոք ինստիտուտները կկարողանան «վերնագրային» դիվանագիտությունն ու հայտարարված ռազմավարական դիվերսիֆիկացիան երկրի ներսում վերածել վստահելի և հասարակական աջակցություն վայելող կառավարման ու արդյունքների:

Ներկայիս խորհրդարանական համակարգի ընդհանուր նկարագիրը

Ինչպես արդեն քննարկվել է, Հայաստանում գործում է բազմակուսակցական խորհրդարանական համակարգ, սակայն սահմանադրական և ընտրական կարգավորումները զգալիորեն նպաստում են ուժեղ մեծամասնության ձևավորմանը: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Համաձայն Հայաստանի Հանրապետության սահմանադրության՝

«Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են Ընտրական օրենսգրքով³¹»:

Ի լրումն Ընտրական օրենսգրքին՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է կուսակցությունների իրավական կարգավիճակը և կարգավորում դրանց գործունեության հիմնական ուղղությունները՝ ներառյալ հիմնադրումը և պետական

31 Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 89-րդ հոդված:

գրանցումը, ներքին կառավարման կառուցակարգերը, իրավունքներն ու պարտականությունները, գույքային և ֆինանսատնտեսական գործունեությունը, ինչպես նաև կազմակերպական հարակից պահանջները³²: Այսպիսով, ֆորմալ առումով Հայաստանի կուսակցական համակարգը կարգավորվում է համեմատաբար համապարփակ իրավական շրջանակով, որը նպատակ ունի համակարգել բազմակուսակցական մրցակցությունը խորհրդարանական մոդելի պայմաններում:

Գործնականում, սակայն, ընտրական համակարգը հատուկ շեշտադրում է կատարում «կայուն մեծամասնություն» ապահովելու վրա, ինչը զգալի հետևանքներ ունի քաղաքական մրցակցության և ներկայացուցչության համար: Գործող կարգավորումների համաձայն՝ եթե ընտրությունների ընթացքում ամենաշատ մանդատ ստացած կուսակցությունը չի հասնում մանդատների 52%-ի շեմին, ապա այն կարող է ստանալ լրացուցիչ մանդատներ՝ այդ մակարդակին հասնելու համար: Եթե կոալիցիայի ձևավորումը չի ապահովում կայուն մեծամասնություն, ապա կարող է անցկացվել ընտրությունների երկրորդ փուլ՝ երկու առաջատար ուժերի միջև, որից հետո հաղթողը ստանում է «բռնուսային» մանդատներ՝ մեծամասնություն ապահովելու նպատակով: Այս մեխանիզմները նախատեսված են նվազեցնելու կառավարության ձևավորման հնարավոր ձգձգումները և քաղաքական փակուղու վտանգը: Միևնույն ժամանակ, դրանք կարող են թուլացնել համամասնական ներկայացուցչության տրամաբանությունը՝ ուժեղացնելով մեկ կուսակցության կողմից իրականացվող կառավարման մոդելը, սահմանափակելով կոալիցիա կազմելու խթանները և նվազեցնելով փոքր խորհրդարանական ուժերի ազդեցության լծակները: Վերլուծական առումով կարելի է ասել, որ այս մոդելը կառավարելիությունը գերադասում է ներկայացուցչությունից, և որոշակի դասավորությունների դեպքում կարող է հնարավորություն տալ, որպեսզի համեմատաբար

32 Տե՛ս Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ (ARLIS), «Օրենք/իրավական ակտ», առանց ամսաթվի՝ <https://www.arlis.am/hy/acts/110534>

ավելի մեծ ընտրական աջակցություն ունեցող կուսակցությունը ձևավորի մեկ կուսակցությունից բաղկացած կառավարություն:

Այս ինստիտուցիոնալ առանձնահատկությունները փոխազդում են կառավարման ավելի լայն դինամիկաների հետ՝ ներառյալ գործադիրում իշխանության կենտրոնացումը և այս համակարգում վարչապետի առանցքային դերը: Երբ դրանք համադրվում են խորհրդարանում սահմանադրական մեծամասնության հետ, «կայուն մեծամասնության» տրամաբանությունը կարող է առավել սահմանափակել խորհրդարանական վերահսկողության, միջկուսակցական բանակցությունների և համաձայնեցված քաղաքականության մշակման գործնական հնարավորությունները: Թեև 2018 թվականի հեղափոխությունից հետո խոստացվել էին բարեփոխումներ, մինչև 2018 թվականը ձևավորված այս կառուցվածքային առանձնահատկությունները հիմնականում պահպանվել են՝ սահմանելով, թե ինչպես է քաղաքական մրցակցությունը փոխակերպվում ինստիտուցիոնալ իշխանության, և դրանով իսկ սահմանափակելով խորհրդարանական որոշումների կայացման գործընթացում բազմակարծության արտացոլումը:

Այս ինստիտուցիոնալ միջավայրը որոշիչ ազդեցություն է ունեցել Հայաստանի կուսակցական համակարգի վերջին զարգացումների վրա: Խոչընդոտելով կոալիցիոն քաղաքականությունը և խրախուսելով միակուսակցական դոմինացիան՝ ընտրական համակարգը ազդում է ոչ միայն այն բանի վրա, թե ընտրությունների արդյունքում քանի կուսակցություն կարող է մուտք գործել խորհրդարան, այլ նաև՝ թե ինչպես են կուսակցությունները կազմակերպվում, ինչպես են իրականացնում քաղաքական պլանավորում, ինչպես են կառուցում ռազմավարություններ և ինչպես են գաղափարական իմաստով դիրքավորվում: Կուսակցությունների համար ձևավորվում են ուժեղ խթաններ՝ ընտրական արդյունավետություն ապահովող, առաջնորդակենտրոն մոբիլիզացիա իրականացնելու համար, այլ ոչ թե երկարաժամկետ ծրագրային զարգացման կամ կոալիցիոն պատրաստվածության ուղղությամբ աշխատելու համար: Հետևաբար

կուսակցական դաշտը հասկանալու համար անհրաժեշտ է կուսակցությունների վարքագիծն ու կազմակերպական ընտրությունները դիտարկել այն սահմանափակումների և խթանների շրջանակներում, որոնք ձևավորվում են ներկայիս սահմանադրական և ընտրական ճարտարապետության արդյունքում:

Անկախությունից ի վեր Հայաստանում ստեղծվել են մեծ թվով քաղաքական կուսակցություններ, որոնց զգալի մասը չի հասել խորհրդարանական ներկայացվածության և հիմնականում ակտիվացել է ընտրական շրջափոխերի ընթացքում: Անկախության վաղ շրջանում բազմաթիվ կուսակցություններ որդեգրել էին պահպանողական և ազգայնական դիրքորոշումներ՝ այն պայմաններում, երբ ազգայնականությունը դարձել էր կարևոր գաղափարական առանձնահատկություն, հատկապես այն կուսակցությունների համար, որոնք ձևավորվել էին Ղարաբաղյան շարժումից կամ սերտորեն առնչվել էին դրա հետ: Միևնույն ժամանակ, կուսակցական մրցակցությունը հաճախ կառուցվել է առավելապես անհատների շուրջ, այլ ոչ թե համահունչ գաղափարական հենքի կամ շարունակական քաղաքական օրակարգերի վրա, ինչն իր հերթին նպաստել է կուսակցությունների ինստիտուցիոնալացման ցածր մակարդակին և ծրագրային տարբերակվածության թույլ արտահայտվածությանը:

2018 թվականի Թավշյա հեղափոխությունն արձանագրեց էական տեղաշարժ քաղաքական խոսույթում՝ առաջնահերթ դարձնելով սոցիալական արդարության, լավ կառավարման և հակակոռուպցիոն օրակարգերը: Հեղափոխության ապակենտրոնացված բնույթը և քաղաքացիական մոբիլիզացիայի վրա հիմնված ընթացքը ավելի լայն հնարավորություններ բացեցին փոքր կուսակցությունների և ոչ ավանդական դերակատարների համար՝ հանրային քննարկումներում տեսանելիություն և ազդեցություն ձեռք բերելու առումով: Այդուհանդերձ գաղափարների և ակտիվիզմի մակարդակում բազմակարծության աճն ինքնին չի վերափոխվել խորհրդարանական բազմակարծության: Գործող ընտրական և սահմանադրական լուծումները շարունակում են

առավելություն տալ խոշոր, ավելի շատ ռեսուրսներ ունեցող կուսակցություններին և սահմանափակել փոքր դերակատարների կարողությունը՝ հանրային աջակցությունը վերածելու ինստիտուցիոնալ ներկայացվածության, ինչի արդյունքում ամրապնդվում է հաստատված քաղաքական ուժերի գերիշխումը³³:

Այս համատեքստում հաջորդ բաժինը ներկայացնում է հայկական քաղաքական կուսակցությունների ընդհանուր նկարագիրը՝ կենտրոնանալով դրանց գաղափարական ուղղվածության, տարածաշրջանային հարցերի շուրջ դրանց դիրքավորման և ծրագրային գործունեության վրա: Մեթոդաբանական սահմանափակումների պատճառով, մասնավորապես այս ուսումնասիրության շրջանակում նախապատրաստված հարցաթերթին ի պատասխան ստացված արձագանքների սահմանափակ քանակի պայմաններում, սույն գնահատումը մեծամասամբ հիմնվում է բաց աղբյուրների վրա՝ ներառյալ կուսակցությունների պաշտոնական հայտարարությունները, նախընտրական ծրագրերը, մեդիա լուսաբանումը և համապատասխան ակադեմիական կամ վերլուծական նյութերը: Թեև այս մոտեցումը կարող է ամբողջությամբ չարտացոլել ներկուսակցական գործընթացները կամ ռազմավարական մոտեցումները, այն, այդուհանդերձ, թույլ է տալիս Հայաստանի գործող կուսակցական համակարգի շրջանակներում իրականացնել կուսակցությունների քաղաքական կողմնորոշումների և կարողությունների համակարգված ու համադրելի քարտեզագրում:

Խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերը

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը բաղկացած է առնվազն 101 պատգամավորից, որոնք ընտրվում են համամասնական ընտրակա-

33 Տե՛ս Գոռ Մադոյան, «Դավիթն ու Գողթայթը. փոքր քաղաքական կուսակցությունները Հայաստանում», Heinrich Böll Stiftung (Թբիլիսի - Հարավային Կովկասի տարածաշրջան), 14 ապրիլի 2025 թ.՝ <https://ge.boell.org/en/2025/04/14/davitn-ow-gogiate-pokr-kowsakt-sowtyownnere-hayastanowm>

րզով հինգ տարի ժամկետով: Ընտրական կարգավորումները նախատեսում են հավելյալ մանդատների բաշխման հնարավորություն՝ ապահովելու համար, որ ընդդիմադիր ուժերը հավաքականորեն ունենան առնվազն 30 տոկոս խորհրդարանական մանդատներ: Գործնականում այս մեխանիզմը նպատակ ունի հավասարակշռել համամասնական ներկայացուցչության տրամաբանությունը սահմանադրական՝ «կայուն մեծամասնություն» ապահովելու մոտեցման հետ՝ միաժամանակ երաշխավորելով խորհրդարանական բազմակարծության նվազագույն մակարդակ:

2021 թվականի հունիսին տեղի ունեցած արտահերթ խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին 22 կուսակցություններ և կուսակցությունների 4 դաշինքներ: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ ձայների 53.9 տոկոսը և վերցրեց ԱԺ-ի 107 մանդատներից 71-ը՝ այսպիսով ապահովելով կայուն խորհրդարանական մեծամասնություն: Նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքը ստացավ ձայների 21.1 տոկոսը և 29 մանդատ՝ դառնալով ամենամեծ ընդդիմադիր ուժը խորհրդարանում: Նախկին նախագահ Սերժ Սարգսյանի և Արթուր Վանեցյանի (Ազգային անվտանգության ծառայության նախկին տնօրեն) «Պատիվ ունեմ» դաշինքը ստացավ ձայների 5.2 տոկոսը և ստացավ խորհրդարանական 7 մանդատ, թեև հետագայում այդ խմբակցության պատգամավորներից մեկը դուրս եկավ խմբակցությունից և դարձավ անկախ պատգամավոր: Միջազգային և տեղական դիտորդները ընտրությունները գնահատել են որպես մրցակցային և ընդհանուր առմամբ լավ կազմակերպված՝ չնայած առանձին մանր խախտումների վերաբերյալ հիշատակումներին: Այսպիսի պայմաններում ձևավորվեց ընդգծված խորհրդարանական կառավարող մեծամասնություն, ինչը հետագա շրջանում ազդեց օրենսդրական դիմամիկայի, վերահսկողական գործառնությունների իրականացման և ընդհանրապես՝ խորհրդարանական ու արտախորհրդարանական քաղաքական ուժերի փոխհարաբերությունների վրա:

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Հայաստանի իշխող և գերակա քաղաքական ուժն է և 2018 թվականին հաջորդած քաղաքական վերադասավարումների առանցքային հենասյունը: Կուսակցությունը հիմնադրվել է 2013 թվականին և գրանցվել 2015 թվականին կայացած հիմնադիր համագումարից հետո: Այն իշխանության է եկել Թավշյա հեղափոխությունից հետո և այդ ժամանակից ի վեր հաջորդական ընտրական հաղթանակների միջոցով ամրապնդել է իր քաղաքական դիրքերը: Գաղափարական առումով կուսակցությունը հաճախ դիրքավորվում է որպես կենտրոնամետ և բարեփոխումներին միտված՝ համադրելով հակաօլիգարխիկ ու հակակոռուպցիոն ուղերձները ընդհանուր առմամբ պրոեկտայական/պրոարևմտյան ուղղվածության հաղորդակցության հետ: Խորհրդարանական մեծամասնությունը կուսակցությանը հնարավորություն է տալիս ընդունել օրենքներ և առանց ընդդիմության ձայների անհրաժեշտության ազդել առանցքային ինստիտուտների պաշտոնատար անձանց նշանակումների վրա, ինչն ուժեղացնում է նաև գործադիր գործունեության շրջանակը, սակայն միաժամանակ առաջացնում է մտահոգություններ իշխանության գերկենտրոնացման և խորհրդարանական հակակշիռների համակարգի սահմանափակ արդյունավետության վերաբերյալ: Քաղաքական իմաստով «Քաղաքացիական պայմանագիր» կողմից ստանձնած քաղաքական գերիշխող դիրքը կուսակցությունը դարձնում է ընդդիմադիր մոբիլիզացիայի հիմնական թիրախ՝ անվտանգային և բարձր հանրային զգայունություն ունեցող ազգային հարցերի համատեքստում³⁴:

«Հայաստան» դաշինքը հանդիսանում է ներկայիս գումարման խորհրդարանի ամենախոշոր ընդդիմադիր միավորը և իրենից ներկայացնում է քաղաքական ուղերձներով ավելի պահպանողական ու անվտանգակենտրոն ուժերի համախմբում: Դաշինքը ղեկավարում է նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը և այն ընդհանուր առմամբ բնութագրվում է խաղաղության գործընթացում հնարավոր զիջումների նկատմամբ զգուշավոր դիրքորոշմամբ,

34 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, պաշտոնական կայք՝ <https://www.civilcontract.am/>

ինչպես նաև եվրոպական ինտեգրման նկատմամբ առավել զսպված մոտեցմամբ՝ միաժամանակ աշխատելով այն ընտրազանգվածների հետ, որոնք առաջնահերթ են համարում անվտանգությունը և կողմ են Ռուսաստանի հետ ավելի սերտ հարաբերություններին: Դաշինքի քաղաքական դերակատարությունը չի սահմանափակվում միայն իշխանության հետ խորհրդարանական հակադրմամբ. դաշինքը փորձում է ներկայանալ որպես առանցքային դերակատար ինչպես ինստիտուցիոնալ ընդդիմության, այնպես էլ ավելի լայն հանրային մոբիլիզացիայի դաշտում՝ կառավարության գործողությունները քննադատելով ազգային անվտանգության, ինքնության և 2020 թվականի պատերազմի հետևանքների դիտանկյունից: Կազմակերպական առումով դաշինքը ներառել է երեք կուսակցություններ՝ Հայ Յեղափոխական Դաշնակցություն (հիմնադրվել է 1890 թվականին՝ Թիֆլիսում), «Վերածնվող Հայաստան» (հիմնադրվել է 2021 թվականին և հետագայում՝ 2022 թվականի նոյեմբերին, դադարեցրել խորհրդարանական գործունեությունը), ինչպես նաև «Մեկ Հայաստան» կուսակցություն (հիմնադրվել է 2019 թվականին, իսկ հետագայում կորցրել է խորհրդարանական ներկայացվածությունը՝ կուսակցության հիմնադրի կողմից պատգամավորական մանդատից հրաժարվելու հետևանքով): Այս զարգացումները ցույց են տալիս ինչպես դաշինքի ընդգրկումությունը, այնպես էլ այն փոփոխականությունը, որը շարունակում է բնորոշել Հայաստանում կուլիցիոն հիմքով ձևավորվող ընդդիմադիր միավորումները³⁵:

«Պատիվ ունեմ» դաշինքը համեմատաբար փոքր խորհրդարանական ընդդիմադիր միավորում է՝ ազգային-պահպանողական և անվտանգակենտրոն մոտեցումներով, որի քաղաքական ինքնությունը մեծապես ձևավորվել է հետպատերազմյան նարատիվներով և պաշտպանության ու ազգային շահերի շուրջ կոշտ դիրքավորմամբ: Այն ասոցացվում է ԱԱԾ նախկին տնօրեն Արթուր Վանեցյանի և Հանրապետության նախկին նախագահ Սերժ Սարգսյանի հետ և ընդհանուր առմամբ դիրքավորվում է որպես առավել կոշտ պաշտպանական քաղա-

քականության ու Ռուսաստանի հետ ավելի սերտ քաղաքական համադրման կողմնակից: Դաշինքը ներառում է Հայաստանի Հանրապետական կուսակցությունը, որը հիմնադրվել է 1990 թ. ապրիլի 2-ին և պատմականորեն հանդիսացել է առանցքային իշխանական ուժ, ինչպես նաև «Հայրենիք» կուսակցությունը՝ հիմնադրված 2020 թ. մայիսի 30-ին Արթուր Վանեցյանի կողմից: Թեև դաշինքի խորհրդարանական կշիռը սահմանափակ է՝ համեմատած «Հայաստան» դաշինքի հետ, այն տեսանելի դեր ունի «կոշտ ընդդիմադիր գծի» դիրքավորումներն ուժեղացնելու գործում՝ հատկապես խաղաղության գործընթացի, 2020 թվականի պատերազմի արդյունքների մեկնաբանության, ինչպես նաև պետական ինքնիշխանության և անվտանգության ավելի լայն հարցերի շուրջ:

2021 թվականից ի վեր Հայաստանի խորհրդարանական կուսակցական դաշտն արտացոլում է մի համակարգ, որում առկա է կենտրոնացված իշխանական մեծամասնություն և միաժամանակ՝ ընդդիմություն, որն ունի ներկայացվածություն և քաղաքականապես ակտիվ է, սակայն կառուցվածքային առումով սահմանափակված է թե՛ իշխող ուժի մեծամասնությամբ, թե՛ ընդդիմադիր տարբեր ձևաչափերի միջև մասնատվածությամբ: Այս ամենը կարևոր հետևանքներ ունի խորհրդարանում օրենսդրական քննարկումների և խորհրդարանի կողմից իրականացվող վերահսկողական գործառնության համար. թեև Ազգային ժողովը պահպանում է իր ֆորմալ լիազորությունները և ունի բազմակուսակցական ներկայացվածություն, քաղաքական մրցակցությունը հաճախ տեղափոխվում է խորհրդարանից դուրս՝ հանրային մոբիլիզացիայի, փողոցային պայքարի և տեղեկատվական արշավների դաշտ, հատկապես բարձր հանրային զգայունություն ունեցող անվտանգային և ինքնության հարցերի շուրջ: Արդյունքում խորհրդարանական քաղաքականությունը և մշակույթը ձևավորվում են ոչ միայն մանդատների պարզ բաշխմամբ, այլ նաև լեգիտիմության շուրջ ավելի լայն մրցակցությամբ, ինչը շարունակում է բնորոշել 2021 թվականից հետո ձևավորված Հայաստանի քաղաքական միջավայրը:

35 «Հայաստան» դաշինք, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://xn--y9afw8bd4f.xn--y9a3aq/en>

Արտախորհրդարանական քաղաքական ուժերի պատկերը

Արտախորհրդարանական կուսակցությունները շարունակում են մնալ Հայաստանի ներկայիս քաղաքական դաշտի կառուցվածքային իմաստով կարևոր տարրերից մեկը: Համամասնական, կուսակցական ցուցակներով ընտրակարգը հնարավորություն է տալիս մեծ թվով կուսակցությունների գրանցվել և մասնակցել ընտրություններին, սակայն «կայուն մեծամասնության» տրամաբանությունից բխող հետևանքները ու համեմատաբար բարձր ընտրական շեմերը հանգեցնում են նրան, որ բազմաթիվ քաղաքական ուժեր առավել ակտիվանում են միայն ընտրական շրջափուլերում և դժվարությամբ են հանրային տեսանելիությունը վերածում խորհրդարանական ներկայացվածության: 2021 թվականի արտահերթ ընտրությունները, որոնց, ինչպես արդեն նշեցինք, մասնակցեցին 22 կուսակցություններ և կուսակցությունների 4 դաշինքներ, հստակ վերահաստատեցին այս դինամիկան. մասնակցող ուժերի լայն շրջանակը վկայում էր քաղաքական հայտի ներկայացման մակարդակում առկա բազմակարծության մասին, մինչդեռ ընտրությունների արդյունքները և մանդատների վերջնական բաշխումը ընդգծեցին համակարգի թերությունները:

Յուրաքանչյուր ժողովրդավարական խորհրդարանական համակարգում արտախորհրդարանական դերակատարները կարևոր են, և նրանց գործունեությունը էական նշանակություն ունի առնվազն երեք հիմնական պատճառներով: Նախ՝ նրանք ձևավորում են հանրային քաղաքական խոսույթը՝ շրջանառության մեջ դնելով քննարկման թեմաներ և քաղաքական հարցադրումներ, որոնք խորհրդարանական ուժերը կարող են շրջանցել կամ օգտագործել ըստ նպատակահարմարության (օրինակ՝ կառավարման բարեփոխումներ, հակակոռուպցիոն օրակարգ, սոցիալական քաղաքականություն, արտաքին քաղաքական դիվերսիֆիկացիա): Երկրորդ՝ դրանք հաճախ հանդես են գալիս որպես ապագա խորհրդարանական հավակնորդների բազա՝ հատկապես այն պայմաններում, երբ կուսակցությունների

ինստիտուցիոնալացումը ցածր մակարդակի վրա է, իսկ կուսակցությունների դաշինքները հաճախ են փոփոխվում: Երրորդ՝ նրանք կարևոր դեր են խաղում տեղական ինքնակառավարման, համայնքային կոալիցիաների և տեղական մակարդակի հարցերի շուրջ մոբիլիզացիայի գործընթացներում, որոնք հաջողության դեպքում կարող են ծառայել որպես ազգային մակարդակում ազդեցություն ձեռք բերելու լավ մեկնարկային հարթակ: Սա հատկապես տեսանելի է վերջին տարիներին Երևան քաղաքի քաղաքական կյանքում, որտեղ ազգային մակարդակում արտախորհրդարանական հանդիսացող որոշ կուսակցություններ այդուհանդերձ կարողանում են իրական ազդեցություն ձեռք բերել՝ քաղաքային ավագանու կազմում ներկայացվածության և կոալիցիոն բանակցությունների միջոցով:

Արտախորհրդարանական այսպիսի դաշտում առաջին շերտը ձևավորում են «ավանդական» կամ պատմականորեն նշանակալի ուժերը, որոնք պահպանում են իրենց մարդկային կապիտալը, անվան/բրենդի ճանաչելիությունը և, որոշ դեպքերում, կայուն կազմակերպական ենթակառուցվածքները: Այս կատեգորիայի դասական ներկայացուցիչ է, օրինակ, Հայ ազգային կոնգրեսը³⁶. այն ձևավորվել է 2008 թվականին՝ որպես կուսակցությունների դաշինք, և 2013 թվականին գրանցվել է որպես կուսակցություն՝ Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ղեկավարությամբ: Նրա ներկայիս դերակատարումը ներքաղաքական կյանքում նվազել է՝ պայմանավորված խորհրդարանական ներկայացվածության բացակայությամբ: Այդուհանդերձ, ընդդիմադիր շրջանակներում կուսակցությունը շարունակական դերակատարություն է ունեցել, ինչպես նաև բազմիցս ցուցաբերել է քաղաքական դաշտ վերադառնալու կարողություն այն պահերին, երբ պետականության, լեգիտիմության և ռազմավարական կողմնորոշման հարցերը դարձել են քաղաքականապես բարձր զգայունություն ունեցող օրակարգ:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը հիմնադրվել է 2004 թվականին գործարար

36 Հայ ազգային կոնգրես, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://anc.am/>

Գագիկ Ծառուկյանի կողմից, ներկայացնում է մեկ այլ կազմակերպական մոդել՝ մասնավոր բիզնեսի վրա հենված և ցենտրիստական-պահպանողական դիրքավորում ունեցող: Տարբեր փուլերում այս կուսակցությունը հանդես է եկել որպես խոշոր խորհրդարանական ուժ և «որոշիչ» դերակատար կոալիցիոն ֆորմատներում: Թեև 2018 թվականից հետո այս կուսակցության ազդեցությունը զգալիորեն նվազել է, այն շարունակում է մնալ ճանաչելի քաղաքական բրենդ՝ ժամանակ առ ժամանակ մոբիլիզացիոն կարողությամբ և որոշակի տեղական ցանցերով, և շարունակաբար հիշատակվում է Հայաստանի կուսակցական համակարգի փոփոխականության վերաբերյալ վերլուծություններում: Թեև Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)³⁷ և Հայ Յեղափոխական Դաշնակցությունը (ՀՅԴ/Դաշնակցություն)³⁸ ներկայումս խորհրդարանում ներկայացված են ավելի լայն դաշինքների միջոցով (այսինքն՝ դասական իմաստով «արտախորհրդարանական» չեն), դրանք շարունակում են մնալ ինքնուրույն քաղաքական կազմակերպություններ՝ սեփական ենթակառուցվածքներով, տարածքային գրասենյակներով, սիյուրքի հետ կապերով (մասնավորապես՝ ՀՅԴ-ի պարագայում) և երկարաժամկետ գաղափարական ինքնություններով: Նրանց ներկայացուցիչները, անկախ խորհրդարանական մանդատների քանակից, շարունակում են ձևավորել ընդդիմադիր նարատիվներ, ակտիվ մասնակցում են արտաքին քաղաքական ուղղվածության և անվտանգության շուրջ բանավեճերին:

Ավանդական և պատմական քաղաքական դերակատարների կողքին Հայաստանի քաղաքական դաշտում ներկայումս առկա են նաև բարեփոխումներին միտված և պրոեվրոպական ուղղվածությամբ կուսակցություններ, որոնք ունեն տեսանելիություն և քաղաքական հստակ դիրքավորում, սակայն գործող ընտրական կարգավորումների պայմաններում դրանք

37 Հայաստանի Հանրապետական կուսակցություն, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <http://www.hhk.am/en/>

38 Հայ Յեղափոխական Դաշնակցություն, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://www.arfd.am/eng/>

դեռևս դժվարանում են այդ տեսանելիությունը և դիրքավորումը վերածել խորհրդարանական մակարդակում կայուն ներկայացվածության:

«Հանրապետություն» կուսակցությունը³⁹, որը հիմնադրվել է 2001 թվականին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը լքած նախկին անդամների և «Երկրապահ» կամավորական միության հետ կապ ունեցող գործիչների մասնակցությամբ և ներկայումս ղեկավարվում է նախկին վարչապետ Արամ Զավենի Սարգսյանի կողմից: Կուսակցությունը 2018 թվականից ի վեր խորհրդարանական ներկայացվածություն չի ունեցել, սակայն շարունակում է քաղաքական առումով ակտիվ մնալ՝ իր հստակ ու ճանաչելի պրոարևստյան դիրքորոշման և տեղական ինքնակառավարման մակարդակում գործնական ներգրավվածության շնորհիվ: Կուսակցությունը 2023 թվականին Երևան քաղաքի ավագանիում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ կոալիցիոն պայմանավորվածություն կնքեց, ինչը կարևոր է, քանի որ դա ցույց է տալիս, թե ինչպես ձևավորված համայնքային կոալիցիաները կարող են որոշակիորեն փոխհատուցել խորհրդարանական մակարդակում ներկայացվածության բացակայությունը՝ ապահովելով ինչպես ինստիտուցիոնալ լծակներ, այնպես էլ կուսակցության կազմակերպական գործունեության շարունակականություն:

Նմանատիպ, սակայն ավելի սահմանափակ իրավիճակում է «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը⁴⁰, որը հիմնադրվել է 2015 թվականի դեկտեմբերին և ղեկավարվում է Էդմոն Մարտիրոսյանի կողմից (ով 2012 թվականին առաջին անգամ ընտրվել է Ազգային ժողովի անկախ պատգամավոր): «Լուսավոր Հայաստանը» շարունակում է հանրային-քաղաքական ակտիվություն պահպանել և ունի միջազգային ամուր կապեր (ALDE-ի անդամ է), սակայն ներկայումս չունի ներկայացվածություն ոչ Ազգային ժողովում, ոչ էլ համայնքային ավագանիներում, ինչը սահմանափակում է կուսակցության կողմից

39 «Հանրապետություն» կուսակցություն, Ֆեյսբուքյան էջ, առանց ամսաթվի՝ <https://www.facebook.com/hanrapetutyunparty/?locale=hy-AM>

40 «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://www.brightarmenia.am/en/1/home.htm>

օրակարգ ձևավորելու ինստիտուցիոնալ ուղիները և կուսակցության ազդեցությունն ավելի կախված է դարձնում մեդիա ներկայությունից և որոշակի թեմաների շուրջ հանրային դիրքավորումից: Միևնույն ժամանակ վերջին շրջանում կուսակցության կողմից Հայաստանի ԵՄ-ի հետ ավելի խորը ներգրավվածության վերաբերյալ թերահավատ շեշտադրումները նույնպես արտացոլում են, թե ինչպես անվտանգային մարտահրավերները և բևեռացված աշխարհաքաղաքական բանավեճերը կարող են անգամ եվրոպական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերին դրդել վերափոխազդելու և նոր լույսի ներքո դիտարկել իրենց քաղաքական նարատիվները:

Արտախորհրդարանական դաշտի պրոարևմտյան հատվածում մի շարք կուսակցություններ պահպանում են հստակ ռազմավարական դիրքավորում, որը հանրային քննարկումների վրա ազդեցություն է ունենում նույնիսկ այն պարագայում, երբ դրանց ընտրազանգվածն այս պահին դեռևս սահմանափակ է:

«Հանուն Հանրապետության» կուսակցությունը⁴¹, որը հիմնադրվել է 2020 թվականի սեպտեմբերի 20-ին՝ նախկին պատգամավոր Արման Բաբաջանյանի կողմից, դիրքավորվում է որպես պրոեվրոպական և աջ ցենտրիստական ուղղվածության ուժ, որի օրակարգը կենտրոնացած է ժողովրդավարական բարեփոխումների, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության, եվրատլանտյան ինտեգրման վրա, ինչպես նաև Հայաստանի՝ ՀԱՊԿ-ից և Եվրասիական տնտեսական միությունից դուրս գալու գործողությունների վրա:

«Հայաստանի եվրոպական կուսակցությունը»⁴² հիմնադրվել է 2018 թվականի նոյեմբերի 6-ին՝ հանրային գործիչ Տիգրան Խզմալյանի կողմից: Այս կուսակցությունը նույնպես արտահայտում է լիբերալ պրոեվրոպական մոտեցումներ և, չնայած սահմանափակ ընտրական կշիռ ունի, պահպանում

41 «Հանուն Հանրապետության» կուսակցություն, Ֆեյսբուքյան էջ, առանց անսաթվի՝ https://www.facebook.com/Hanunhanrapetutyancparty/?locale=hy_AM

42 Հայաստանի եվրոպական կուսակցություն, Ֆեյսբուքյան էջ, առանց անսաթվի՝ <https://www.facebook.com/armeuroparty/>

է իր տեսանելիությունը հանրային քննարկումներում: Նշված կուսակցությունները առաջ են մղում «ռազմավարական շրջադարձի» մոտեցումները, և այդպիսով ազդում են ավելի լայն հանրային խոսույթի վրա նույնիսկ այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ ներկայացվածություն չունեն խորհրդարանում կամ ՏԻՄ մարմիններում:

Քաղաքական դերակատարների մի առանձին խումբ ձևավորվել կամ ակտիվացել է 2020 թվականի պատերազմից հետո՝ առաջնորդվելով ինքնիշխանության, անվտանգության և հաշվետվողականության խոսույթներով: Այսպիսի քաղաքական միավորների շարքում էին «5165 ազգային պահպանողական շարժումը», որը հիմնադրվել է 2021 թվականին՝ Կարին Տոնոյանի կողմից, ինչպես նաև «Ինքնիշխան Հայաստան» կուսակցությունը, որը հիմնադրվել է 2021 թվականի ապրիլին՝ Դավիթ Սանասարյանի կողմից (Վարչապետի աշխատակազմի Պետական վերահսկողական ծառայության նախկին ղեկավար): Այս կազմավորումները գործել են քաղաքական խիտ միջավայրում, որտեղ «կոշտ անվտանգային» հարցերը բարձր հանրային զգայունություն ունեին: Այս կուսակցությունների համար դժվար էր ապահովել կազմակերպական կայունություն՝ առանց համապատասխան մարդկային ռեսուրսների, ֆինանսավորման, խորհրդարան մուտք գործելու գործունե հնարավորության կամ կայուն համայնքային հենարանների: Միաժամանակ, քաղաքացիական ակտիվիզմից և շարժումային տրամաբանությունից ի հայտ եկած կուսակցություններն էլ շարունակում են իրենց գործունեությունը: Որպես այս խմբի օրինակ նշենք «Քաղաքացու որոշումը», որը հիմնադրվել է 2018 թվականի նոյեմբերին՝ ձախակողմյան մի խումբ ակտիվիստների կողմից: Այս կուսակցությունն ունի քաղաքացիական ակունքներ և ներկայացնում է հետհեղափոխական քաղաքացիական էներգիան կուսակցական կազմակերպության վերածելու փորձ: Նման կուսակցությունները, ընդհանուր առմամբ, բախվում են մասշտաբի, ռեսուրսների և երկարաժամկետ ինստիտուցիոնալացման խնդիրների հետ:

Վերջին շրջանում արտախորհրդարանական դաշտը ընդլայնվել է նաև նոր քաղաքական ձևավորումների

և 2020 թվականից հետո ի հայտ եկած քաղաքական ակտիվիզմի շնորհիվ՝ արտացոլելով Հայաստանի կուսակցական միջավայրի շարունակական փոփոխականությունը, ինչպես նաև «իշխանություն-ավանդական ընդդիմություն» առանցքից դուրս այլընտրանքների պահանջարկը: Ակնառու օրինակ է «Նոր ուժ» կուսակցությունը⁴³, որը հիմնադրվել է 2024 թվականի մայիսին և ղեկավարվում է Երևանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի կողմից, ով նախկինում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ էր: Կուսակցությունը դիրքավորում է իրեն որպես սոցիալ-դեմոկրատական, պրոեվրոպական ուժ՝ պաշտպանելով արևմտյան արժեքները, սոցիալական արդարությունը, սոցիալական ապահովության համակարգի ընդլայնումը, հակակոռուպցիոն քայլերը, սփյուռքի ներգրավվածությունը և Հայաստանի ազատ շուկայական տնտեսության զարգացումը՝ միաժամանակ ազդարարելով պրագմատիկ հարաբերությունների անհրաժեշտություն Ռուսաստանի, Միացյալ Նահանգների, Հնդկաստանի և Չինաստանի հետ: Թեև կուսակցությունը ներկայումս չունի խորհրդարանական ներկայացվածություն, և առաջիկա ընտրություններին դրա մասնակցության ու ծրագրային փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը սահմանափակ է, այս կուսակցությունը փորձ է կատարելու քաղաքային մակարդակում գեներացված բողոքական տրամադրությունները և համայնքային մակարդակում ձեռք բերած տեսանելիությունը վերածել ազգային ընտրական առաջարկի՝ դիրքավորվելով որպես կենտրոնամետ-առաջադեմ այլընտրանք թե՛ իշխող ուժին, թե՛ ավանդական ընդդիմադիր բլոկներին:

Վերջապես, որոշ կուսակցություններ ընտրում են աստիճանական զարգացման մոդելը՝ տեղական ընտրությունների և նպատակային ընտրազանգված ձևավորելու միջոցով: «Ապրելու երկիր» կուսակցությունը⁴⁴, որը ղեկավարում է նախկին պատգամավոր Մանե Թանդիլյանը, 2021 թվականից

43 Helix Consulting LLC. 2024. «Նոր ուժ» ռեֆորմիստական քաղաքական կուսակցության կանոնադրություն և ծրագիր»: Azdarar.am. 2024՝ <https://personal-legal-old.azdarar.am/announcements/cat/505/01527894/>

44 «Ապրելու երկիր» կուսակցություն, պաշտոնական կայք, առանց անսաթվի՝ <https://www.apreluyerkir.am/en/>

ակտիվ է տեղական ընտրություններում: Սա արտացոլում է այն մոտեցումը, երբ կուսակցությունը փորձում է կառուցել իր քաղաքական ընկալումը համայնքային ներգրավվածության և «թեմատիկ բրենդավորման» միջոցով՝ առանց ազգային մակարդակում անմիջապես բեկում ապահովելու ակնկալիքի:

Հայաստանի արտախորհրդարանական քաղաքական դաշտի մեկ այլ բնորոշ առանձնահատկություն են «հովանոցային» կոալիցիաները և «բևեռային» քաղաքական միավորների առկայությունը, որոնք գործում են որպես մոբիլիզացիոն հարթակներ և իրենցից ներկայացնում են փոքր դերակատարների միջև ուժերի համադրման ավելի լայն փորձեր: Այս ձևաչափի օրինակ է «Ազգային ժողովրդավարական բևեռը», որը ձևավորվել է 2020 թվականին և ներառում է «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունն ու «Ազգային առաջընթաց» կուսակցությունը: Հանրային աղբյուրներում նշվում է նաև այս միավորման հետ առնչվող մեկ այլ ձևաչափ՝ «Ազգային ժողովրդավարական դաշինք/առանցք»-ը, որը ստեղծվել է 2020 թվականի մայիսի 4-ին՝ 16 քաղաքական գործիչների մասնակցությամբ, և որի հետագա գործունեությունը զգալիորեն պայմանավորվել է 2020 թվականի պատերազմի⁴⁵ շուրջ ձևավորված ընդդիմադիր նարատիվներով: Նման կոալիցիաները սովորաբար բախվում են արդյունավետ համակարգման բարդությունների, առաջնորդության շուրջ մրցակցությանը և այն խնդրին, թե ինչպես մոբիլիզացիան վերածել կայուն կուսակցաշինության և երկարաժամկետ կազմակերպական կառուցվածքի:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի արտախորհրդարանական դաշտը միաժամանակ «խիտ» է և տեսանելի. այն արտացոլում է քաղաքական առաջարկի ձևավորման ոլորտում բազմակարծություն, սակայն գործում է այնպիսի ինստիտուցիոնալ պայմաններում, որում խորհրդարանական ներկայացվածության շուրջ պայքարը հիմնականում ընթանում է մի քանի դերակատարների

45 «Ազգային ժողովրդավարական բևեռի հայտարարություն»: Ajbever. 30 դեկտեմբերի 2022 թ.՝ <https://ajbever.com/azgayin-zhog-hovrdavaran-bewerhi-khorhdi-haytararowt-yowne/>

միջև: Այդ պատճառով բազմաթիվ կուսակցություններ ազդեցության լծակներ են որոնում այլ ուղիներով՝ համայնքային քաղաքականության մեջ ակտիվ ներգրավվածությամբ, մեդիա ներկայությամբ, քաղաքացիական մոբիլիզացիայով և տարբեր դաշինքային փորձարկումներով՝ նպատակ հետապնդելով ստեղծել նախապայմաններ, որոնք թույլ կտան հաղթահարել խորհրդարան մտնելու շեղումը: Այս դերակատարների քարտեզագրումը կարևոր է ոչ միայն որպես սոսկ արտախորհրդարանական ուժերի արձանագրում, այլ նաև որպես ի հայտ եկող օրակարգերի, հնարավոր ապագա քաղաքական վերադասավորումների և Հայաստանի ժողովրդավարական վերափոխման փուլում քաղաքական այլընտրանքների և հանրային պահանջարկի փոփոխության կարևոր ցուցիչ:

Նոր քաղաքական շարժումները և այլ քաղաքական դերակատարները

2026 թվականի խորհրդարանական ընտրություններին նախորդող շրջանում Հայաստանի քաղաքական դաշտում նկատվում է նոր քաղաքական շարժումների ստեղծման ալիք: Զուգահեռաբար պահպանվում է նաև այն նորաստեղծ կուսակցությունների ակտիվությունը, որոնք հիմնականում աճ են արձանագրել մեդիակենտրոնացվածության արդյունքում առաջացած մոբիլիզացիայի և համայնքային քաղաքականության շնորհիվ: Այս զարգացումներն արտացոլում են երկու զուգահեռ միտում. (ա) կայուն պահանջարկ «նոր այլընտրանքների» նկատմամբ, որը դուրս է ձևավորված իշխանություն-ընդդիմություն ավանդական առանցքից, և (բ) կուսակցական միջավայրի բարձր փոփոխականություն, որի պայմաններում քաղաքական շարժումները հաճախ մեկնարկում են որպես քաղաքացիական նախաձեռնություն կամ ոչ ֆորմալ շարժում՝ նախքան կուսակցական ձև ստանալը:

Նոր և առավել տեսանելի մուտք ունեցած դերակատարներից մեկը «**ՄԵՐ ձևով**» շարժումն է, որը հանրային դաշտում կապվում է ռուսաստանահայ

գործարար **Սամվել Կարապետյանի**⁴⁶ հետ: Կարապետյանը ձեռքակալվել է 2025 թվականի հունիսին. նրա նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը, որը 2025 թվականի դեկտեմբերի 30-ին փոխվել է տնային կալանքի: Շարժումը հանրային կերպով իրեն ներկայացնում է որպես կամավորական, ոչ ֆորմալ միավորում՝ շեշտադրելով հանրային ծառայությանը միտված գործելակերպը՝ ոչ թե դասական կուսակցական կառուցվածքը, միաժամանակ ընտրություններին ընդառաջ դիրքավորվելով որպես լուրջ քաղաքական հավակնորդ: 2026 թվականի հունվարի սկզբին շարժման աջակիցները փաստացիորեն ինստիտուցիոնալացրեցին այս շարժումը՝ գրանցելով «**Ուժեղ Հայաստան**»⁴⁷ քաղաքական կուսակցությունը, ինչը վկայում է հանրային մոբիլիզացիայից դեպի ինստիտուցիոնալ մասնակցության անցման մասին: Նոր կուսակցությունը սկսել է իր հանրային արշավը կառուցել տնտեսական վերականգնման և պետական կարողությունների ամրապնդման շուրջ՝ ներկայացնելով հինգ քայլերից բաղկացած տնտեսական ծրագիր, որը շեշտադրում է վերաարդյունաբերականացումը, աշխատատեղերի ստեղծումը և արտաքին վարկային կախվածության նվազեցումը: Այս դիրքավորումը փորձ է՝ համադրելու «տեխնոկրատական տնտեսական ուղեբանները» ավելի լայն՝ գործող իշխանության նկատմամբ քննադատական քաղաքական խոսույթի հետ, ինչը կարող է արձագանք գտնել այն ընտրողների շրջանում, որոնք տարիներ շարունակ անվտանգային ցնցումներով և քաղաքական բևեռացմամբ պայմանավորված միջավայրում առավելապես փնտրում են կառավարման կանխատեսելիություն և գործունակություն:

Երկրորդ բարձր տեսանելիություն ունեցող նախաձեռնությունը «**Միասնության թևեր**»-ն է, որը նախաձեռնվել է Մարդու իրավունքների նախկին պաշտպան Արման Թաթոյանի կողմից. նա հայտարարել է, որ մտադիր է մասնակցել 2026

46 «Մեր ձևով» շարժում, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://merdzevov.org/>
47 Factor.am, «Հոդված. «Մեր ձևով» շարժման անդամները հիմնադրել են «Ուժեղ Հայաստան» կուսակցությունը. ովքեր են կառավարման մարմնի անդամները» <https://factor.am/974980.html>

թվականի ընտրություններին և հանդես է գալիս որպես վարչապետի թեկնածու⁴⁸: Նախաձեռնության մասնակիցների կազմում նշվում է նաև Պետական եկամուտների կոմիտեի նախկին նախագահ Դավիթ Անանյանը: Քաղաքական իմաստով Թաթոյանի քայլը նշանակալի է, քանի որ դա փորձ է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեության հիմքի վրա կառուցված հանրային կերպարը փոխակերպել քաղաքական կերպարի: Նախաձեռնության ընտրական առումով կենսունակ լինելը կախված կլինի ոչ այնքան Թաթոյանի ճանաչելիությունից (որը նա ունի), որքան նրանից, թե արդյոք նախաձեռնությունը կկարողանա ներկայիս ներքաղաքական համակարգում ձևավորել կուսակցական ենթակառուցվածք, ապահովել վստահելի թեկնածուների հավաքագրում և ստեղծել տարածքային ներկայություն:

Երրորդ ուժը, որն օժտված է ավելի սահմանափակ ազդեցությամբ և տեսանելիությամբ, «**ՆԺԱՐ**» սահմանադրական շարժումն է⁴⁹, որը մեկնարկել է 2025 թվականին հանրային գործիչ Գարեգին Միսկարյանի, իրավապաշտպան Նինա Կարապետյանի և գործարար Արտաշես Իկոնոմովի կողմից: «ՆԺԱՐ»-ը վարչապետի թեկնածու է առաջադրել Նինա Կարապետյանին և դիրքավորվում է որպես ուժ, որը հանդես է գալիս «դեպի օրինականություն վերադարձի» և սահմանադրական կարգի վերականգնման օգտին՝ միաժամանակ հնչեցնելով քննադատական գնահատականներ գործող կառավարման և ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ: Վերլուծական տեսանկյունից «ՆԺԱՐ»-ը բնորոշում է որպես Հայաստանի հետպատերազմյան քաղաքականության ավելի լայն միտումներից մեկը՝ «սահմանադրականության վերականգնման» նարատիվների վերաակտիվացումը որպես քաղաքական բրենդավորման միջոց, հատկապես այն դերակատարների շրջանում, որոնք փորձում են տարբերակվել թե՛ գործող իշխանությունից, թե՛

48 PanARMENIAN.Net, «Հոդված. Թաթոյանը կզլխավորի «Միասնության թևեր»-ը 2026 թվականի ընտրությունում»՝ <https://panarmenian.net/m/en/news/326944>
49 «Բոլորին դեմ եմ» շարժում, Ֆեյսբուքյան էջ, առանց ամսաթվի՝ <https://www.facebook.com/profile.php?id=61579767788247>

նախկին ռեժիմի հետ ասոցացվող ընդդիմությունից:

2026 թվականի սկզբին հանրային դաշտում ներկայացվեց ևս մեկ նախաձեռնություն՝ «**Բոլորին դեմ եմ**»-ը, որը հայտարարեց, որ նախատեսում է կուսակցություն գրանցել 2026 թվականի փետրվարի 1-ին և մասնակցել առաջիկա խորհրդարանական ընտրություններին⁵⁰: Շարժման ուղեբանները բացահայտ «հակահամակարգային» են. դրանց կենտրոնում դրված են ինստիտուցիոնալ բարեփոխումների առաջարկներ, օրինակ՝ խորհրդարան անցնելու շեղումը և քվեաթերթիկում «բոլորին դեմ» տարբերակի ներդրումը, որը թույլ կտա ընտրողներին պաշտոնապես մերժել ներկայացված ցուցակները: Անգամ եթե այս նախաձեռնությանը ընտրական աջակցությունը սահմանափակ լինի, այն ուշագրավ է այն պատճառով, որ քաղաքական մրցակցությունը ձևավորվում է ոչ թե առանձին ուժերի միջև ընտրության, այլ ողջ քաղաքական ընտրանու՝ «էլիտաների» նկատմամբ դժգոհության շուրջ: Սա, իր հերթին, կարող է դիտարկվել որպես ավելի խորքային ժողովրդավարական լեգիտիմության բաց և ներկայացվածության պակասի ընկալման ցուցիչ:

Այս նոր շարժումների և կուսակցությունների շարքում «**ԴՕԿ**» կուսակցությունը ներկայացնում է քաղաքական մեկ այլ մոդել՝ ձևավորված թվային մոբիլիզացիայի և հակահամակարգային առավել կոշտ ու առճակատող հռետորաբանության շուրջ: Կուսակցությունը հիմնադրվել է 2022 թվականին և սկզբնական շրջանում առաջնորդվել է Հայաստանի ոստիկանության նախկին սպա, վիդեոբլոգեր Վարդան Ղուկասյանի կողմից (հանրահայտ «DOG» մականվամբ), ով միգրացիոն վարույթի շրջանակում ներկայումս Միացյալ Նահանգներում պահվում է վարչական կալանքի տակ:

Ընդհանուր առմամբ նոր կուսակցությունների ու քաղաքական շարժումների, ինչպես նաև վերջին շրջանում հիմնադրված կուսակցությունների թվի աճը չպետք է մեկնաբանվի պարզապես որպես բազմակարծության դրսևորում: Հայաստանի

50 Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայան (Azatutyun), «Հոդված. «Բոլորին դեմ եմ» շարժումը կուսակցություն է դառնում. կմասնակցի խորհրդարանական ընտրություններին»՝ <https://www.azatutyun.am/a/33662481.html>

ինստիտուցիոնալ միջավայրում, որտեղ ռեսուրսները, մեդիա էկոհամակարգերը և ընտրական խթանները նպաստում են խոշոր քաղաքական միավորների գաղափարների առաջնությունը, առանցքային հարցը այն է, թե այս նոր ի հայտ եկող նախաձեռնություններից որոնք կկարողանան մոբիլիզացիան վերածել կայուն կազմակերպվածության, վստահելի թեկնածուների ցուցակների, կայուն ֆինանսավորման և տարածքային ցանցերի: Նույնիսկ այն նախաձեռնությունները, որոնք կարող են չհաղթահարել խորհրդարան մտնելու շեղումը, կարող են մնալ ազդեցիկ: դրանք կարող են վերափոխվել օրակարգերը, ճնշում գործադրել խորհրդարանական դերակատարների վրա՝ նոր քաղաքական խոսույթներ որդեգրելու միջոցով, և տեղական մակարդակում ձևավորել կոալիցիաներ ու դառնալ կարևոր գործոններ՝ այդպիսով ազդելով Հայաստանի քաղաքական կյանքի ընթացքի վրա:

Կուսակցությունների գաղափարական դիրքավորումը, արտաքին քաղաքականության հիմնահարցեր և ծրագրային մրցակցություն

Գաղափարական մոտեցումներ և կուսակցությունների դիրքավորումներ

Սույն և հաջորդ գլուխների համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով մշակվել և համապատասխան քաղաքական կուսակցություններին էր ուղարկվել նպատակային հարցաթերթիկ՝ միտված առաջնային աղբյուրից՝ կուսակցություններից ստանալու կառուցվածքային իմաստով համադրելի մանրամասն տվյալներ: Մի շարք հիշեցումներից և հետադարձ կապ հաստատելու փորձերից հետո, ցավոք պետք է արձանագրենք, որ կուսակցությունների մեծ մասը

հարցաթերթիկը չլրացրեց կամ չարձագանքեց մեր հարցումներին: Սա սահմանափակել է առաջնային աղբյուրից տեղեկատվության հասանելիությունը և նվազեցրել է ուսումնասիրության կիրառական հնարավորությունները՝ հետևողական ձևով արտացոլելու կուսակցությունների ձևակերպված առաջնահերթությունները, մոտեցումները և կարևորություն ներկայացնող հարցերի շուրջ ռազմավարական դիրքավորումները:

Հետազոտական գործընթացը հավելյալ սահմանափակվել է նաև պաշտոնական փաստաթղթերի անհավասար մատչելիության հետևանքով: Կուսակցությունների մի մասը կամ չի հրապարակում ամբողջական կանոնադրությունները, իր ծրագրերը և հստակ ձևակերպված քաղաքական մոտեցումները, կամ դրանք հրապարակում է դրվագային ձևով՝ չապահովելով շարունակականություն և այնպիսի կառուցվածքով, որը թույլ կտար դրանք հեշտությամբ համադրել: Արդյունքում՝ տվյալ գլխում ներկայացվող վերլուծությունը հիմնականում հիմնված է հանրայնորեն հասանելի նյութերի, պաշտոնական հայտարարությունների, մեդիա հարցազրույցների, հաղորդագրությունների և այլ բաց աղբյուրների ուսումնասիրության վրա, որոնց միջոցով փորձ է կատարվել իրականացնել կուսակցությունների գաղափարական դիրքավորման գնահատում: Թեև բաց աղբյուրներում առկա տեղեկությունները կարևոր պատկերացում են տալիս հանրային դաշտում կուսակցությունների կողմից ներկայացվող նարատիվների վերաբերյալ, դրանք չեն կարող փոխարինել կուսակցական համակարգված ծրագրերը և, հետևաբար, այս էական մեթոդաբանական սահմանափակումը պետք է դիտարկվի արդյունքների մեկնաբանման ընթացքում:

Նշված սահմանափակումների պայմաններում կուսակցական ծրագրերի և տարբեր քաղաքական հարցերի շուրջ հանրային դիրքավորումների ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել գաղափարական կողմնորոշումների ընդհանուր քարտեզագրում՝ հաշվի առնելով, որ Հայաստանում գաղափարական հոսանքները հաճախ խաչաձևվում են առաջնորդակենտրոն մոբիլիզացիայի, անվտանգային խոսույթների և կուսակցությունների աշխարհաքաղաքական դիրքավորման հետ:

Աջ	Ձախ	Կենտրոնամետ	Կենտրոնամետ-աջ	Կենտրոնամետ-ձախ
Հայաստանի Հանրապետական Կուսակցություն	Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	Արդար Հայաստան կուսակցություն	Հայրենիք կուսակցություն	Հայ Հեղափոխական Դաշնակցություն
Միավորված Հայաստան կուսակցություն		Հայ Ազգային Կոնգրես	Բարգավաճ Հայաստան կուսակցություն	Նոր Ուժ կուսակցություն
“5165” ազգային պահպանողական շարժում	Հայաստանի Կոմունիստական Կուսակցություն	Քաղաքացիական պայմանագիր	Ապրելու երկիր	Ազգային առաջընթաց կուսակցություն
Սասնա Ծռեր	Հանրային Ձայն	Լուսավոր Հայաստան Կուսակցություն	Մայր Հայաստան կուսակցություն	Բոլորին դեմ եմ կուսակցություն
		Հանրապետություն կուսակցություն	Մեր ձեռք շարժում/ Ուժեղ Հայաստան կուսակցություն	
		Հայաստանի Եվրոպական Կուսակցություն		
		Հանուն Հանրապետության կուսակցություն		
		Մեկ Հայաստան		
		Ինքնիշխան Հայաստան		

Անկախությունից հետո Հայաստանում կուսակցությունների ձևավորումն ու քաղաքական մրցակցությունը մեծապես կառուցվել են աջակողմյան, պահպանողական և ընդգծված ազգայնական օրակարգերի շուրջ: Սա պայմանավորված էր թե՛ ստեղծված անվտանգային միջավայրով, թե՛ 1990-ականների սկզբի Ղարաբաղյան շարժման քաղաքական ժառանգությամբ: Ժամանակի ընթացքում «ազգային անվտանգությունը», ազգային ինքնության վերաբերյալ մոտեցումները և ավանդական արժեքները հաճախ ծառայել են որպես իշխող կոալիցիաների և խոշոր խորհրդարանական դերակատարների հիմնական լեգիտիմացման շրջանակ՝ երկրորդ պլան մղելով սոցիալ-տնտեսական քաղաքականության շուրջ ծրագրային կայուն տարբերակվածության ձևավորումը⁵¹: 2000-ականներին ձևավորվեցին

նաև ծախսակողմյան և սոցիալական ուղղվածություն ունեցող կուսակցություններ, սակայն դրանցից շատերը ևս պահպանեցին ազգայնական շեշտադրումներ՝ արտացոլելով անվտանգության թեմայի՝ որպես համատարած քաղաքական հենակետի գերակշռությունը:

2018 թվականից հետո հանրային և քաղաքական խոսույթում ավելի լայն դաշտ բացվեց կառավարման բարեփոխումների, հակակոռուպցիոն օրակարգի, սոցիալական արդարության և հանրային ծառայությունների որակի բարձրացման թեմաների համար: Միևնույն ժամանակ, 2020 թվականից հետո ձևավորված իրավիճակը՝ պայմանավորված պատերազմով, կորուստներով և խորքային անվտանգային անհանգստություններով, կրկին առաջնահերթ դարձրեց «կոշտ անվտանգության» խոսույթը և սրեց բևեռացումը՝ դժվարացնելով կայուն ծրագրային բաժանարար գծերի ձևավորումը: Գործնական առումով Հայաստանի կուսակցական համակարգում պահպանվում է գաղափարական որոշակի անհավասարակշռություն: Ազգայնական

51 Sten Gor Madoyan, «Դավիթն ու Գողիաթը. փոքր քաղաքական կուսակցությունները Հայաստանում», Heinrich Böll Stiftung (Թբիլիսի – Հարավային Կովկասի տարածաշրջան), առանց ամսաթվի՝ <https://ge.boell.org/en/2025/04/14/davitn-ow-gogiate-pokr-kowsaktsowtjownnere-hayastanowm>

ուղղվածության ուժերը հիմնականում կենտրոնացած են աջ հատվածում, մինչդեռ առավել խիտ և մրցակցային դաշտը ցենտրիստական-աջ հատվածն է, որտեղ մի քանի կուսակցություններ մրցակցում են ընդհանուր առմամբ լիբերալ և/կամ պրոեվոկական ընտրազանգվածի համար: Ձախ հատվածը թվաքանակով ավելի փոքր է, սակայն գաղափարական առումով բազմազան՝ ներառելով սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական և սոցիալ-լիբերալ հոսանքներ: Այնուամենայնիվ, ձախ ուղղության ուժերի կազմակերպական համախմբումը և ընտրական ներկայացվածության «փոխակերպումը» շարունակում են մնալ անհամաչափ և ոչ կայուն:

Ավելի նոր նախաձեռնությունները սկսել են վերաձևավորել գաղափարական դաշտը՝ սոցիալ-տնտեսական ուղերձները համադրելով ազգային ինքնության և ինքնիշխանության խոսույթների հետ: Վերջին կարևոր զարգացումներից է «Մեր ձևով» շարժումը, որը հանրային դաշտ մուտք գործ 2025 թվականի օգոստոսի վերջին և հետագայում՝ 2026 թվականի հունվարին դարձավ «Ուժեղ Հայաստան» կուսակցություն: Շարժման հրապարակային խոսույթում շեշտադրվում են հայրենիքին ծառայելու և հասարակական նոր զարթոնքի գաղափարները, ինչպես նաև աջակցությունը Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարությանը: Միաժամանակ, շարժման քաղաքական հաղորդակցություններում աստիճանաբար առաջին պլան է մղվում տնտեսական «վերականգնման» շրջանակը՝ ներառյալ հինգ քայլերից բաղկացած ծրագիրը, որը կենտրոնացած է վերարդյունաբերականացման և աշխատատեղերի ստեղծման վրա⁵²: Քաղաքական մրցակցության մակարդակում շարժումը դարձել է նաև Հայաստանի աշխարհաքաղաքական կողմնորոշման վերաբերյալ մրցակցող խոսույթներ գեներացնող առանցքային դերակատարներից մեկը: Կառավարությանը մոտ դիրքավորվող գործիչներն ու մեկնաբանները այն ներկայացնում են որպես հնարավոր «հարթակ»՝ Հայաստանում Մոսկվայի ազդեցությունը վեր-

ականգնելու համար, մինչդեռ շարժման ներկայացուցիչները հրապարակային կերպով պնդել են ինքնիշխանության վրա հիմնված մոտեցման կարևորությունը՝ առաջնահերթ համարելով առանց քաղաքական կախվածության տնտեսական համագործակցությունը⁵³:

Ընդհանուր առմամբ Հայաստանում գաղափարական բաժանարար գծերը իրական են, սակայն հաճախ երկրորդական են դառնում առաջնորդության գործոնի, անվտանգային դիրքավորման և արտաքին ուղղվածության վերաբերյալ քննարկումների համատեքստում: Հետևաբար, կուսակցական դաշտում համատեղվում են ճանաչելի գաղափարական մոտեցումները, որոնք հիմնականում պայմանավորված են բարձր պրագմատիզմով, դաշինքների փոփոխականությամբ և քաղաքական խոսույթներով: Սա անմիջական նշանակություն ունի ուսումնասիրության հաջորդ գլուխների համար. կուսակցությունների դիրքավորումները գնահատելիս անհրաժեշտ է հստակ տարբերակել՝ (ա) ձևական գաղափարական հայտարարությունները, (բ) ժամանակի ընթացքում պահպանվող քաղաքականության բովանդակությունը, և (գ) իրավիճակային հոեոտորաբանությունը, որը ձևավորվում է անմիջական անվտանգային ճնշումների և բևեռացված քաղաքական մրցակցության ազդեցության արդյունքում:

Կուսակցությունների դիրքավորումները տարածաշրջանային հարցերի և ԵՄ հետ հարաբերությունների շուրջ

Հայաստանի կուսակցությունների տարածաշրջանային (աշխարհաքաղաքական) դիրքավորումն ավելի ու ավելի հաճախ արտահայտվում է բաժանարար գծերի միջոցով: Դրանք ներառում

52 *Stu Armenian Mirror-Spectator*, «Armenian Mirror-Spectator, 18 հոկտեմբերի, 2025», PDF, 18 հոկտեմբերի, 2025 թ., <https://mirrorspectator.com/wp-content/uploads/2025/10/Armenian-Mirror-Spectator-October-18-2025.pdf>

53 Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայան (Azatutyun), «Հողված. Սամվել Կարապետյանի կուսակցությունը ընտրել է ՀՀ վարչապետի թեկնածուին», առանց ամսաթվի, <https://www.azatutyun.am/a/33660554.html>

են մոտեցումներ Ռուսաստանի առաջնորդած անվտանգային և ինտեգրացիոն ձևաչափերի նկատմամբ (հատկապես՝ ՀԱՊԿ և ԵԱՏՄ), ակնկալիքներ Եվրոպական միությունից (և ընդհանրապես՝ արևմտյան գործընկերություններից), TRIPP-ի շուրջ վերջերս ձևավորված հայ-ամերիկյան պայմանավորվածությունների գնահատականներ, ինչպես նաև իրար հակադարձող ընկալումներ բարձր դիսկայնությամբ անվտանգային միջավայրում «ինքնիշխանության» մասին: Գործնականում կուսակցությունների մեծ մասը համախմբված է երեք հիմնական ուղղվածությունների շուրջ՝ պրոարևմտյան, պրոռուսական կամ «բազմակետոր/հավասարակշռված»: Այդուհանդերձ, այս որակումները հաճախ ավելի պայմանական են և խաչվում են առաջնորդակենտրոն մոբիլիզացիայի և անվտանգային նարատիվների հետ, քան հիմնվում են կայուն, լիարժեք հաշվարկված քաղաքական հարթակների ու ռազմավարությունների վրա:

Հարկավոր է նշել, որ այս գլխում ներկայացվող գնահատականները նույնպես անխուսափելիորեն սահմանափակված են նախորդիվ նկարագրված մեթոդաբանական սահմանափակումներով: Շատ կուսակցություններ հրապարակում են սահմանափակ ծրագրային փաստաթղթեր, իսկ մյուսները մեծապես ապավինում են հարցազրույցներին, մամուլի հայտարարություններին և քարոզչական ուղերձներին: Արդյունքում արտաքին քաղաքական դիրքավորումը հաճախ ներկայացվում է ոչ թե պաշտոնական հիմնավոր դոկտրինով, այլ ազդակներով՝ արձագանքներ կարևոր դիվանագիտական զարգացումներին, խորհրդարանում քվեարկությունների ընթացքում ցուցաբերված վարքագիծ, Ռուսաստանի/ՀԱՊԿ/ԵԱՏՄ թեմայով հանրային կարծիքներ, ինչպես նաև լեզվական ձևակերպումները, որոնք կիրառվում են Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման կամ ՀՀ-ԵՄ ինտեգրման մասին խոսելիս:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իրեն ներկայացնում է որպես կշռադատված դիվերսիֆիկացման ռազմավարություն իրականացնող քաղաքական ուժ՝ նպատակ ունենալով նվազեցնել Հայաստանի

կախվածությունը որևէ մեկ արտաքին դերակատարից և գործընկերությունների շրջանակը ընդլայնել «քչից դեպի շատ» տրամաբանությամբ⁵⁴: Թեև կուսակցության կանոնադրությունն ու ծրագիրը միշտ չէ, որ առաջարկում են հստակ գաղափարական «ուղենիշներ», 2021 թվականից ի վեր կառավարման պրակտիկան գնալով ավելի ակնհայտ է դարձրել ինքնիշխանության ամրապնդումը դիվերսիֆիկացման միջոցով, ինչը, միաժամանակ, թուլացրել է Հայաստանի ավանդական անվտանգային կախվածությունը Ռուսաստանից: Այս վերադիրքավորումն առանձնապես արագացավ մի շարք ճգնաժամերից հետո, որոնց ընթացքում հայկական ղեկավարությունը հայտարարում էր, որ Ռուսաստանը և ՀԱՊԿ-ը չեն ապահովել համարժեք անվտանգային աջակցություն: Այս գործընթացի տրամաբանական հանգրվանը դարձավ Հայաստանի կողմից ՀԱՊԿ-ում մասնակցության սառեցումը և ֆինանսական հատկացումների դադարեցումը՝ 2024 թվականին մասնակցությունը «սառեցնելու» մասին հայտարարությունից հետո⁵⁵: Չուսուցանաբար կառավարությունը ավելի համակարգված և ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրեց Եվրամիության ուղղությամբ ջանքերը: 2025 թվականի սկզբին⁵⁶ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և քաղաքացիների նախաձեռնությամբ (ժողովրդավարական ուժերի կոալիցիայի կողմից) խորհրդարան ներկայացվեց ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկը նախատեսող օրինագիծը, իսկ օրենքն ընդունվեց և ուժի մեջ մտավ 2025 թվականի ապրիլին: «Քաղաքացիական պայմանագիր»-ը արտաքին քաղաքականության եվրոպական ուղղությունը ձևակերպում է որպես երկարաժամկետ՝ չափորոշիչների և ստանդարտների վրա հիմնված

54 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Ծրագիր», առանց ամսաթվի՝ <https://www.civilcontract.am/program>

55 Reuters, «Հայաստանը սառեցնում է մասնակցությունը Ռուսաստանի առաջնորդությամբ անվտանգության բլոկին, ասում է վարչապետը», 23 փետրվարի 2024 թ.՝ <https://www.reuters.com/world/asia-pacific/armenia-freezes-participation-russia-led-security-bloc-prime-minister-2024-02-23/>

56 CivilNet, «Հանրային ստորագրահավաքից հետո Հայաստանի կառավարությունը ԵՄ անդամակցության նախաձեռնությունն ուղարկում է խորհրդարան», առանց ամսաթվի՝ <https://www.civilnet.am/en/news/811595/armenian-government-forwards-eu-membership-initiative-to-parliament-following-public-petition/>

ուղեգրի, այլ ոչ թե Ռուսաստանի հետ գործող տնտեսական պայմանավորվածությունների կտրուկ խզում: Նիկոլ Փաշինյանը հրապարակայնորեն նշել է, որ ԵՄ անդամակցությունը ռազմավարական նպատակ է, մինչդեռ ԵԱՏՄ-ից դուրս գալը չի ներկայացվում որպես անմիջական օրակարգային քայլ⁵⁷: Եվրամիության ուղղությամբ քաղաքական ներգրավվածությունը ամրապնդվել է նաև բարձր մակարդակի շփումներով, այդ թվում՝ 2025 թվականի հուլիսին կայացած ԵՄ-Հայաստան առաջնորդների հանդիպմամբ, ինչպես նաև հետագա ԵՄ-Հայաստան ձևաչափերում ստորագրված համագործակցության նորացված օրակարգով:

Իշխող կուսակցությունից գատ ներկայումս առկա է կուսակցությունների պրոեվրոպական մեծ ընտրանի, սակայն դրանց ինստիտուցիոնալացվածություն մակարդակն անհավասար է: «Հանուն Հանրապետության» կուսակցությունը, «Հանրապետություն» կուսակցությունը և այլ դերակատարներ ԵՄ-ին ինտեգրումը ներկայացնում են ոչ միայն որպես նպատակակետ, այլ նաև որպես կառավարման բարեփոխումների, իրավունքի գերակայության ամրապնդման և տնտեսական արդիականացման գործիք: Նրանց դերը հատկապես տեսանելի դարձավ քաղաքացիական վերոնշյալ հանրային նախաձեռնության շրջանակում, երբ հավաքվեցին անհրաժեշտ ստորագրությունները և ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկն ազդարարող օրինագիծը մտավ խորհրդարանի պաշտոնական օրակարգ՝ ցուցադրելով, թե ինչպես կարող են արտախորհրդարանական դերակատարները անգամ առանց խորհրդարանական ներկայացվածության ձևավորել օրակարգ և առաջ մղել քաղաքական նախաձեռնություններ:

«Հանուն Հանրապետության» կուսակցության ներկայացուցչի գնահատմամբ՝ Հայաստանի եվրոպական ինտեգրումը չափազանց կարևոր է ոչ միայն որպես Հայաստանի՝ ԵՄ անդամ պետություն դառնալու վերջնարդյունք, այլ առավելապես որպես այդ ճանապարհին անհրաժեշտ բարեփոխումների

57 ARKA News Agency, «ԵԱՏՄ-ից դուրս գալը Հայաստանի նպատակ է, սակայն ԵՄ անդամակցությունը՝ այո, ասում է վարչապետը», առանց ամսաթվի՝ <https://arka.am/en/news/politics/leaving-eaeu-is-not-armenia-s-goal-but-eu-membership-is-prime-minister/>

իրականացում: Ինչ վերաբերում է Հայաստանի անդամակցությանը Եվրասիական տնտեսական միությանը, ընդգծվում է, որ միաժամանակ և՛ ԵԱՏՄ-ին, և՛ ԵՄ-ին անդամակցել հնարավոր չի լինի. հետևաբար Հայաստանը պետք է հստակ լուծի այս հարցը և, ինչն առավել կարևոր է, հաղթահարի ռուսական տնտեսությունից ունեցած կախվածությունը: Նշվել է, որ այդ նպատակով անհրաժեշտ է ավելի համակարգված աշխատանք իրականացնել գործարար հատվածի հետ և հայկական շուկան պատրաստել ԵՄ չափանիշներին ու պահանջներին համապատասխանեցնելու համար. նման քայլերն արդեն սկսվել են, սակայն դրանք բավարար չեն և պետք է էապես ակտիվացվեն: Հայաստան-Թուրքիա հարաբերությունների մասով կուսակցությունն առանձնակի կարևորություն է տալիս կարգավորման օրակարգին՝ ընդգծելով, որ դա խաղաղության պահպանման տեսանկյունից այլընտրանք չունեցող մոտեցում է: Այդ համատեքստում, նրանց գնահատմամբ, լրացուցիչ աշխատանք և ջանքեր են անհրաժեշտ թե՛ իշխանությունների, թե՛ ընդդիմության կողմից, սակայն վերջինս, ըստ ներկայացուցչի, ներկայումս ավելի շատ խոչընդոտներ է ստեղծում⁵⁸: Կուսակցության ներկայացուցիչը նաև ընդգծել է հանրային ընկալումների փոփոխության կարևորությունը, որը պահանջում է երկարատև ու հետևողական աշխատանք, ինչպես նաև ժամանակ:

«Հանրապետություն» կուսակցությունը ևս դասվում է պրոեվրոպական կուսակցությունների հոսքին, իսկ դրա տեղական մակարդակում ազդեցությունը՝ մասնավորապես Երևանի կառավարման ձևաչափերում, ցույց է տալիս, թե ինչպես համայնքային քաղաքականությունը կարող է դառնալ ազգային օրակարգի, նարատիվների և հնարավոր կոալիցիաների ձևավորման այլընտրանքային հարթակ: Նշենք, որ Ազգային ժողովի կողմից ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի ընդունումը նախաձեռնվեց հաջող քաղաքացիական գործընթացի շնորհիվ՝ խորհրդարանում չներկայացված քաղաքական ուժերի ակտիվ մասնակցությամբ: Մասնավորապես,

58 Տեղեկավորությունը վերցված է «Հանրապետության համար» կուսակցության ներկայացուցչի հետ հարցազրույցից:

ԵՄ անդամակցության նախաձեռնությունը պաշտոնապես մեկնարկեց քաղաքացիների օրենսդրական նախաձեռնության ձևաչափով՝ «Ժողովրդավարական ուժերի հարթակ» կոչվող արտախորհրդարանական ուժերի խմբի կողմից (ներառյալ՝ «Հանուն Հանրապետության», «Եվրոպական կուսակցություն», «Հանրապետություն» կուսակցություն), որը հավաքեց ավելի քան 50,000 ստորագրություն՝ ԵՄ անդամակցության գործընթացի մեկնարկի մասին օրենքի նախագիծ առաջարկելու համար, ինչից հետո նախաձեռնությունը ստացավ կառավարության և խորհրդարանի աջակցությունը⁵⁹:

Մինևույն ժամանակ, կարևոր է չգերազանահատել «պրոեվրոպական ճամբարի» միասնականությունն ու գաղափարական համաչափությունը: Շատ կուսակցություններ չունեն պարբերաբար թարմացվող քաղաքական փաստաթղթեր, իսկ դիրքորոշումները հաճախ արտահայտվում են առանձին իրադարձությունների վերաբերյալ մեկնարանությունների միջոցով: Բացի այդ, մի շարք ուժերի համար ԵՄ օրակարգը ներկայացվում է ոչ այնքան որպես աշխարհաքաղաքական շրջադարձ, որքան որպես ներքին բարեփոխումների գործիք՝ արժեքավոր այն պատճառով, որ ապահովում է արդյունավետության չափորոշիչներ և արդիականացման «լծակներ», այլ ոչ թե այն պատճառով, որ դա ինքնին անվտանգության երաշխիք է ապահովում: Օրինակ, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության ղեկավար Դ. Սանասարյանի գնահատմամբ՝ Հայաստանին անհրաժեշտ են ավելի շատ եվրոպական ռազմավարական գործընկերներ, օրինակ՝ Ֆրանսիան⁶⁰: «Հայաստանի Եվրոպական կուսակցությունը» վերջին շրջանում հետևողականորեն ցուցաբերել է բարձր ներգրավվածություն Հայաստանի՝ Եվրամիության հետ ինտեգրման խթանման ուղղությամբ, պաշտպանել է ԵՄ անդամակցության գաղափարը և

59 Հայաստանի հանրային հեռուստատեսություն (1lurer.am), «Ստորագրահավաքն ավարտվել է. «Եվրոպակ»-ի շտաբը հայրաքաղաքում է տարածել», 25 հոկտեմբերի 2024 թ.՝ <https://www.1lurer.am/en/2024/10/25/Collection-of-signatures-is-over-Eurovote-headquarters-issued-statement/1209945>

60 «Ինքնիշխան Հայաստան» կուսակցություն, Ֆեյսբուքյան էջ, առանց ամսաթվի՝ <https://www.facebook.com/IHparty/>

լավատեսություն է հայտնել ՆԱՏՕ-ի հետ հնարավոր ինտեգրման հեռանկարների վերաբերյալ⁶¹:

Կուսակցությունների երկրորդ խմբավորումը պահպանում է առավել ռուսամետ մոտեցում՝ դա սովորաբար հիմնավորելով անվտանգության նկատառումներով: Ծրագրային մակարդակում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) արտաքին քաղաքականությունը ձևակերպում է համեմատաբար սահմանափակ նպատակների շրջանակում՝ հարևան պետությունների հետ կայուն հարաբերությունների պահպանում, միջազգային հանրությանը «բնական» ինտեգրում և փոխշահավետ քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի զարգացում: Գործնականում կուսակցության անվտանգային դիրքավորման առանցքային հենասյունը մնում է ՀԱՊԿ-ի նկատմամբ խիստ ընդգծված շեշտադրումը՝ որպես հավաքական պաշտպանության կենտրոնական մեխանիզմ, որը, կուսակցության ընկալմամբ, պետք է հավասարակշռի Ադրբեյջանի կոնվենցիոնալ ռազմական առավելությունը: Այս ուղղվածությունը լրացուցիչ ամրապնդվում է ՀՀԿ հանրային հաղորդագրություններով, որտեղ Ռուսաստանը ներկայացվում է որպես Հայաստանի անվտանգության գլխավոր ապահովողը՝ ներառյալ 2023 թվականին նախկին նախագահ Սերժ Սարգսյանի լայնորեն տարածված հայտարարությունը, ըստ որի Հայաստանը Ռուսաստանից «ավելի լավ դաշնակից» չունի⁶²: Կուսակցությունը քննադատել է արևմտամետ նախաձեռնությունները՝ այդ թվում վերջին շրջանում առաջ քաշված TRIPP-ի մեկնարկը և Հայաստան-ԵՄ նոր գործընկերության շրջանակի ստորագրումը՝ դրանք դիտարկելով որպես Հայաստանի անվտանգության կարիքների հետ տեսականորեն անհամատեղելի քայլեր, և փոխարենը նախընտրել է սահմանափակ ներգրավվածություն, օրինակ՝ Եվրոպական ժողովրդական կուսակցությունում իր դիտորդի կարգավիճակի նման մեխանիզմների միջոցով: TRIPP-ի գործարքի ստորագրումից հետո

61 Հայաստանի եվրոպական կուսակցություն, Ֆեյսբուքյան էջ, առանց ամսաթվի՝ <https://www.facebook.com/armeuropeparty/>

62 Caucasus Watch, «Սերժ Սարգսյան. Հայաստանը Ռուսաստանից ավելի լավ դաշնակից չունի», առանց ամսաթվի՝ <https://caucasuswatch.de/en/news/serzh-sargsyan-armenia-has-no-better-ally-than-russia.html>

ՀՀ փոխնախագահ Արմեն Աշոտյանը քննադատել է փաստաթուղթը՝ այն բնորոշելով որպես պանթո-րքիստական քայլ, որը սահմանափակում է Հայաստանի ինքնիշխանությունը⁶³:

«Հայաստան» դաշինքը (որն առաջնորդում է նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ներառում է նաև ՀՅԴ-ին) նույնպես Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունը ներկայացնում է որպես հիմնարար առանցք՝ զգուշացնելով, որ ռուսաստանամետ կառույցներից հապճեպ, «կտրուկ դուրս գալը» շարունակական արտաքին ճնշումների պայմաններում կարող է թուլացնել Հայաստանի անվտանգությունը: Դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարյանը բազմիցս կոչ է արել Հայաստանի և Ռուսաստանի Դաշնության միջև ապահովել «լիարժեք ինտեգրում»՝ շեշտելով, որ տարածաշրջանային սպառնալիքների՝ Թուրքիայից և Ադրբեջանից բխող ռիսկերի ֆոնին Մոսկվան շարունակում է մնալ Երևանի անվտանգության հիմնական երաշխավորը⁶⁴: Դաշինքը քննադատել է կառավարության վերջին շրջանի արտաքին քաղաքականությունը և զգուշացրել, որ տարածաշրջանից Ռուսաստանի հեռանալը կարող է վտանգել Հայաստանի ինքնիշխանությունը, օրինակ՝ նվազեցնելով ՀԱՊԿ-ի ազդեցությունը և թուլացնելով հնարավոր ազդեցության նկատմամբ պաշտպանական կարողությունները⁶⁵: Այսպիսով «Հայաստան» դաշինքը ինքն իրեն ներկայացնում է որպես այնպիսի արտաքին քաղաքական վեկտորին հավատարիմ ուժ, որի կենտրոնում Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությունն է, այլ ոչ թե արևմտյան ինստիտուտների հետ ներդաշնակեցումը կամ մոտարկումը:

63 Facebook, «Տեսալույս/Reel» <https://www.facebook.com/reel/909520868131441>
64 OC Media, «Քոչարյանը պնդում է, որ Լեռնային Ղարաբաղի կորուստը պայմանավորված էր Հայաստանի՝ Ռուսաստանին «դավաճանելով», առանց ամսաթվի՝ <https://oc-media.org/kocharyan-insists-loss-of-nagorno-karabakh-was-due-to-armenias-betrayal-of-russia/>
65 OC Media, «Հայաստանի նախկին նախագահ Քոչարյանն ասում է, որ Հայաստանը պետք է խուսափի ԵՄ-ից, եթե ցանկանում է պահպանել ինքնիշխանությունը», առանց ամսաթվի, <https://oc-media.org/armenias-ex-president-kocharyan-says-armenia-must-avoid-the-eu-if-it-wants-sovereignty/>

«Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, այն ժամանակաշրջաններում, երբ ակտիվ մասնակցություն է ունեցել խորհրդարանական և համայնքային քաղաքական կյանքին, նույնպես հակված է եղել համադրելու պահպանողական աշխարհայացքը և գործարարամետ ուղե-րձները ու աջակցել է Ռուսաստանի հետ սերտ հարաբերությունների պահպանմանը, ինչպես նաև ռուսաստանամետ տնտեսական ու անվտանգային ձևաչափերին մասնակցու-թյունը: Գագիկ Ծառուկյանի ղեկավարությամբ կուսակցությունը հետևողականորեն առաջ է մղել պրոռուսական արտաքին քաղաքական ուղղվածություն՝ պնդելով, որ Մոսկվայի հետ սերտ կապերը և ռուսական առաջնորդությամբ կառույցներին անդամակցությունը կենսական նշանակություն ունեն Հայաստանի անվտանգու-թյան և կայունության համար⁶⁶: Կուսակցությունը միավորում է տնտեսական լիբերալիզմը (շուկայ-ական քաղաքականության գերակայություն) պահպանողական դիրքավորումների («ավանդական արժեքներ») և ընդհանուր առմամբ պրոռուսական արտաքին քաղաքական գծի ու եվրոսկեպտիցիզմի հետ՝ միաժամանակ պաշտպանելով ազգային ինքնիշխանությունը հարգող մոտեցմամբ ԵՄ-ի հետ առևտրային հարաբերությունների պահպանումը⁶⁷: Ներկայումս Գագիկ Ծառուկյանը նախաձեռնել է «Առաջարկ Հայաստանին» շարժումը, որը, հավանաբար, առաջիկա խորհրդարանական ընտրություններին ընդառաջ կվերափոխվի այս ընդդիմադիր քաղաքական ուժի ծրագրի⁶⁸:

Երրորդ ուղղվածությունը, որը հաճախ բնորոշվում է որպես «բազմավեկտոր» կամ «հավասարակշռված», առկա է թե՛ որպես հստակ ձևակերպված քաղաքական դիրքորոշում, թե՛ որպես

66 Caucasus Watch, ««Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջնորդը հանդես է գալիս Հայաստան-Ռուսաստան կապերի ամրապնդման օգտին», առանց ամսաթվի՝ <https://caucasuswatch.de/en/news/prosperous-armenia-leader-advocates-for-strengthened-armenia-russia-ties.html>
67 «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն, պաշտոնական կայք, առանց ամսաթվի՝ <https://www.bhk.am/en>
68 «2026-ը պետք է լինի այն տարին, երբ մենք կհաղթահարենք դա. Գագիկ Ծառուկյան»: Tsarukyan Foundation. 15 հունվարի 2026 թ.՝ <https://tsarukyanfound.am/eng/news/684/2026-must-be-the-year-we-overcome-it-gagik-tsarukyan.html>

պրագմատիկ անհրաժեշտություն: «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը պատմականորեն իր արտաքին քաղաքականությունը նկարագրել է որպես բազմակողմանի և դիվերսիֆիկացման վրա հիմնված՝ ընդգծելով միաժամանակ մի քանի գլոբալ և տարածաշրջանային դերակատարների հետ համագործակցությունը և շեշտադրելով դիվանագիտական լայն ընդգրկումը՝ անվտանգության նկատառումներին համահունչ: Կուսակցության ծրագրի համաձայն⁶⁹ Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է հիմնված լինի բազմավեկտոր ռազմավարության վրա, որի նպատակն է հավասարակշռել հարաբերությունները խոշոր գլոբալ և տարածաշրջանային դերակատարների միջև: Ծրագրում մասնավորապես ընդգծվում է Մերձավոր Արևելքում դիվանագիտական և արտաքին քաղաքական գործիքների ակտիվացումը՝ մատնանշելով Հայաստանի տարածաշրջանային ներգրավվածությունն ընդ-այնելու մտադրությունը անմիջական հարևանությունից անդին: Քաղաքականության առանցքային հենասյուններից մեկը Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական և դաշնակցային հարաբերությունների «պարզաբանումն» ու հետագա զարգացումն է, ինչն արտացոլում է Ռուսաստանի շարունակական կարևորությունը Հայաստանի անվտանգային և աշխարհաքաղաքական հաշվարկներում: Դրան զուգահեռ ծրագիրը կոչ է անում խորացնել հարաբերությունները Եվրամիության հետ՝ համապարփակ գործընկերության հստակեցման և ընդլայնման միջոցով՝ հատուկ ընդգծելով Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ/CEPA) իրականացումը՝ ըստ համաձայնեցված ճանապարհային քարտեզի: Սա առավելապես մատնանշում է ինստիտուցիոնալ և աստիճանական զարգացման մոտեցում, այլ ոչ թե արագ ինտեգրման ուղի: Չնայած Եվրոպական քաղաքական ցանցերի հետ պաշտոնական կապերին՝ մասնավորապես Եվրոպայի լիբերալների և դեմոկրատների պլա-նսին (ALDE) անդամակցությանը, «Լուսավոր

69 «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, «Լուսավոր Հայաստան» կուսակցության քաղաքական ծրագիր, PDF, առանց ամսաթվի՝ <https://www.brightarmenia.am/gallery/files/2487%20BRIGHT%20AR-MENIA%20PARTY%20POLITICAL%20PROGRAM.pdf>

Հայաստան»-ը վերջին շրջանում որդեգրել է ավելի թերահավատ դիրքորոշում ԵՄ-ի հետ խորացված համագործակցության նկատմամբ: Կուսակցությունը ԵՄ անդամակցության օրակարգին առնչվող ստորագրահավաք նախաձեռնությունները բնորոշել է որպես Հայաստանի «ուկրաինացում»՝ մատնանշելով աշխարհաքաղաքական ապակայունացման և արտաքին ճնշումների վերաբերյալ իր մտահոգությունները⁷⁰: Վերջապես, կարևոր է նշել, որ «Լուսավոր Հայաստան»-ը ներկայումս չունի քաղաքական ներկայացվածություն որևէ մակարդակում. կուսակցությունը մանդատներ չունի Ազգային ժողովում և ներկայացված չէ որևէ քաղաքային ավագանու կազմում: Սա սահմանափակում է նրա անմիջական ազդեցությունը արտաքին քաղաքական որոշումների կայացման վրա՝ կուսակցության տեսակետները հիմնականում տեղավորելով քաղաքական բանավեճի դաշտում, այլ ոչ թե քաղաքականության մշակման և իրականացման մակարդակում:

Հայ ազգային կոնգրեսի արտաքին քաղաքական ծրագրում առաջ է քաշվում հավասարակշռված, բազմավեկտոր դիվանագիտական մոտեցում՝ որպես հիմնական ռազմավարական սկզբունք՝ ընդգծելով համագործակցությունը թե՛ Ռուսաստանի, թե՛ Եվրոպայի հետ: Ծրագիրը որպես արտաքին քաղաքական նպատակ սահմանում է տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում կայուն խաղաղության և տնտեսական համագործակցության խթանումը: Այս մոտեցման առանցքում ազգային շահերի վրա հիմնված կառուցողական դիվանագիտության վերականգնումն է: Կուսակցությունը շեշտում է բոլոր պետությունների հետ բարեկամական հարաբերությունների և փոխշահավետ համագործակցության վարումը՝ պահպանելով «բոլոր ուղղություններով» ներգրավվածությունը ի հակադրություն մեկ աշխարհաքաղաքական բլոկի հետ միակողմանի համադրման⁷¹: Թեև ՀԱԿ-ի պաշտոնական արտաքին քաղաքական ծրագիրը շարունակաբար շեշտադրում

70 CivilNet, «Անհրաժեշտ է անել ամեն ինչ, որպեսզի Հայաստանը չդառնա երկրորդ Ուկրաինա — Էդմոն Մարտիչյան»:
71 Հայ ազգային կոնգրես, «Ծրագիր», առանց ամսաթվի՝ <https://anc.am/about/program/>

է հավասարակշռությունը, բազմավեկտոր դիվանագիտությունը և համագործակցությունը թե՛ Ռուսաստանի, թե՛ Արևմուտքի հետ, վերջին շրջանում կուսակցության ղեկավարության հանրային քայլերն ու հռետորաբանությունը կարող են մատնանշել որոշ փոփոխություններ և գործնական քաղաքական ուղղվածության հնարավոր վերափոխում ազդարարել: Դրա նկատելի ցուցիչներից մեկը կուսակցության առանցքային դերակատար Լևոն Զուրաբյանի հրապարակային արձագանքն էր ԵՄ բարձր հանձնակատար Կայա Կալասի վերջին հայտարարությանը⁷²: Քաղաքական խոսքի այսպիսի փոփոխությունը կարող է արտացոլել ՀԱԿ ղեկավարության ներսում աճող թերահավատությունը՝ Հարավային Կովկասում Արևմուտքի քաղաքական և անվտանգային հանձնառությունների իրագործելիության կամ անկեղծության հարցում, հատկապես 2020 թվականից հետո ձևավորված տարածաշրջանային միջավայրում: Մինևույն ժամանակ վերջին շրջանում առանձնակի նշանակություն են ստացել Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումները Հայաստանում Ռուսաստանի դեսպանի հետ⁷³: Թեև ֆորմալ առումով նման հանդիպումները կարող են մեկնաբանվել որպես սովորական դիվանագիտական շփումներ, ներկայիս աշխարհաքաղաքական համատեքստում դրանք դիտարկվում են նաև որպես քաղաքական ազդակներ, առավել ևս՝ երբ դրանք ուղեկցվում են հարակից հարթակներում ՀԱԿ-ի որոշ ներկայացուցիչների Ռուսաստանի նկատմամբ հռետորաբանության ընդհանուր մեղմացմամբ:

Հավասարակշռված արտաքին քաղաքական մոտեցումը նկատելի է նաև «Ապրելու երկիր» կուսակցության դիրքորոշումներում: Կուսակցության արտաքին քաղաքական տեսլականը բազմավեկտոր և համապարփակ քաղաքականությունն է, որը Հայաստանին հնարավորություն կտա տնտեսական, անվտանգային, դիվանագիտական և մշակութային հարթություններում արդյունավետորեն

դիմակայել վերաբնակային և տարածաշրջանային մարտահրավերներին: Միաժամանակ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տարածաշրջանային իրողությունները՝ կուսակցությունը պաշտպանում է ԵԱՏՄ-ի հետ պրագմատիկ և ոչ ագրեսիվ քաղաքականությունը՝ նպատակ ունենալով խուսափել կտրուկ սոցիալ-տնտեսական ցնցումներից (ներմուծման-արտահանման սահմանափակումներ, երկկողմ աշխատանքային միգրացիա, երկարաժամկետ կայուն գործարար կապեր) և պահպանել տնտեսական հնարավորությունների իրացումը՝ ի շահ Հայաստանի քաղաքացիների և երկրի պետական շահերի: Կուսակցությունը դեմ է քաղաքական և տնտեսական սահմանափակումների պարտադրմանը այն դեպքում, երբ դրանք կարող են տեղի ունենալ ի հաշիվ գործող ու նոր գործընկերությունների զարգացման ներուժի, այդ թվում՝ բարձրացնելով մեկ աշխարհաքաղաքական կենտրոնից միակողմանի կախվածությանը դիսկր (օրինակ՝ առևտրի, ֆինանսների, ստանդարտների բարելավման և իրավական համագործակցության ոլորտներում): Կուսակցությունը համոզված է, որ Ռուսաստանի Դաշնության հետ դիվանագիտական հարաբերությունները կարիք ունեն խորքային վերանայման: Նրանց գնահատմամբ՝ այդ հարաբերությունների նախորդ փորձը, հատկապես վերջին հինգ տարիների դրսևորումները և դրանցից բխած գործողությունները և/կամ անգործությունը (ներառյալ՝ Արցախի պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների համատեքստում), չեն համապատասխանել ռազմավարական գործընկերության մշտապես հայտարարվող չափանիշներին: Հետևաբար, Ռուսաստանի Դաշնության հետ ապագա հարաբերություններն ու համագործակցությունը չեն կարող և չպետք է կառուցվեն նախկին տրամաբանությամբ: Դրանք պետք է ձևավորվեն պրագմատիկ, ճշգրիտ դիվանագիտական և տնտեսական հաշվարկների ու կառուցողական մոտեցումների հիման վրա՝ որևէ դեպքում չդարձնելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու պետական շահերը քննարկման առարկա, ինչպես նաև խուսափելով պատրանքային և անիրատեսական ակնկալիքներից⁷⁴:

72 Panorama.am, «Ընդդիմություն/Փաշինյան/ընդդիմություններ», 16 դեկտեմբերի 2025 թ.՝ <https://www.panorama.am/en/news/2025/12/16/opposition-Pashinyan-elections/3147624>

73 Լևոն Տեր-Պետրոսյան, պաշտոնական Ֆեյսբուքյան էջ, առանց ամսաթվի, <https://www.facebook.com/TerPetrosyanLevon>

74 Տեղեկատվությունը վերցված է կուսակցության կողմից լրացված հարցաշարից:

«Մեր ձևով» շարժման ղեկավար Նարեկ Կարապետյանը ևս վերջերս ներկայացրել է շարժման տարածաշրջանային դիրքավորումն ու արտաքին քաղաքական մոտեցումները⁷⁵: Կարապետյանի ձևակերպմամբ՝ շարժումը հակված է մրցունակ ու ճկուն արտաքին քաղաքական տեսլականի, որը կարևորություն է տալիս ԱՄՆ-ի հետ հարաբերությունների լավարկմանը՝ ողջունելով նաև TRIPP նախաձեռնության ստորագրումը: Միաժամանակ, նա այդ համագործակցությունը հիմնականում հիմնավորում է տնտեսական և կառավարման տրամաբանությամբ՝ զերծ մնալով ԱՄՆ-ի հետ բացահայտ անվտանգային, քաղաքական կամ աշխարհաքաղաքական շեշտադրումներից: Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների մասով Կարապետյանը նշել է, որ Հայաստանի ապագա ցանկացած ղեկավարություն պետք է ձգտի վերականգնել կապերը տարածաշրջանային դաշնակիցների հետ՝ միաժամանակ արձագանքելով հասարակության կուտակված կասկածներին՝ Ռուսաստանի առաջնորդությամբ գործող ՀԱՊԿ-ի անարդյունավետության վերաբերյալ, որոնք սրվել են 2022 թվականի սեպտեմբերին Ջերմուկի հատվածում տեղի ունեցած անվտանգային միջադեպերից հետո: Կարապետյանի խոսքով՝ «բանակցությունների միջոցով ՀԱՊԿ անդամ պետությունները պետք է մեր հարևանին ցույց տան, որ անեքսիան՝ հատկապես ՀԱՊԿ անդամ պետության տարածքի նկատմամբ, անընդունելի է: Միայն այդ դեպքում հայկական հասարակությունը ՀԱՊԿ-ը կընդունի որպես դաշնակից»⁷⁶:

Հայկ մարտությանի ղեկավարած նորաստեղծ «Նոր ուժ» կուսակցությունը ևս առանձնահատուկ կարևորություն է տալիս արտաքին քաղաքական հարաբերությունների ռազմավարական զարգացմանը՝ ընդգծելով Հայաստանի անմիջական հարևանների և բարեկամ երկրների՝ Վրաստանի և Իրանի հետ կապերի խորացումը, ինչպես նաև հնարավոր բոլոր ուղղություններով և մակար-

դակներում Եվրամիության և Եվրոպական երկրների հետ ինտեգրացիոն ծրագրերի ընդլայնումն ու խորացումը: Միաժամանակ, կուսակցությունը կարևորում է Ռուսաստանի Դաշնության հետ բարեկամական հարաբերությունների պահպանումը, ԱՄՆ-ի, Հնդկաստանի, Չինաստանի և արաբական աշխարհի բարեկամ երկրների հետ սերտ քաղաքական, տնտեսական ու մշակութային կապերի ամրապնդումը, տարբեր տարածաշրջաններում նոր կապերի ձևավորումն ու ուժեղացումը, ինչպես նաև Ադրբեջանի և Թուրքիայի հետ արժանապատիվ երկխոսության վերականգնումը՝ հարաբերությունների կարգավորման և խաղաղ համակցության օրակարգով⁷⁷:

«Միասնության թևեր» շարժման ղեկավար Արման Թաթոյանը վերջերս ներկայացրել է իր քաղաքական ուժի մոտեցումները Հարավային Կովկասում դիվանագիտական նախաձեռնությունների վերաբերյալ՝ դրանք բնութագրելով որպես պրագմատիկ: Նրա գնահատմամբ՝ Օգոստոսի 8-ի համաձայնությունների շրջանակը և դրա հետ կապված՝ ԱՄՆ աջակցությամբ առաջ մղվող ջանքերը, որոշակիորեն նվազեցրել են հետագա տարածաշրջանային էսկալացիայի անմիջական դիսկր, մասնավորապես՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի Սյունիքի մարզի նկատմամբ վերահսկողություն հաստատելու հավանականությունը: Թեև սա ներկայացվում է որպես մասնակի հաջողություն, Թաթոյանը շեշտում է, որ այս լուծումը ձեռք է բերվել արդեն գոյություն ունեցող հայկական տարածքի օկուպացիայի չլուծված մնալու գնով, ինչը, նրա կարծիքով, խաթարում է համաձայնության լեգիտիմությունը⁷⁸:

Եզրափակելով այս բաժինը՝ հարկ է նշել, որ անգամ Եվրոպական քաղաքական ընտանիքի հետ կապ ունեցող կամ լիբերալ բրենդավորում ունեցող կուսակցությունների շրջանակում հետպատերազմյան

77 Aravot.am, «Հայկ մարտությանի հիմնադրել է «Նոր ուժ» կուսակցությունը», 1 մայիսի 2024 թ.՝ <https://www.aravot.am/2024/05/01/1416193/>

78 Arman Tatoyan, «Թրամփ, թույլ մի քվեք Ադրբեջանին օկուպացնել Հայաստանի որոշ հարվածներ», The Washington Times, 28 դեկտեմբերի 2025 թ.՝ <https://www.washingtontimes.com/news/2025/dec/28/trump-let-azerbaijan-occupy-parts-armenia/>

(2020-ից հետո) անվտանգային միջավայրը ձևավորել է զգուշավոր հոետորաբանություն ԵՄ-ին առնչվող նախաձեռնությունների նկատմամբ: Սա արտացոլում է էսկալացիայի ռիսկերի և արտաքին, մասնավորապես արևմտյան, անվտանգության երաշխիքների վստահելիության վերաբերյալ մտահոգությունները: Այս միտումը վկայում է նաև ավելի լայն օրինաչափության մասին. կուսակցությունները կարող են սկզբունքորեն աջակցել ԵՄ-ի հետ ավելի սերտ համագործակցությունը, սակայն միաժամանակ դրանք անվտանգության իրողությունները դիտարկում են որպես այն հիմնական սահմանափակող գործոնը, որը պայմանավորում է գործընթացի տեմպը, գործողությունների հաջողականությունը և «կարմիր գծերը»:

Վերջին շրջանի դիվանագիտական զարգացումները հավելյալ բարդացրել են կուսակցությունների արտաքին քաղաքական դիրքավորումները՝ ի հայտ բերելով նոր «փորձաքարեր»: 2026 թվականի հունվարին հրապարակված՝ **TRIPP-ի**⁷⁹ իրականացման Հայաստան-ԱՄՆ շրջանակը արտաքին քաղաքական քննարկումների համար ձևավորել է նոր առանցք՝ կապակցվածության (connectivity), ինքնիշխանության և անվտանգային դեֆեսկալացիայի ու տարածաշրջանային տրանզիտների մասին պայմանավորվածությունների և առկա փոխզիջումների շուրջ: Քաղաքական որոշ դերակատարներ այս նախաձեռնությունը ողջունել են որպես տնտեսական և աշխարհաքաղաքական դիվերսիֆիկացման հնարավորություն, մինչդեռ մյուսներն այն ներկայացրել են որպես ռազմավարական առումով ռիսկային կամ ոչ ամբողջական լուծում, քանի դեռ տարածքային օկուպացիայի և անվտանգության երաշխիքների հարցերը մնում են չլուծված: Այս իմաստով TRIPP-ին առնչվող բանավեճը լրացուցիչ ամրապնդում է սույն հետազոտության առանցքային եզրահանգումներից

մեկը. Հայաստանում արտաքին քաղաքական դիրքավորումն այլևս միայն «ԵՄ-ն ընդդեմ Ռուսաստանի» երկբևեռ տրամաբանությամբ չի սահմանափակվում, այլ գնալով առավել վերածվում է ինքնիշխանության գործնական գործիքների շուրջ քննարկման՝ ներառյալ կապակցվածությունը, անվտանգային գործընկերությունները և արտաքին հանձնառությունների վստահելիությունը:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի կուսակցական դաշտում առկա է նկատելի աշխարհաքաղաքական բաժանում, սակայն այն առավել ճիշտ է ընկալել որպես սահմանափակումներով ձևավորված դաշտ, այլ ոչ թե որպես բաժանում երկու հստակ և ներքուստ միասեռ ճամբարների: Պրոտարևմտյան ուժերը առաջնահերթություն են տալիս ԵՄ ինտեգրմանն ու կառավարման բարեփոխումներին, պրոռուսական ուժերը՝ անվտանգային կախվածությանը և ռազմավարական կայունությանը, իսկ բազմավեկտոր մոտեցում որդեգրած ուժերը փորձում են համատեղել պետության արդիականացման նպատակները կտրուկ աշխարհաքաղաքական խզման ռիսկերի կառավարման հետ: Այս գործընթացում որոշիչ հանգամանքն այն է, որ այս դիրքորոշումները հաճախ հաղորդակցվում են քաղաքական ազդակների, ինչպես նաև արագ փոփոխվող դիվանագիտական իրադարձություններին տրվող արձագանքների միջոցով: Հետևաբար կուսակցությունների ուղղվածությունը պետք է գնահատել ոչ միայն ծրագրային փաստաթղթերով, այլև նրանց վարքագծով, կազմած դաշինքներով և այն նարատիվներով, որոնք նրանք որդեգրում են այն իրավիճակներում, երբ քննարկման կենտրոնում են անվտանգությունն ու ինքնիշխանությունը:

Ծրագրային զարգացման հիմնական մարտահրավերները

Ծրագրային զարգացումը, այսինքն՝ քաղաքական կուսակցությունների կարողությունը հստակ ձևակերպելու համահունչ քաղաքական առաջնահերթություններ, դրանք վերածելու վստահելի բարեփոխումների օրակարգերի և հետևողականորեն հաղորդակցելու ընտրողներին, շարունակում է մնալ Հայաստանի կուսակցական համակարգի

79 ԱՄՆ Պետքարտի միջազգային խաղաղության և բարօրության երթուղու (TRIPP) իրականացման ԱՄՆ-Հայաստանի շրջանակի հրապարակման վերաբերյալ, հունվար 2026, <https://www.state.gov/releases/office-of-the-spokesperson/2026/01/joint-statement-on-the-publication-of-the-u-s-armenia-implementation-framework-for-the-trump-route-for-international-peace-and-prosperity-tripp>

առավել քրոնիկ և խորքային թուլություններից մեկը: Խորհրդարանական կառավարման պայմաններում, որտեղ կուսակցություններից ակնկալվում է մրցակցել ոչ միայն ձայների, այլև կառավարման լեգիտիմության համար, հստակ բարեփոխումների օրակարգը պարզապես ընտրական գործիք չէ. այն մեխանիզմ է, որի միջոցով կուսակցությունները ցույց են տալիս իրենց կարողունակությունը, հաշվետվողականությունը և քաղաքական նպատակադրումների լրջությունը: Իդեալական պայմաններում բարեփոխումների առաջնահերթությունները պետք է ներկայացվեն հասանելի և ընթացիկ կուսակցական մանիֆեստներում ու պարբերաբար թարմացվող քաղաքական փաստաթղթերում՝ ուղեկցվելով իրականացման քայլերով, փուլայնությամբ (sequencing) և, հնարավորության դեպքում, չափելի ցուցիչներով: Ժամանակակից քաղաքական պրակտիկայում սա առնվազն ենթադրում է գործունակ պաշտոնական կայքերի և հանրության համար հասանելի ծրագրային նյութերի առկայություն, որոնք ընտրողներին, մեդիային և քաղաքացիական հասարակությանը հնարավորություն կտան գնահատելու՝ արդյոք կուսակցությունների ներկայացրած հավակնությունները կոնկրետ են, իրատեսական և ներքին առումով իրագործելի:

Հայաստանի քաղաքական դաշտի զգալի հատվածում այս ակնկալիքները բավարարվում են միայն մասնակիորեն: Շատ կուսակցություններ չունեն գործող կայքեր, իսկ նույնիսկ այն կուսակցությունների պարագայում, որոնք նման կայքեր ունեն, համապարփակ բարեփոխումների ծրագրերը հաճախ բացակայում են, հնացած են կամ ձևակերպված են ընդհանուր, նպատակադրումների լեզվով՝ ոչ թե որպես գործնականում իրագործելի քաղաքական ճանապարհային քարտեզներ: Արդյունքում ձևավորվում է տեղեկատվական միջավայր, որտեղ կուսակցությունները հիմնականում մրցակցում են անհատականություններով, կարգախոսներով և իրադարձություններին, հատկապես անվտանգային և արտաքին քաղաքական ցնցումներին արձագանքներով, այլ ոչ թե կայուն ու ծրագրահեն քաղաքական մրցակցությամբ: Սրա հետևանքով առաջանում է կառուցվածքային անհավասարակշռություն.

ընտրական մոբիլիզացիան հաճախ ավելի ուժեղ է, քան քաղաքականությունների բովանդակային ձևակերպումը, իսկ քաղաքական լեգիտիմությունը ավելի հաճախ ներկայացվում է ազգային ինքնության կամ ճգնաժամային կառավարման նարատիվների միջոցով, քան մանրամասն և իրագործելի կառավարման առաջարկներով:

Այս խնդիրը տեսանելի է նույնիսկ խորհրդարանական դերակատարների պարագայում: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն իր ծրագրում անդրադառնում է մի շարք քաղաքական ոլորտների, սակայն ծրագրային փաստաթղթերը հաճախ մնում են ընդհանուր հանձնառությունների մակարդակում՝ հանրային տիրույթում սահմանափակ ներկայացմամբ այնպիսի կարևոր բաղադրիչների վերաբերյալ, ինչպիսիք են բարեփոխումների փուլայնությունը, ինստիտուցիոնալ պատասխանատվությունների բաշխումը և իրականացման ճանապարհային քարտեզները⁸⁰: Այս բացը էական նշանակություն ունի, քանի որ իշխող կուսակցության գործունեությունը պետք է գնահատվի ոչ միայն իր մտադրություններով, այլև արդյունքներով, իսկ ծրագրային ոչ հստակ ձևակերպումները դժվարացնում են առաջնահերթությունների նկատմամբ առաջընթացի օբյեկտիվ գնահատումը: Նմանատիպ իրավիճակ է նաև ընդդիմադիր կուսակցությունների պարագայում. դրանք սովորաբար ձևակերպում են լայն քաղաքական և հասարակական նպատակներ, սակայն ոչ միշտ են ներկայացնում հստակ գործնական ճանապարհային քարտեզ, որն արտաքին դիտորդներին հնարավորություն կտա հետևելու, թե ինչպես պետք է այդ նպատակները կյանքի կոչվեն գործնականում: Երկու դեպքում էլ քաղաքական ծրագրերի ընդհանուր ուղղվածության առկայությունը լիարժեք չի փոխարինում մանրամասն ծրագրային նախագծմանը, հատկապես այն ոլորտներում, որտեղ բարեփոխումները վերաբերում են բարդ համակարգային հարցերի՝ օրինակ, արդարադատությանը, հակակոռուպցիոն քաղաքականությանը, հանրային կառավարման և անվտանգության հարցերին:

80 «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն, «Ծրագիր», առանց ամսաթվի՝ <https://www.civilcontract.am/program>

Մեկ այլ առանձին խնդիր է նաև հնացած ծրագրային փաստաթղթերի պահպանվող հասանելիությունը: Օրինակ՝ ՀՀ-ի կայքում առկա ծրագրային նյութերի մի մասը վերաբերում է ավելի վաղ ժամանակահատվածների (այդ թվում՝ 2008 և 2013 թվականներին⁸¹), ինչի հետևանքով հանրության համար սահմանափակ է ընկալումը, թե ինչպիսին են տվյալ կուսակցության մոտեցումները ներկայիս բարեփոխումների առաջնահերթությունների, 2018 թվականից ի վեր քաղաքական արդյունքների կամ հետպատերազմյան (2020-ից հետո) անվտանգային և ինստիտուցիոնալ միջավայրում ռազմավարական վերադասավորման վերաբերյալ: Այս մասնավոր օրինակը պարզապես հաղորդակցային բաց չէ. քաղաքացիների ու հետազոտողների մոտ այն առավել ի ցույց է դնում է տվյալ կուսակցության կողմից ծրագրային արձագանքման ցածր մակարդակը և քաղաքականությունների նորացման թուլության ընկալումը, ինչը կարող է լրացուցիչ նվազեցնել կուսակցության հետագա վստահելիության մակարդակը՝ որպես բարեփոխումներին վերաբերելի հարցերում լուրջ դերակատարի:

Շատ այլ կուսակցությունների, հատկապես արտախորհրդարանական ուժերի կամ դաշինքների դաշտում գործող քաղաքական դերակատարների դեպքում, ծրագրային տեսանելիության սահմանափակվածությունը պայմանավորված է ավելի հիմնարար կազմակերպական խնդիրներով: Մի շարք կուսակցություններ կամ ընդհանրապես չունեն գործունակ կայքեր, կամ չեն հրապարակում կառուցվածքային և համակարգված ծրագրեր: Սա վերաբերում է, օրինակ, «Հանուն Հանրապետության», «Հանրապետություն» կուսակցություններին և մի շարք այլ քաղաքական ուժերի: Այն դեպքերում, երբ ծրագրային նյութերը հասանելի չեն, ընտրողները ստիպված են կուսակցության դիրքորոշումներին ծանոթանալ բաց աղբյուրներից՝ հարցազրույցներից, սոցիալական մեդիայի գրառումներից և նախընտրական հոեոտորաբանությունից: Սա թուլացնում է թափանցիկության մակարդակը և դժվարացնում համեմատական գնահատումը, հատկապես առաջին անգամ ընտրողների կամ

81 Հայաստանի Հանրապետական կուսակցություն, «Ընտրական ծրագիր», առանց ամսաթվի, <http://hhk.am/hy/election-program/>

այն քաղաքացիների համար, որոնք ցանկանում են փաստահեն հիմքերով ընտրություն կատարել:

Միևնույն ժամանակ, կան նաև բացառություններ, որոնք ցույց են տալիս թե՛ կազմակերպական կարողունակություն, թե՛ ծրագրերի ներկայացման այլ քաղաքական մշակույթ: «Լուսավոր Հայաստան»-ը⁸², օրինակ, ավանդաբար առցանց հարթակներում ներկայացրել է համեմատաբար մանրամասն քաղաքական փաստաթղթեր՝ հաճախ կառուցվածքային բաժանմամբ ըստ ոլորտների և ձևակերպված բարեփոխումների նպատակներով ու առաջարկվող միջոցառումներով՝ պաշտպանության և անվտանգության կառավարման, շրջակա միջավայրի քաղաքականության, առողջապահության և իրավապահ համակարգի ոլորտներում: Հայ ազգային կոնգրեսը⁸³ ևս հակված է առանձնացնելու կոնկրետ բարեփոխումների ուղղություններ՝ դրանք ձևակերպելով խնդիրների նկարագրությունների և քաղաքական նպատակների միջոցով, ինչը թույլ է տալիս առնվազն մասնակի գնահատել կուսակցության նպատակների հետ դրանց ներքին համահունչությունը ու առաջնահերթությունների տրամաբանությունը: Այս օրինակները ցույց են տալիս, որ ծրագրային զարգացումը Հայաստանի քաղաքական միջավայրում հնարավոր է, սակայն այն անհավասարաչափ է և հաճախ կախված է տվյալ կուսակցության կազմակերպական կարողություններից, քաղաքական փորձից և ղեկավարության հանձնառությունից՝ իրականացնելու մրցակցությունը այլ կուսակցությունների հետ քաղաքական բովանդակության հիման վրա:

Նոր և փոքր կուսակցությունները ցույց են տալիս ծրագրային ձևակերպումների աստիճանական բարելավման հնարավոր ուղին: Օրինակ, «Ապրելու երկիր»⁸⁴ կուսակցությունը փորձել է իր ծրագիրը կազմակերպել հիմնական քաղաքական

82 «Լուսավոր Հայաստան» կուսակցություն, «Լուսավոր Հայաստան» կուսակցության քաղաքական ծրագիր, PDF, առանց ամսաթվի՝ <https://www.brightarmenia.am/gallery/files/2487%20BRIGHT%20ARMENIA%20PARTY%20POLITICAL%20PROGRAM.pdf>

83 Հայ ազգային կոնգրես, «Ծրագիր», առանց ամսաթվի՝ <https://anc.am/about/program/>

84 «Երկիր ապրելու» կուսակցություն, «Ծրագրեր», առանց ամսաթվի՝ <https://www.apreluyerkir.am/hy/programms/31/>

ուղորտներով՝ տնտեսություն, առողջապահություն, անվտանգություն, կրթություն և արդարադատություն՝ դրանով ազդարարելով ավելի կառուցվածքային հիմքով մրցակցելու մտադրություն, նույնիսկ եթե բովանդակության զգալի մասը դեռևս զարգացման փուլում է, իսկ մշակվածության խորությունը տարբեր բաժիններում մնում է անհավասար:

Պետք է նշել, որ նոր ձևավորվող կուսակցությունների համար ծրագրային զարգացման գործընթացը սովորաբար կաշկանդվում է մարդկային ռեսուրսների սղությանը, թույլ տարածքային կառույցներով և բևեռացված քաղաքական միջավայրում շարունակական հաղորդակցման գործնական անհրաժեշտությամբ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանում կուսակցությունների ծրագրային զարգացման խնդիրները կարելի է ամփոփել երեք փոխկապակցված խնդիրների շրջանակում՝ **հասանելիություն, որոշակիություն և վստահելիություն**: Հասանելիությունը սահմանափակվում է քաղաքական կուսակցությունների կողմից գործունակ հանրության համար հասանելի հարթակների և փաստաթղթերի բացակայությամբ: Որոշակիությունը թուլանում է կուսակցությունների կողմից կիրառվող լայն և ընդհանուր քաղաքական լեզվի հետևանքով, իսկ վստահելիությունը նվազում է այն դեպքերում, երբ հիմնարար բարեփոխումների համար չեն ներկայացվում գործողությունների իրատեսական փուլայնություն և իրականացման հստակ ուղիներ: Այս բացերը նպաստում են այնպիսի քաղաքական մշակույթի վերարտադրմանը, որտեղ ընտրողները կուսակցություններին գնահատում են հիմնականում դրանց առաջնորդների հանրային կերպարների և ճգնաժամային իրավիճակներում արտահայտած կարծիքներով միջոցով, այլ ոչ թե դրանց քաղաքական հանձնառությունների հիման վրա: Միևնույն ժամանակ այս խնդիրները բարդացնում են նաև կուսակցությունների հաշվետվողականության չափումները, քանի որ առանց հստակ ծրագրային չափանիշների դժվար է գնահատել՝ արդյոք կուսակցություններն իրականացնում են այն, ինչ խոստանում են:

Եզրափակելով նշենք, որ թեև որոշ կուսակցություններ ներկայացնում են հստակ և համեմատաբար

մանրամասն բարեփոխումների ծրագրեր, քաղաքական դաշտի զգալի հատվածը շարունակում է բնութագրվել ոչ ամբողջական, հնացած կամ հանրության համար անհասանելի ծրագրերով: Սա երկրորդական կամ զուտ տեխնիկական խնդիր չէ. այն անմիջական ազդեցություն ունի ընտրողների տեղեկացվածության, հանրային վստահության և ժողովրդավարական մրցակցության որակի վրա: Հետևաբար ծրագրային կարողունակության բարձրացումը՝ ավելի որակյալ փաստաթղթավորման, հստակեցված քաղաքական պլանավորման, ավելի պարզ ու գործնական բարեփոխումների ճանապարհային քարտեզների և շարունակական քաղաքական հաղորդակցության միջոցով, կարող է կարևոր քայլ լինել դեպի ավելի հասուն և հաշվետու կուսակցական համակարգ, հատկապես խորհրդարանական ընտրությունների նախաշեմին:

Առկա մարտահրավերները և հիմնական եզրակացությունները

Սույն հետազոտության արդյունքները հանգեցնում են առանցքային եզրակացության. Հայաստանի քաղաքական համակարգը շարունակում է մնալ ժողովրդավարական, սակայն բովանդակային առումով խոցելի և կառուցվածքային սահմանափակվածությունով պայմանավորված: Սահմանադրական անցումը խորհրդարանական կառավարման մոդելի սկզբունքորեն միտված էր պետական իշխանության վերաբաշխմանը և կոլեգիալ կառավարման ինստիտուցիոնալացմանը: Սակայն գործնականում խորհրդարանում «կայուն մեծամասնության» կանոնների, ինստիտուցիոնալ առումով թույլ կուսակցական մշակույթի և ճգնաժամերով պայմանավորված որոշումների կայացման համադրությունը հանգեցրել է հակառակ արդյունքի: Իշխանությունը աստիճանաբար կենտրոնացել է գործադիրի և իշխող քաղաքական ղեկավարության շուրջ, մինչդեռ իշխանության ճյուղերի տարանջատումը գործնականում շարունակում է մնալ զգալիորեն խոցելի: Ազգային

Ժողովը շատ դեպքերում շարունակում է գործել հիմնականում որպես մեծամասնության իշխանության ծրագրերի իրացման հարթակ, այլ ոչ թե որպես վերահսկողություն և հաշվետվողականություն իրականացնող ինքնուրույն ինստիտուտ, իսկ ընդդիմության կարողությունը՝ ազդելու քաղաքական որոշումների կամ ինստիտուցիոնալ նշանակումների վրա, սահմանափակ է:

Վերջին տասնամյակի ընտրական բարեփոխումները բերել են շոշափելի առաջընթաց ընտրությունների տեխնիկական կազմակերպման ոլորտում և ներդաշնակեցվել են մի շարք միջազգային հանձնարարականների հետ՝ այդ թվում ապահովվել է ընթացակարգային ավելի մեծ հստակություն և դիտորդության իրականացման մեխանիզմների ամրապնդում: Այդուհանդերձ, ընտրական կարգավորումների հիմնական ճարտարապետությունը շարունակում է նպաստել գերիշխող դերակատարների դիրքերի ամրապնդմանը: Խորհրդարան անցնելու համար բարձր շեմերը, կայուն մեծամասնության ձևավորմանը նպաստող մեխանիզմները և արդյունավետ գաղափարական մրցակցության սահմանափակ հնարավորությունները նեղացնում են բովանդակային բազմակարծության հնարավորությունները: Երբ այս հանգամանքները գուցե օրոքվում են պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահության շարունակաբար ցածր մակարդակի հետ, ձևավորվում է մի շրջափուլ, որում ընտրություններն ապահովում են ժողովրդավարական լեգիտիմություն, սակայն ոչ միշտ են ամրապնդում ժողովրդավարական հաշվետվողականությունը կամ քաղաքացիների վստահությունը կառավարման նկատմամբ:

2018 թվականից հետո ձևավորված բարեփոխումների օրակարգը, որը սկզբնապես ներկայացվում էր իրավունքի գերակայության, հակակոռուպցիոն պայքարի և ինստիտուցիոնալ վերականգնման շուրջ հավակնոտ շեշտադրումներով, բերել է խառը արդյունքներ և արտաքին ցնցումների ու ներքին սահմանափակումների ճնշման ներքո աստիճանաբար դանդաղեցրել է իր ընթացքը: COVID-19-ի շրջանը և 2020 թվականի պատերազմը հիմնովին փոխեցին կառավարման առաջնահերթությունները՝ քաղաքական էներգիան

տեղափոխելով անվտանգության և ճգնաժամային արձագանքման դաշտ: Ինստիտուցիոնալ իներտությունը, վարչական սահմանափակ կարողությունները և խորքային քաղաքական բևեռացումը հավելյալ կերպով սահմանափակել են նոր բարեփոխումների իրականացումը: Դատական բարեփոխումները շարունակում են մնալ խնդրահարույց, իսկ հակակոռուպցիոն ջանքերը, թեև ինստիտուցիոնալ մակարդակում մեկնարկել են, շատ շահագրգիռ կողմերի և քաղաքացիների աչքում կորցրել են նախկին թափը: Բարեփոխումների նկատմամբ հոգնածությունը գնալով ավելի տեսանելի է թե՛ պետական կառույցներում, թե՛ հասարակության մեջ, և այդ հոգնածությունն ուժեղանում է այն ընկալմամբ, որ բարեփոխումները կամ իրականացվում են ընտրովի կերպով, կամ բավարար չափով մեկուսացված չեն քաղաքական շահերից: Դատական իշխանությունը շարունակում է մնալ հատկապես զգայուն ոլորտ. դրա նկատմամբ վստահության պակասը և քաղաքական ազդեցությունների նկատմամբ խոցելիությունը շարունակում են խաթարել ինստիտուցիոնալ և ժողովրդավարական ընդհանուր համակարգի նկատմամբ վստահությունը:

Այս համակարգային թուլությունները հստակ արտացոլվում են նաև Հայաստանի կուսակցական դաշտում: Թեև առկա չեն խոչընդոտներ կուսակցությունների գրանցման և ընտրական մասնակցության հարցերում, բազմաթիվ կուսակցություններ շարունակում են մնալ թույլ ինստիտուցիոնալացված և առաջնորդակենտրոն՝ սահմանափակ քաղաքական բովանդակությամբ, քաղաքական մշակույթի և երկխոսության մեխանիզմների ոչ բավարար ընկալմամբ, ինչպես նաև ընտրական փուլերից դուրս անհետևողական ներգրավվածությամբ: Հետազոտությունը բացահայտել է համահունչ գաղափարական դիրքորոշումների, նորացված և ընտրազանգվածների կողմից աջակցություն վայելող ծրագրերի, ինչպես նաև վստահելի բարեփոխումների ճանապարհային քարտեզների պակաս: Այս խնդիրը խորանում է նաև նրանով, որ բազմաթիվ կուսակցություններ չունեն իրենց քաղաքական հանձնառությունները հաղորդակցելու համար գործող հանրային հարթակներ կամ կայքեր: Արդյունքում սահմա-

նափակվում է ընտրողների բովանդակային ընտրության հնարավորությունը, քարոզարշավի փուլում խրախուսվում է անհատականություններով պայմանավորված մրցակցությունը, և բարդանում է հաշվետվողականության գնահատումը, քանի որ քաղաքացիներն ու դիտորդները հաճախ չունեն հստակ չափանիշներ կուսակցությունների գործունեության ու արդյունքների վերաբերյալ:

Միևնույն ժամանակ, հետազոտությունը ցույց է տալիս, որ Հայաստանի քաղաքական խոսույթը ենթարկվում է աստիճանական, բայց կարևոր փոխակերպման: Լեռնային Ղարաբաղի կորուստը և հետպատերազմյան միջավայրը նվազեցրել են հին ազգայնական նարատիվների քաղաքական գերակայությունը և դաշտ են բացել այլընտրանքային օրակարգերի համար, որոնք ավելի հստակ ձևակերպվում են կառավարման որակի, խաղաղության, տարածաշրջանային կապակցվածության, բարեփոխումների և սոցիալ-տնտեսական հիմնահարցերի շուրջ, հատկապես այն կուսակցությունների և շարժումների շրջանակում, որոնք իրենց մոտ են համարում պրոեվրոպական չափանիշներին և կարևորում են պետական համակարգի արդիականացումը: Սա ստեղծում է հնարավորությունների պատուհան. նպատակային ներգրավմամբ քաղաքական կուսակցությունները կարող են ամրապնդել իրենց ծրագրային կարողունակությունը, բարձրացնել քաղաքականության որակը և մշակել ավելի իրատեսական ու իրագործելի օրակարգեր: Կարողությունների զարգացման միջոցառումները, օրինակ՝ քաղաքականության մշակման, ռազմավարական պլանավորման, ընտրազանգվածի հետ աշխատանքի և թեմատիկ/ ոլորտային փորձագիտության վերաբերյալ վերապատրաստումները, կարող են նպաստել ավելի կայուն, ծրագրահեն ժողովրդավարական մրցակցության մոդելի ի հայտ գալուն: Կարևոր է, սակայն, որ նման աջակցությունը ձևավորվի մրցակցության որակը բարձրացնելու նպատակով, այլ ոչ թե որոշակի քաղաքական դերակատարների առավելություն տալու համար, և խթանի թափանցիկությունը, ներկուսակցական կառավարումը և ընտրողների հետ շարունակական հաղորդակցությունը:

Վերջապես, Հայաստանի ընթացող աշխարհաքաղաքական վերադիրքավորումը ազդում է նաև նրա ժողովրդավարական փոխակերպման վրա: Կառավարության ջանքերը՝ դիվերսիֆիկացնելու արտաքին գործընկերությունները, ընդլայնելու համագործակցությունը Եվրամիության և Միացյալ Նահանգների հետ և նվազեցնելու անվտանգային կախվածությունը Ռուսաստանից, բախվում են Ռուսաստանից շարունակական տնտեսական փոխկախվածությանը, չլուծված տարածաշրջանային անվտանգային խոցելիություններին (օրինակ՝ Թուրքիայի հետ փակ սահմաններ, Իրանի շուրջ միջազգային իրավիճակ և այլն), ինչպես նաև Կրեմլից եկող հիբրիդային միջամտության փորձերին: Այս գործոնները ձևավորում են ներքաղաքական բանավեճը, սահմանափակում բարեփոխումների հնարավոր այլընտրանքները և ուժեղացնում քաղաքական բևեռացումը, հատկապես այն դեպքերում, երբ արտաքին քաղաքական որոշումներն ընկալվում են որպես ինքնիշխանությանը, ազգային ինքնությանը և տարածաշրջանային խաղաղությանն անմիջականորեն առնչվող գործընթացներ: Հետևաբար, ներքին բարեփոխումները չեն կարող ընկալվել արտաքին միջավայրից կտրված. կառավարման ներքին մոդելները պարբերաբար անցնում են աշխարհաքաղաքական ռիսկերի հաշվարկների և միջազգային գործընկերների մրցակցող ակնկալիքների ֆիլտրով:

Եզրափակելով նշենք, որ Հայաստանը շարունակում է գտնվել իր ժողովրդավարացման գործընթացի երկարատև անցումային փուլում՝ կանգնած երկակի մարտահրավերի առջև. մի կողմից՝ ներքին մակարդակում ամրապնդել ժողովրդավարական ինստիտուտները, մյուս կողմից՝ կողմնորոշվել օր օրի ավելի բարդ և անբարենպաստ արտաքին ու տարածաշրջանային միջավայրում: Ժողովրդավարական կայուն առաջընթացը կախված կլինի ոչ միայն սահմանադրական ճարտարապետությունից և քաղաքական երկխոսության որակից, այլև ինստիտուցիոնալ վստահության վերականգնումից, զսպումների և հակակշիռների համակարգի ամրապնդումից, վստահելի բարեփոխումների օրակարգերի վերակենդանացումից և ավելի ծրագրահեն, թափանցիկ ու հաշվետու կուսակցական համա-

կարգի ձևավորումից: Առանց այս ուղղութ-
յուններով առաջընթացի արձանագրման, ֆորմալ
ժողովրդավարական կառուցվածքների և արդյու-
նավետ ժողովրդավարական կառավարման
միջև եղած բացը, հավանաբար, կպահպանվի՝
շարունակելով թուլացնել պետական համակարգի
դիմակայունությունը, խորացնել քաղաքական
բևեռացումը և սահմանափակել Հայաստանի
ժողովրդավարական զարգացման երկարաժամկետ
կայունությունը:

